





830

L II.5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ս Ս Գ Ւ Բ

Nº 7 1890

ЗАКЛЮЧЕНИЕ

1890 № 7

ԵՐԿՐՈՒԹ ՏԱՐԻ

	կրիս
1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ ԱԼԵՏՏԻՔ	935
2 ՄԱՆԻՎԼԵԱՆՑ ԼԵՒՈՆ	945
3 " " "	946
4 " " "	947
5 ՄԻՒԹԱՐԵԱՆՑ ԱՐՇԱԼՈՅՑ	948
6 ՄԱՐԻՍԻԱՆ, Մ.	949
7 ԱԶԴԱՄԹԻԼԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ	1001
8 Ա. Ք. , Ն. Ն.	1012
9 ԼՈՒՏԻՒՆԻ	1017
10 Լ.Յ	1026
11 Զ.	1037
12 ԽՄԲ.	1050


ՅԱՅՏՎԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

© 1991 by U

Ա. Դ. ԱՅՏԻԿԵՍՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Гіпографія М. Д. Ротніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1890



ՄՈՒԲՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7 1890

ՅՈՒԼԻՍ

1890 № 7

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏՈՎՆԵՍՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлісъ, 11 Іюля 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ՅՈՂԱՅԻՆ ԽՄԴԻՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ¹⁾

II

Մեր առաջին յօդւածում Անդրկովկասի հողացին խնդրի մասին մենք կանգ առանք հետևեալ կետերի վերայ.

Հողի (այսինքն հողի սեպհականութեան, հողի տիրապետութեան և հողից օգտաելու) մասին օրէնսդրութիւնները լուսաւորեալ երկիրներում կազմել են նոյն այդ երկիրների պատմական գարգացման համար մեծ էպօքներ:

Այդ հողատիրապանն օրէնսդրութիւնները արգասիք են եղած հասարակաց կարծիքի զօրեղ հոսանքների, որոնց նախապատրաստողն են եղել մամուլը, գրականութիւնը:

Անդրկովկասում, ուռաց տիրապետութեան օրերով, կատարւած են բազմաթիւ փոփոխութիւններ հողատիրութեան մէջ: Հողացին պայմանները կանոնաւորելու թէ միտքը և թէ ամբողջ քննադատական պրօցեսը կատարւել են բարձր կառավարչական շրջաններում:

Հողացին օրէնսդրական ակտերը մեզանում անցել են աննկատ, եղել են փոփոխական, առանց յարատեւութեան և ունեցել են յաճախ միայն քաղաքական բնաւորութիւն, որպէս այդ լինում է դեռ ևս սարու կուլտուրայի մէջ գտնւող նւաճւած երկիրներում, ուր քաղաքացիութիւնը դեռ ևս հաստատ արմատ չի բռնում:

Մենք յայտնեցինք, որ Անդրկովկասում, մասնաւորապէս Թրքահայկական նահանգներում մոցրած հողացին օրէնքները մի խառն արդիւնք են նախ թուրքական և հայկական նախկին կարգերի, ապա ուռասական հայեացքների հողի, կալւածատիրոջ և գիւղացիների

¹⁾) Յօդւած առաջին տիս «Մուրճ», 1889 թ. սեպտեմբեր. № 9.

մասին թէ 1861 թւականի ոռւսական հողալին բէֆօրմներից առաջ և թէ բէֆօրմներից յետոց և երրորդ՝ արևմտան-եւրոպական ազատիչ ագրարական բէֆօրմների ազգեցաթեան:

Ապա մենք յայտնեցինք, և թէ մեր Կովկասեան հողատիրութեան օրէնքները ոչ միայն յաճախ փոփոխւել են, այլ և ներկայումս նոքա վերաքննութեան առարկաց են կառավարչական շրջաններում, և յորդորեցինք մեր թէ հայ և թէ ոռւս մամուլին՝ սրտին մօտ առնել հողացին խնդիրը և պարզաբանելով դորա վերաբերեալ բոլոր հանգամանքները՝ աշխատել երկրի պահանջները զգացնել տալ բոլոր լնթերցող հասարակութեան՝ հասարակաց կարծիք կազմելուն պատասել:

Այս բոլորը մի անգամ հաստատելուց յետ, մենք անցանք Կովկասեան և մասնաւորապէս Թրքա-հայկական նահանգների հողատիրութեան ուսումնասիրաթեանը, կանգ առնելով առ այժմ միմիայն պետուական (գօտուզարսուեննիէ) կոչւած զիւղացիների հողատիրութեան վերայ. խոստանալով հետևեալ անգամների համար պարզել դոցա վերաբերեալ ցայժմ կառարւած բէֆօրմների էռթիւնը:

Այս մէկ բանը կրկնենք անցեալ յօդւածից, քանի որ այդ ամենահրաժեշտն է Կովկասեան հողատիրութեան ուսումնասիրութեան համար: «Անդրկովկասի նահանգները ամենից առաջ պէտք է, վարչական աեսակէտից, բաժանել երկուսի.—նահանգներ, ուր հողերը կառավարում են քաղաքացիական օրէնքներով, և նահանգներ, ուր հողերը գուրս են սովորական վարչութիւնների ձեռնհասութիւնից: Այս վերջիններին պատկանում են՝ Զաքաթալի, Գաղատանի, Կարսի ու Բաթումի շրջանները, որոնց նկատմամբ ընդհանուր հողատիրական օրէնքները զօրութիւն չ'ունին և գուրս են պետական հողերի մինիստրութեան ձեռնհասութիւնից: Այդ շրջաններում աիրում են բացառիկ օրէնքներ: Իսկ ուր մտած է կանոնաւորութիւն հողերի նկատմամբ և հողերը ենթարկւած են որոշ քաղաքացիական օրէնքների, դոքա են՝ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բաքուայ նահանգները:

«Այդ նահանգներում գոյութիւն ունին երեք տեսակ հողատիրութիւն: Երկրիս հողերի մի մ.ծ մասը պետութեան սեպհականու-

թիւն է, մի նմանապէս խոշոր մասը՝ ազնւական կալւածատէր դասկարգի սեպհականութիւն է, իսկ համեմատապէս մի փոքրիկ մասը՝ գիւղացիների սեպհականութիւն է:

«Համեմատ այդ երեք կարգի սեպհականութեան, գիւղացիները կենում են կամ պետական հողերի վերայ, կամ ազնւական կալւածատէրերի և կամ իրանց սեպհական հողերի վերայ:

«Այն գիւղացիները, որոնք կենում են պետական հողերի և կալւածատէրերի հողերի վերայ, ճանաչւած են որպէս պետական գիւղացիներ (գօսուղարատւեննիէ կրէսոյնանէ): Այդպէս է օրէնքով: Բայց անխոտիր կերպով նոքա այդ անունով չեն կոչում սովորական լեզում և նոյն իսկ գրականութեան ու պաշտօնական թղթերի մէջ: Պետական ընդունւած է անուանել միմիայն այն գիւղացիներին, որոնք կենում են պետական սեպհականութիւն համարւող հողերի վերայ, սովորական լեզում կոչում են կալւածատիրական գիւղացիներ (վաղէ՛լեսկիէ կրեսոյնանէ):

Բայց թէ ինչու նոքա, օրէնքի առջեւ, անխոտիր կերպով պետական գիւղացիներն են ճանաչւած, այդ մենք բացարեցինք նորանով, որ օրէնսդիրը, միևնոյն անունը տալով երկու կարգի գիւղացիներին՝ կամեցել է հասկացնել, որ թէ պետական հողերի և թէ կալւածատէր ազնւականների հողերի վերայ բնակւող գիւղացիները հաւասարապէս ազատ գիւղացիներ են և որ թէ դատարանի առաջ, թէ սուրքերի կողմից նոքա նմանապէս հաւասար են (այս զանազանութեամբ միայն, որ պետական հողերի վերայ բնակւողները ամբողջ տուրքը վճարում են տէրութեան գանձարանին, մինչդեռ կալւածատիրական հողերի վերայ բնակւողները նոյն գումարը վճարում են՝ մասամբ կալւածատէրին, մասամբ՝ աէրութեան, բայց երկուսի առուրքերն ել հաւասար են):

Այն հողացին բէֆօրմները, որ կատարւել են ներկայ դարումն ուռասաց իշխանութեան ձեռքով, Անդրկովկասի թրքա-հայկական նահանգներում, վերաբերում են հենց միմիայն ազնւական կալւածատիրական հողերին, որոնք որպէս խմացանք, թէւ բաւականին խոշոր բայց և այնպէս միայն մի մասն են կազմում նոյն թրքա-հայկական նահանգների հողերի: Խակ միւս կողմից վերաքննելի հողացին օրէնքները և կարգերը վերաբերում են ոչ միայն կալւածատիրական հո-

զերին, այլ և պետական հողերին։ Մամուլի կողմից ուսումնասիրելու և քննելու առարկան այդ իսկ սպատճառով պէտք է կազմել ոչ միայն կալւածատիրական հողերին վերաբերեալ կարգ ու կանոնները, այլ և պետական հողերին վերաբերեալները։ Իսկ մինչդեռ պետական հողերի մասին օրէնսդրութիւնը պարզ է և մի քանի խօսքով բացատրող, կալւածատիրական հողերինը, ընդհակառակը, աւելի բարգ է և կրել է բազմաթիւ փախփութիւններ, առանց որոնց կանխառ ծանօթութեան անկարելի է խնդրի քննութեան մէջ մի քայլ առաջ անել։ Ահա այդ պատմական մասին է, որ այժմ դիմում ենք։

Թրքա-հայկական նահանգներում ազնւական կալւածատիրական գասակարգին պատկանողները կրում են այլ և այլ անուններ՝ բէզ, ազալար, մելիք և միւլքաղար։ Կալւածատիրական գասակարգ, որ գտաւ ուստաց իշխանութիւնը մեր երկրում՝ զոքա էին։ Բայց նախ որ ցացնի չէր, թէ զոքա ինչ իրաւունքների տէրեր էին և ոչ ել զոցա ամենքի իրաւունքները իրար հետ հաւասար էին։ Եէդեր զոցութիւն ունէին այն նախկին խանութիւններում, որոնց տեղը այժմեայ Գանձակի և Բաքուայ նահագներն են։ Աղալարները զոցութիւն ունէին նախկին գրաց իշխանութեան թրքա-հայկական տեղերում, որ այժմ կաղմում են Յօրչալուի, Ղազախի և Գանձակի գաւառները։ Մուլքաղարներ զոցութիւն ունէին նախկին Հայկական երկրում (Արմանք. օթացք), այժմեայ Նըրեանի նահանգում։ Մելիքներ (Հայ) կային Պարաբազում (Գանձակի նահանգի մասը)։ Եէդեր և այլ տիտղոսաւոր անձեր կային նաև Ալսալցխայի փաշալիկում (այժմեայ Ալսալցխայի և Ալսալքալաքի գաւառները)։

Երեանի նահանգում, բացի միւլքաղարները, կային նաև թիուլի տէրեր, բայց 1840 թւականին թիուլը վերածւեց տէրունական հարի, այնպէս որ այդ գասակարգը ջնջւեց։

Բացի այդ բոլոր տիտղոսաւոէրերից, կային և կան նաև խաներ, որոնց իրաւունքները սակայն բէզերի հետ հաւասար պէտք է համարել, այնպէս որ խանական գասակարգ առանձնապէս զոյութիւն չ'ունի։

Այդ բոլոր տիազոսաւորները ունեին և ունեն յարաբերաւթիւններ հողերի հետ, որոնք կամ բնակեցրած են գիւղացիներով և կամ բնակեցրած չեն: Աւրեմն նոքա նղնաժամանակ ունեին և ունեն յարաբերութիւններ ոչ միայն հողերի, այլ և գիւղացիների հետ, որոնք, օգտուելով այդ հողերից, յատնի պարտականութիւններ ունեին գէպի այդ բարձր դասակարգի անձները:

Որոնք էին այդ փոխադարձ պարտաւորութիւնները և որոնք էին առհասարակ բարձր դասակարգի իրաւունքները թէ հողերի և թէ գիւղացիների նկատմամբ՝ դոցա մասին չը կար ոչ օրէնսդրութիւն, ոչ գրաւոր ցիշատակարաններ, ոչ վկայաթղթեր: Այդ պատճառով այդ առարկացի վերաց զանազան կերպով էին նայում տեղական ուռւ կառավարիչները: Սակայն սոցա մեծ մասը ընդունում էր, որ բէգերը և աղալարները կամ ժամանակական, կամ ցմահ և կամ ժամանակաւոր իրաւունքն ունեին գիւղացիներից սովորութիւնով որոշած տուրքեր ստանալու, բայց միմիայն այն պատճառով, որ նոքա էին կառավարում գիւղերից շատերը ոստիկանական կարգով: Խաների իշխանութեան անկումով, թբքական երկիրներում (Գանձակի և Բաքուայ նահանգները) կառավարութիւնը յանձնեց կոմենդանուներին, օկրուժնի նաշալնիկներին և ուչասոկօվի զասէդատէներին, որոնք, որպէս խանութիւնների ժամանակ էր, զիւղերի կառավարութիւնը յանձնում էին բայց ոչ միայն բէգերին և հասարակ գիւղացիներին, զեկավարւելով անցողական հանգամանքների բացասիկ պայմաններով և կամ կամացականութիւնով:

Նոյն էր և Պատասանի թբքական գաւառներում (այժմեայ Բօրչալուի, Պազախի և Գանձակի գաւառների առհմաններում), որ գիւղերի և թափառականների բնակատեղիները զտնուում էին աղալարների ոստիկանական կառավարչութեան ներքոյ: Աղալարները զիւղացիների վերաց ոչ միայն ոստիկանական իշխանութիւն էին բանեցնում, այլ և գաւառատանական, թէև կարելի էր ապելացիա տալ աւելի բարձր իշխանութեան: Աղալարների գասակարգին պատկանում էին այլ և այլ տիտղոսների մարդիկ՝ աղալարներ, սուլթաններ, վերքիներ և, հայոց գիւղերում, մելիքներ:

Հայոց նահանգում (այժմեայ Երևանի նահանգ) երկու տեսակ հողատիրութիւն կար՝ միւլք և թիուլ: Այդ նահանգի գիւղերի շո-

գերը սովորաբար բացառապէս զիւղացիների ձեռքումն էին, որոնք իրանց հողացին բերքերի $\frac{7}{30}$ մասը տալիս էին տէրունական հարկահաններին։ Այդ տուրքը երկուսի էր բաժանուում՝ մէկ մասը կոչւում էր միւլք և հանում էր միւլքարներին, իսկ միւս մասը կոչւում էր թիուլ և հանում էր տէրութեան գանձարանին։

Միւլք ստանալու իրաւունքը տրւում էր պարսիկ կառավարութիւնից պետական ծառայութեան մէջ գոնուողներին, որպէս նաև զիւղերի կառավարի։ տարգաններին և տանուուէրերին։ Այդ իրաւունքը ժառանգական էր։ Տէրութիւնը երբեմն մէկին կամ միւսին շնորհում էր բացի միւլքից, նաև թիուլ ստանալու իրաւունքը, բայց միայն դմահ։ Խանը իւր կամքով կարող էր թիուլը գարձնել միւլքի կամ երկուսն էլ միացնել և մէկ մարդու տալ։ Որովհետեւ միւլքը ժառանգական էր և կարող էր ծախւել ում և կամենար միւլքարը, այդ պատճառով միւլքի տէրերը գետ ևս անսպասուած ազնւականներ չեն։ բայց երբ 1840 թւականին ուուսաց տէրութիւնը և զնար տեղ ծխացին հարկ նշանակեց, միւլքարները առանձին նշանակութիւն ստացան, որպէս երկրի կալածատէր գառակարգ։

Թրքա-հայկական նահանգներում, նոցա նւաճելու առաջին տարիներում, քնական է, որ ոչ բէզերի և ոչ աղալարների իրաւունքները որոշ չեն ուուսաց կառավարութեան համար։ Այդ պատճառով, այդ նկատմամբ, զործը թողած էր տեղական աւանդութիւններին և ուուսաց կառավարիչների կամացականութեան։ Այդ պատճառով յետագայ տարիներում յատուկ մասնաժողովների ձեռքով կատարեցին հետազօտութիւններ իմանալու համար, թէ ինչ իրաւունքով այդ տիտղոսաւորները վայելում են երկրի մէջ այն մեր վերը յիշած արտօնութիւնները։ Այդ զործի սկիզբը զրեց գեներալ Երմօլօվը, 1817 թ., որը յանձնեց մի կատարողական մասնաժողովի՝ հաւաքել տեղեկութիւններ, վերաբերեալ աղալարների իրաւունքներին նախկին Վրաստանի երեք թրքական գաւառներում (Բօրչալուի, Վազախի և Գանձակի)։ Խոցա հիման վերայ Երմօլօվը 1824-ին կազմեց մի կանոնադրութիւն՝ պօջօժենիկ) աղալարների իրաւունքների և պարատկանութիւնների մասին։ Նոյն Երմօլօվը, մի քանի փոփոխութիւններով, հաստատեց Վուբացի գաւառի համար գետ 1812-ին կօմենդանդ Պօնամարիօվից կազմած կանոնազրութիւնը այդ գաւառի գիւղերը կառավարող նախիների և բէզերի համար։

Հայկական երկիրը (Արմանական Օբլաստъ, այժմ. այ Նըրեանի նահանգը) նւաճելուց և ազգակղ օբլաստնօյ կառավարութիւն հասաւատելուց յետոյ կոմն Պատմէիչը կարգադրեց որ բոլոր նոքա, ովքեր անշարժ կալւածներ ունին, իրանց վկայաթղթերը ներկայացնեն: Որոշւած ժամանակը սակայն սուզ լինելով, օբլաստնօյ կառավարութիւնը, երգւեալների վկայութիւններով բաւականանալով, վկայաթղթերի ուեց անշարժ կալւածներ ունեցողներին:

Ախալցխայի նախկին փաշալիկում (այժմ. այ Ախալցխայի և Ախալքալաքի գտաւուները) Պատմէիչը յայտնեց տեղական բէզերին, որ ով նոցանից կը կամենայ հեռանալ Թիւրքիա, կարող է իւր անշարժ կայքերը ծախել: Նոքա ծախեցին, բայց ոչ միայն իրանցը, այլ և շատ տէրունական հողեր, որոնք և մնացին նոր առնողների ձեռքում:

Ազդպէս էր զրութիւնը երկիրս նւաճելու սկզբնական տարիներում, մինչև որ Անդրկովկասում 1841 թւականին մոցրւեց քաղաքացիական կառավարութիւնը: Այժմ արդէն կարօտութիւն զգացւեց, որ գիւղացիների հողերից օգտուելու եղանակները սրոշւեն ոչ թէ ժամանակաւոր կանոններով, այլ օրէն սղրական կարգով:

Քաղաքացիական կառավարչութիւնը մոցնելուց առաջ, կատարւեց վերաբննութիւն (Թէւիզիա) Անդրկովկասիան բոլոր վարչական հիմնարկութիւնների սենատոր Գանի՛ կողմից: Վերջինս կասկած յացնեց աղալարների և նէգերի հողատիրական իրաւունքների տարածութեան մասին: Սենատոր Գանը լնդունեց, որ աղալարները մի գատակարգ են, որը կոչւած էր սատիկանական կառավարութիւն վարելու զիւղերում: և որ եթէ աղալարները հողային իրաւունքներ ունին, (արդիւնքի մասը սառանալու և աղին) այդ բղիսում է ոչ թէ նորանից, որ այդ հողերը նոցա սեպհականութիւն են, այլ միայն վարձատրութիւն է նոցա ծառացութեան համար: նէգերի մասին նա յացնեց, թէ նոքս չունին ժառանգական իրաւունք հողերի համար և որ ուրեմն նէգի մահով վերջանում է այդ իրաւունքը և ժառանգներին կարող է անցնել նա միայն բարեհաճութեամբ աէրութեան: Միւլքագարների և թիուլի տէրերի մասին Գանը յայտ-

նեց, որ թիուլները պետական գիւղեր են, որոնց եկամուսները ալբում էին յօդուտ այն անձերի, որոնց նոքա պարզեւում էին. իսկ միւլքերը ժառանգական կալւածներ են, որոնց տէրերը առանում են եկամուտի $\frac{2}{5}$ մասը, իսկ $\frac{3}{5}$ մասը տէրութեան գանձարանն է մըսնում:

Սենատօր Գանի այս կարծիքները, որ ընդունեց նաև Անդրկովկասեան երկրի կառավարչութեան զլիսաւոր խորհուրդը, արտափայլցին տէրութեան կարգադրութիւնների մէջ: Փանի որ աղալարների հողային իրաւունքները հիմնում էին նոցա ոստիկանական ժառայութեան վերայ, և քանի որ 10 ապրիլի 1840 թւականի օրէնքով, Անդրկովկասի քաղաքացիական կառավարչութեան մասին, աղալարները հեռացնում էին ոստիկանական պարտադիր ժառայութիւնից, ուստի նոքա պէտք է զրկէին նաև իրանց ցայժմ վայելած հողային իրաւունքներից:

Այդպէս էլ վճռեց: Իրբ վարձատրութիւն այն արտօնութիւնների համար, որ տրւած էր նրանց 1818 թւականի կանոններով, որոշեց տալ նրանց գրամական ռոճիկ ցմահ, աւելացնելով գիւղայինների հարկը: Մելիքների և աղալարների հայկական 11 գիւղերում նոքա բոլորովին հեռացրեցին պաշտօններից առանց որ և է վարձատրութեան:

Խորհուրդի այդ որոշումը բարձրագոյն հաստատեց 28 մայիսի 1841 թւականի:

Բէգերի համար Կովկասեան խորհուրդը վճռեց նոյնը, բայց դրան հակառակեց պատերազմական մինիստր իշխան Զերնիշելը, որը կարգադրեց քննել գործը և որոշել Բէգերի իրաւունքները առանձին կոմիտետի ձեռքով (կոմիտէտ Բէգերի իրաւունքների մասին): Կոմիտէաը վճռեց, որ Բէգերը ունին ժառանգական սեպհականութեան իրաւունք բնակեցրած հողերի վերայ, բայց որ թուրքերի մէջ ձորտութիւն, ուուսաց մոքով, չը կայ: Այդ և աղալարների համար կազմած կոմիտէտները որոշեցին, որ աղալարների նշանակութիւնը նոյն է ժողովրդի աչքում, ինչ բէգերինն է և որ ուրիշն նոցա բոլորի դրութիւնը պէտք է նոյն սկզբունքներով որոշել:

Այսպէս էր գործի դրութիւնը, երբ, Կովկասեան վոլոսարքայ նշանակւեց իշխան Վօրօնցօւը, որի ուշադրութիւնը կայսր Նիկողայոսը

դարձրեց այս կարևոր խնդրի վերայ յայտնելով, որ «Աղալարներից հողեր խլելը սիսալ գործ էր և որ նրանց պէտք է այն վերադարձնելու հշիսան Վօրօնցուը ներկայացրեց թագաւոր. կայսրին, փետրւար 1846 թ., իւր զեկավարութեամբ զեներալ լէյսենանու Լաղինակու կազմած կանոնադրութիւնը երկրիս բարձր մահմեդական դասակարգի հողային իրաւունքի և զիւզացիների ու հողատէրերի փոխադարձ յարաբերութիւնների մասին, որ քննեց Կովկասեան կոմիտէտը։ Փետրւարի 2-ին 1846 թ.-ին բարձրագույն հաստատած այդ կանոնադրութեան մէջ դրոշւած է հիտեւալլ՝

Ժառանգաբար հաստատել բէգերի վերայ այն բնակեցրած հողերը, որոնցից նոքա այն ժամանակ օգաւում էին, վերադարձնելով նրանց և այն մէկեները, որ մի քանիներից խլւած էին.

Ընդունել այդ հողերի վերայ բնակւող զիւզացիներին իբր պետական զիւզացիներ, յանձնելով նոցա ոստիկանական կառավարութիւնը հողատէրերին։

Պարտաւորացնել այս զիւզացիներին զանազան տուրքերով յօդուած հողատէրերի

Աղալարների մասին որոշւեց՝

իշխան Վօրօնցուի կարծիքների զլխաւոր հիմունքները թէ բէգերի և թէ աղալների նկատմամբ՝ հաստատել.

Այդ կերպ նրանց ցոյց տրւած ողորմածութիւնը, յայտարարել նրանց ոչ իրաւունքի ձևով, այլ թագաւոր կայսեր առանձին ուշադրութեան և զժառատութեան ձևով։

Թողնել Կովկասեան փոխարքային, նորա այցելութեան ժամանակ երկրի թրքական դաւառներին, յայտարարել աղալարներին և բէգերին, որ թագաւոր կայսրը, իւր մշտական հոգացողութեան մէջ դէպի նոցա վիճակը, բարեհաճում է պարզել առաջիններին և առ միշտ հաստատել վերջիններիս վերայ այն կալւածները, սպասելով սակայն, որ թէ նոքա և թէ սոքա եռանդոտ ծառայութիւնով իրանց միանդամայն արժանի ցոյց կը տան նորին Մէծութեան բարձր ողորմածութեանը դէպի նրանց։

Այսպէս ուրեմն, բէզերին և աղալարների վերաց հաստառ եցին այն բոլոր հողերը, որոնցից նոքա մի ժամանակ օգտառում՝ էին: Բայց մեծապէս հետաքրքրական է իմանալ, թէ, այդ նոր կանօնադրութիւնով, ինչումն էին կացանում զիւղացիների պարտաւորութիւնները զէպի բէզերը և աղալարները: Նոցա հողերի վերաց բնակող զիւղացիները պարտական էին բէզերին և աղալարներին անձնական ծառ այսութիւններով և բանւորութիւնով, տնտեսութեան առարկաների մասով և հողացին բերքերի մի հինգերորդ մասով առեն մեկի հողաբաժինից, որ որոշւած էր հինգ գեսխատին ամեն մի աշխատող հոգու համար: Քաղաքներում ապրող և տէրունական հողերում բնակող զիւղացիներն էլ պարտական էին բէզերի օգտին զանազան առուրքերով, ըստ վաղեմի սովորութեան՝ փողով, անձնական ծառացութիւնով և կամ արհեստի առարկաներով: Գիւղացիները զրկի ում էին իրաւունքից թողնել իրանց հողաբաժինները և անցնել բնակութեան նոր տեղեր: Բէզերին և աղալարներին տրւեց ուստիկանական իրաւունք զիւղացիների վերաց, դատոելու իրաւունք՝ ոչ քրէական յանցանքների համար, և իրաւունք՝ զիւղացիներին մարմնապէս պատմել մինչ օօզգու 25 հարւածը:

Այսպիսով, որպէս աեւնում ենք, կարածատիրական զիւղացիները, բէզերի և աղալարների նկատմամբ, նոյն զիրքի մէջ զրւեցին, ինչպէս ուսւաց ճորտ զիւղացիները Առևաստանում իրանց հողատերի նկատմամբ:

Այդ առաջարկութեան մանրամանութիւնների մէջ մտնելու առիթով, թէ Կովկասեան Կօմիտէտի և թէ մինիստրների ու իշխան Վօրօնցուի մէջ եղան սաստիկ մէծ տարածանութիւններ, որոնց հետեւանքն եղաւ Յ գեկտ. 1846 թ. օրէնքը, ուր առաջին անգամ օրէնքի խօսքով յայտնւեց, որ թթքական գաւառներում ճորտութիւն էրքէք գոյսութիւն չի ունեցած, հետեւաբար և փոխեց վերևի կանոնադրութիւնը: Այդ մասին սակայն մի այլ անդամ:

ԾԻԱԾԱՆ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԿԵԼԵԱՆՑԻ

Դէպի արեւելք... Ահա տեսնում եմ
Խնչպէս մըռայլում է նորա պատկեր.
Այնտեղ ժողովում և կուտակում են
Թանձըր, սև թըխպեր:
Արեւելք, քո սև հորիզոնի տակ,
Գիտեմ, պատրաստում ես որոտ, կայծակ
Իմ թըշւառ եղբօր, իմ խեղճ մօր համար.
Ո՛հ, բանտի՛ կամար...

Ո՛խ, ինչու արգեօք, մինչ արեւմուտքում
Ոսկեգոյն արեւ է փայում գողտրիկ,
Այլայլւած, մըռայլ այն արեւելքում
Սպառնում է ճայիթել ահեղ փոթորիկ:
Բայց խընդա, հոգիս. ահա ամպերում
Կանաչ-կարմիրը կապեց կէս-շըրջան.
Ո՛հ, ինչ քաղցըր լոյս վառւեց իմ սըրտում.
Այն դու վոռեցիր, պայծառ ծիածան:

ԶՆԹԱՂԻԿ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵՍՆՅԻ

Լ՞ր ես թագցրել դու, ձընծաղիկ,
Սիրուն դէմքըդ ձիւնի տակ.
Տես-երկընքումն ի՞նչ գեղեցիկ
Վառվըռում է արեգակ,—
Ոյն քո սիրուց է նա այրւում բորբոքւում.
Քո տեսութեան է նա, ծաղիկ, կարօտում:

Հալւի՛ր, սան. ձիւն. բացի՛ր շուտով
Քո պատկերը, ձընծաղի՛կ.
Եընչի՛ր ազատ ու լի կըրծքով,
Ծաղկի՛ր, աճի՛ր երջանիկ,—
Թող տաքացնէ քեզ այն փալլուն արեգակ,
Որ չը սառչես դու, խեղճ ծաղիկ, ձիւնի տակ:

Մասկու. 1890 թ., փետրվարի 14:

ՄԱՆՐՈՒԹՔ

ԼԵԿՈՆ ՄԱՆՐՈՒԹՔԻ ԵԱԿԱՑԻ

Ոչ ոքի դու չես սիրում
Եւ կարող չես դու սիրել.
Զը կայ սիրո քո սառ մարմնում.
Կարծըր քար է նա դառել:

Ոչ-ոքի դու չես սիրում,
Բայց ուզում ես—քեզ պաշտեն,
Եւ մարդիկ իրանց սըրտում
Միշտ ովոսնեա քեզ ասեն:

II

Դու ծիծաղում ես, բայց քո ծիծաղից
Բուրում չէ յարգանք և սէր մարդկալին.
Դու Սադալէլ ես, որի բերանից
Լըսւում է միայն քըրքիջ դժոխալին:

* * *

ԱՐԵԱԼՈՅԱ ՄԻՒԹՅՈՒՆՅՈՒՆԻ

Ողջոյն քեզ, սենեակ, իմ անդորր անկիւն.
Ալեծուփ կեանքի գոռոց և վայիւն
Չեն չեն սողում երբէք քո փակ գոնից ներս
Քո մէջ անձնիշխան տիրատեսն եմ ես:
Սևագէմ ոտին կրուի և տրեան
Կանգնում է անզօր քո շէմքի առաջ,
Ուր հըսկում է միշտ Աստծոյ պահապան
Խւր հովանաւոր թեները պարզած:
Եւ ազատ եմ ես քո միշտ հիւրընկալ
Յարկի տակ ձըգել զըրահ ու զէնքեր,
Թօթափել կրուի փոշին ու հոգալ
Վիրաւոր սըրտի ծըխացող վէրքեր.
Ազատ եմ հանգչել խաղաղ, անվըրդով,
Ազատ եմ անտես ժըպտալ, ծիծաղել
Եւ չորի համար լալագին աչքով
Երեսըս գետնին Աստծուն աղօթել...

ՀԵՂԻՆԵ

Վ Ե Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

(Շաբաթնակութեան¹⁾)

IV

Հարսանիքից մի քանի օր անցած, առաւօտեան ժամի 11-ին նորապահները նստած թէլ էին խմում ու լեզուակոիւ անում իրար հետ:

— Զէ՛, ներողութիւն կանես, Միշէլ, բաւական է ինչ երես տւիր ինձ, այսուհետեւ ես սկսոք է քեզ համար թէջ ածեմ:

— Հա՛, հասկանում եմ, քաղաքավարի կերպով յիշեցնում ես, որ դու իրաւունքներ ունես, պատսասիանեց Ամիրանօվը շարունակ պաշալիով կնոջը:

— Լաւ, ասենք թէ հէնց այդպէս է, յետո՞յ, խօսքդ ի՞նչ է, բարձրաձայն ծիծաղով ասաց Հեղինէն ու կուռը մեկնեց, որ խլի մարդու ձեռիցը թէյամանը,

— Զէ, հոգիս, այսօր էլ գեռ դու հիւրս ես, իսկ վաղւանից արքունիքիս բոլոր գանձերն ու իշխանութիւնը կը յանձնեմ գեղեցկուհուս: Բայց զորա փոխարէն բռնակալ ամուսինը կը պահանջի, որ ինքը լիակատար իշխան լինի գեղեցկուհու սրտի վերայ, կատակի էր զցում Ամիրանօվը, շոյելով կնոջ մազերը:

¹⁾ ՏԵ՛ս «Մոլոք»-ի № 6.:

Նորապսակների քաղցր զրոյցը ընդհատեցին հիւրերը:

—Տեսէք, տեսէք, ասաց նոցանից մէկը, մէր նորապսակները արդէն կուռում են իրար հետ:

—Հապա ի՞նչ էիր կարծում, Թամար, ի՞նչ է մարդու գեացողի առաջ միայն վարդեր են փռւած, ծիծաղելով ասաց Ամիրանօվը քրոջը, որ մօտ երեսուն տարեկան տգեղ օրիորդ էր:

Այդ ասելով նա պինդ սեղմեց կնոջ ձեռքը և կպցրեց իւր ալթունքներին:

—Ինչ ե՞ս եմ տեսնում, մինչեւ ձեր վշերին հասնելը գեռ շատ կայ, ասաց միւս, մօտ քառասուն տարեկան, այրի քոյրը և տարօրինակ կերպով ծիծաղեց: Բայց կատակը դէնը կենայ, Հեղինէ, ևս ձեզ մի նկատողութիւն ունիմ անելու:

—Ի՞նչ:

—Դուք ձեզ շատ անզգոյշ էք պահում, այդպէս չի լինի:

—Ճիշդ է ասում, սիրելիս, ընդհատեց այրու խօսքը մօրաքոյրը, երէկ այն անձրեւովը չը պիտի տանից դուրս գայիք:

—Բան չը կայ, ես սովոր եմ, առաջին անգամը չէ:

—Բայց այժմ ձեր զրութիւնը ուրիշ է. մեզանում ընդունւած չէ, որ նորահարսը պսակից յետոյ առաջին օրերը տանից դուրս գայ, վրայ բերեցին մօրաքոյրն ու այրին միասին, աշխատելով խլել խօսքը մէկ մէկի բերանից:

—Ինչո՞ւ որ, զարմացած հարցրեց Հեղինէն: Միթէ՞ Սիքայէլ, սպակւած կնոջ բառարանումն էլ շուտ-շուտ է պատահում այդ անտանելի ընդունւած չէ»-ը:

Խնամիների սրտին հարսի խօսքերը դիսկան, նոքա միմևանց նայեցին հարցական հայեացքով:

—Մեր պարտականութիւնն էր ձեզ զգուշացնել, հիմա դուք զիտէք, հոգիս, կուզէք լսէք մէր խորհրդին, չէք ուզի հօ՛, քէֆը ձերն է, ինչ սրտներդ տայ այն կանէք:

—Լաւն էլ հէնց այդ է, հիմա էլ ով է ուշ դարձնում զանազան ասէկուէներին, մէջ ընկառ Թամարը:

—Ամեն բան քո դասողութեամբն ես արել, նորա համար ես տանը մնացել, պառաւել, է՛, չարահած խէթ-խէթ նայեց քրոջ վերայ այրին:

Տեսնելով որ բանը վաստ է վերջանալու, Ամիրանօվը խօսակցութիւնը ընդհատեց ու առաջարկեց հիւրերին գնալ քաղաքից դուրս զբունելու։ Նոքա սկզբում չէին համաձայնում, բայց մարդ ու կին այնպէս թախանձում էին, որ չէր կարելի խաթրները կոտրել։

Զբունելուց տուն վերադառնալով Ամիրանօվը լիրանց սեղանի վերաց երկու հիանալի փունջ տեսան. Կատարին Սահառունին էր ուղարկել։

—Միքայէլ, ե՞րբ ենք գնում ընկերուհուս մօտ. արի հէնց այսօր գնանք, ասաց Հեղինէն մարդուն։

—Զէ, սիրելիս, գեռ շուտ է... ես շատ ազգականներ ու ծանօթներ ունեմ, ոչ մէկի մօտ չենք գնացել։

—Ի հարկէ չի կարելի, մէջ ընկաւ այրի քոյրը։ Ամէնից առաջ Սահառունիների մօտ գնալով, բոլորին ձեր դէմ կը գրգռէք։

Հեղինէն մի քիչ յօնքերը կիսեց։

—Գիտէք, քեռի, Աւբարօվը եկել է, կմկմալով ասեց թամարը գնալու ժամանակ։

—Վաստ չի լինի, Միքայէլ, եթէ ացելութեան գնաս մօաը և ծանօթացնես նրան կնոջդ հետ, աւելացրեց միւս քոյրը։

—Այսինքն հաշտուե՞մ հետը։ Զէ, ես երբէք չեմ մոռանաց այն անսպառութիւնը որ նա ինձ հասցրեց։ Բացի այդ, աչքի առաջ ունենալով Մոսկվայում նորա վարած անառակ կեանքը, ես կարծում եմ, որ Հեղինէին չի վայելի հիւր ընդունել նորան։

Ամիրանօվը այնպիսի ձեռվ ասեց այդ, որ դժւար էր նրան առարկութիւն անել, այնպէս որ քոյրերը սուս ու փուս կապեցին զվաշորերը և գնացին։

Մի բոսէ չանցած զանգը խփեցին և խսկոյն ներս վազեց Կատեան զուքւած զարդարւած։

—«Անունը տուր տուքրէն քցի», մենք հէնց նոր քո մասին էինք խօսում, հողիս, ուրախ ուրախ զիմաւորեց նրան Հեղինէն և բռնելով երկու ձեռիցը նստացրեց բազմարանի վերաց։

—Երեւի ուզում էիր իմ մօտ դալ, իսկ ես ձեզնից առաջ ընկայ։ Բայց հա, մոռայել էի, որ Միխայիլ Պետրօվիչը ձեւասրաց մարդ է և չի կարող պաշտօնական այցելութիւններ շանել։

—Ի հարկէ, ծիծաղելով հաստատեց նորա խօսքը Ամիրանօվը և հանեց նորա վրացից վերարկուն։

- Զի կարող չանել, Կատեա, յարգելի պատճառներ կան:
- Ով է կասկածում որ: Այս, այս էլ իմ հոգեսորբ:
- Հեղիկ, դու ծանօթ ես չէ Դէօ'րդի Ալէքսանդրօվիչի հետ:
- Ի հարկէ, Միքայէլ, ասեց Հեղինէն ուրախ ուրախ զիմաւորելով հիւրին:
- Որտեղարենք էիր մինչև այժմ, բարեկամ, չե՞ս ամաչում, արածդ ընկերավարի է՞ր:
- Ների՛ր, Միքայէլ, հարսանիքիդ հետեւեալ օրն եմ եկել քաղաք:
- Իսկ Կատարինէի նամա՞կը:
- Նամակը չեմ ստացել, տիկին Հեղինէ: Ես այնպիսի տեղերում էի թափառում, ուր փօստավին հաղորդակցութեան ձանապարհներ չը կան:
- Հը, գործերդ ինչպէս են զնում. այն գործի համար, որ ուզում էիր սկսել, ընկերներ գտա՞ր, բարեկամաբար հարցրեց Ամիրանօվը:
- Դեռ չէ, բայց յոցս չեմ կորել:
- Բաւական է գործի մասին խօսէք, պարոններ, հրամայաբար ասեց Կատարինէն: Աւելի լաւ է անցեալլը յիշենք, անցեալից խօսենք, — կարգադրում էր նա, նստելով և առաջարկելով բոլորին տեղաւորւել սեղանի շուրջը, կասէիր իւր տանը լինէր:
- Տիկին Կատարինէ, կրա'կէք, կրա'կ:
- Ուրեմն զգոց կացէք, որ չայրւէք, Միխալիլ Պետրօվիչ: Այդ ասելով Կատարինէն վեր թուաւ տեղիցը և էլ մի տեղում դադար չէր առնում, վազվզում էր, այս կողմ այն կողմ:
- Ասէք, խնդրեմ, տիկին Հեղինէ, կինս միշտ այսպէս չարաճճն է եղել, ծիծաղելով հարցրեց նորան Սահաւունին:
- Հա, այդ կողմից նա շատ հաստատամիտ է, ամենեին չի փոխւել: Բայց զիտէք, Դէօ'րդի Ալէքսանդրօվիչ, Կատեան ինստիտուտում ամենքի սիրելին էր:
- Ուրախութեանս չափ չը կայ, Հեղինէ, որ դու աղատւեցիր վերջապէս քեռուդ կնոջից, արագախօսելով կորեց նորա խօսքը ընկերուհին. մենք այժմ կարող ենք շուաշուա տեսնել:
- Ասէք խնդրեմ, Դէօրդի Ալէքսանդրօվիչ, ինչո՞ւ դուք չէիք գալիս քեռուս մօտ, չը նայելով որ Կատեան այնքան խնդրում էր:

Այդ հարցնելիս Հեղինէն այնչափ անկեղծ ու մտերմութեամբ էր նայում Սահառունուն, որ նա չը կարողացաւ անկեղծ չը պատասխանել նորան:

—Անկեղծ ասած, տիկին Հեղինէ, ես ոչ մի բանից այնքան չեմ վախենում, որքան մի որ և է հասարակութեան, ընկերութեան մէջ աւելորդ մարդ լինելուց: Խնձ թւում է, որ ես միշտ աւելորդ կը լինեմ այն աղնւակիրթ շրջանում, ուր ձեւապաշտութիւնից ամենաթեթև շեղումները յանցանք են համարում:

—Ճիշդ է, ոչ մի կարգին հասարակութիւն չի կարող տանել քո տաք վիճաբանութիւններն ու կծու հակաճառութիւնները, կատակով պատասխանեց Ամիրանօվը:

—Ես էլ եմ շատ սիրում վիճաբանել. կը նշանակի մեր բնաւորութիւնները իրար կը բռնեն, ժպտալով ասաց Հեղինէն առանց լսելու մարդու վերջին խօսքերը:

—Խօսքով ընկանք, տուն գնալու ժամանակ է, ասաց Կատարինէն վեր կենալով տեղից: Վաղը ժամի իննին շոր կարողը կը գայ մօտս: Խնչո՞ւ չես վեր կենում, Գէորգ, չէ՞ զու ասում էիր, որ վաղ-ւայ համար շտապ թուղթ ունիս գրելու:

—Կացէք, ո՞ւր էք գնում, ընթրիք կ'անենք, կը խօսենք գէսից դէնից, չը թողեց գնան Ամիրանօվը և զանգահարեց:

ՍԵՂԱՆԸ ՊԵՏԵՑԻՆ:

—Խմենք, Գէորգ, մեր և մեր սիրուն ընկերուհիների բարեկամութեան յարատեւութեան համար: Սկի մոքներովս կանցնէ՞ր, որ մենք երկու մտերիմ ընկերուհու վրայ ենք պսակւելու:

—Քախտի բերմունքով այժմեանից մեր բարեկամութեան յարատեւութիւնը ապահովւած է, աւելացրեց Հեղինէն ծիծաղելով:

—Կանաչք, որքան յիշում եմ, հին ժամանակներից սիրոյ ու բարեկամութեան պաշտպաններ և խռովածներին հաշտեցնողներ են յիշում, ասաց Սահառունին:

—Լսում ես, Կատեա, որքան յոյսեր են դնում մեր վերայ մեր մարդիկը:

—Թէ քաջ են թող իւ ովեն. չէ՞, ես նոցա հաշտեցնողը չեմ. լաւ լսէք, պարոններ:

Դեռ երկար շարունակում էր նոցա խօսակցութիւնը անցեալի յիշողութիւնների մասին։ Կէս գիշերից անց էր, որ նոքա բաժան-ւեցին իրարից։

V

Մեղրամիսները վերջանալու վերայ էին։ Նորապսակների համար սովորաբար սարքւող քէֆերից ու խնջոյքներից յետոյ, Ամիրանօվները արդէն սկսել էին խաղաղ ու անվրդով կեանք վարել իրանց պարզ ու մաքուր բնակարանում։ Ամբողջ տունը տակն ու վերայ անելուց ու կահ-կարասիքը իւր ճաշակովը տեղաւորելուց յետոյ, Հեղինէն սկսեց մեծ խնամքով կարգի բերել ու զարդարել իւր հիւրասենեակը որ շատ սիրուն սարքեց։

—Ա, Հեղիկ, ես շուտով բարձր պաշտօն կը ստանամ, ո.ոճիկս կ'աւելցնեն, այն ժամանակ աւելի կը կարողանաս զարդարել սենեակը, ասաց Ամիրանօվը տեսնելով կնոջը հիւրասենեակը սարքելիս։

Մի ամիս անցած Ամիրանօվը նոր պաշտօն ստացաւ և բոլորովին անձնատուր եղաւ իւր պաշտօնական գործերին։

Բաւական է որքան ժամանակ կորցրեցի կնոջս վերայ, պէտք է սկսել գործով պարապել, մտածում էր նա ինքն իրան։

Միայն ո.ոճիկովս բան չի դուրս գայ, նիստ ու կացս փոխել չեմ կարող. փող որ ունենացի, գիտեմ ինչ կանէի, անցնում էր յաճախ Ամիրանօվի մտքովը։

Երէկ սիրոս ուզում էր ճաքել, երբ որ տեսայ, թէ իշխանուհի Շակունին ինչպէս յօնքերը կիտեց մեր սանդուխքներով բարձրանալիս։ Պատիժ է, մարդ չի կարողանում կարգին մարդկանց հետ զնալ-զալ ունենալ և լաւ չի լինի կնոջս փռքրիկ դրամագլխին ձեռք տամ։ այդ թէ ինձ և թէ կնոջս համար օգտակար կը լինի։

Երբ որ Ամիրանօվը յայտնեց իւր միտքը Հեղինէին, նա ասաց։

—Ինչ ուզում ես, արա, Միքայէլ, ունեցած չ'ունեցածս քոնն է։

—Հոգի'ս, սիրոս չի տանում, կսկծում է, երբ որ տեսնում եմ քո այժմեան խեղճ նիստ ու կացը այն ապրուստից յետոյ, որ...

—Լոկր, Միքայէլ, ընդհատեց նորա խօսքը կինը և ձեռքը դրեց բերնին։ Ես այժմ էլ շատ լաւ եմ ապրում։

—Յոյս ունեմ, որ յետոյ կը կարողանամ փողերը լրացնել, շա-րունակում էր մարդը առանց լսելու կ'ոչ խօսքերը։

— Առ' ւս, սո' ւս, ամօթէ է, այդպիսի բաներ մի ասա. դու՛ երեւում է՝ ինձ գեռ լաւ չես ճանաչում:

— Բայց այն լաւ գիտեմ, հրեշտակս, որ եթէ քեզ շատ ըլ սիրէի, այդ բանը չէի անի: Մարդը պինդ գրկեց կնոջը և մի քանի բովէից յետոյ տանից դուրս եկաւ:

Սցով խօսակցութիւնից յետոյ Ամիրանսօվը իւր տան կահաւորութիւնը օր օրի վերաց աւելի ու աւելի շքեղացնում էր: Հեղինէի համար այդ բաւական չէր, նորա սիրան ուզում էր, որ մարդը իրան աւելի ժամանակ նւիրի, երեկոները հետը մնայ տանը, բայց նա միշտ զանազան ծշմարտանման պատրւակներով անկատար է: Թողնում կնոջ սրտի փափագը: Խեղճը անհամբերութեամբ սպասում էր տօներին, կարծելով թէ այն ժամանակը մարդը ոչինչ գործ չ'ունենալով ամբողջ օրը իւր հետ կը լինի:

Հեղինէն մէկ-մէկ իննդրում էր մարդուն, որ իւր համար բարձր ձայնով կարդաց մի որ և է գիրք, որ ինքը լաւ չէր կարողանում հասկանալ: Ակզբում նա չկամութեամբ էր կատարում կնոջ խնդիրքը, խակ յետոյ սկսեց քաղցրութեամբ համոզել նորան, որ իւր սիրուն գլուխը այդպիսի չոր ու ցամաք, վերացական բաներով չը լցնի, այլ այնպիսի գրքեր կարդաց, որով իրանց շրջանին պատկանող մարդիկ առհասարակ հետաքրքրում են, կամ թէ երաժշտութեամբ պարապի, որի հմտութիւնը, նորա ասելովը, կնոջ ամենասիրուն զարդերից մէկն է:

Կինը՝ ի հարկէ՝ հակառակ էր մարդու յայտնած մոքերին և մնացել էր շւարած, թէ ինչպէս նա այդքան շուտ սկսել էր դաւաճանել իւր գաղափարներին:

Տանօթներից ու խնամիներից Հեղինէին ամենից յաճախ այցելում էին տալերը—Ամիրանսօվի քոյքերը. մեծ տալը միշտ խառնւում էր նրանց ընտանեկան գործերին:

Ոչինչ հաճութիւն չը ստանալով իւր տալերի ընկերութիւնից, Հեղինէն մէկ-մէկ իննդրում էր մարդուն, որ երեկոները գնան իւր այս կամ այն ընկերուհու մօտ: Մարդը սկզբում աշխատում էր համոզել նորան, որ ձեռք քաշի այդ անօգուտ ծանօթութիւններից, բայց տեսնելով որ չի կարողանում համոզել, զանազան ծշմարտանման պատրւակներով հրաժարում էր կնոջ հետ նրանց մօտ գնալուց:

Սի անգամ խօսք ընկաւ անկեղծ բարեկամութեան ու մտերմութեան մասին։ Հեղինէն ապացուցանում էր այն ընկերութիւնների օգտակարութիւնը, որոնք հիմնած են անկեղծութեան ու մտերմութեան վերաց։

— Գլխիցդ հանի, Սսուռածդ սիրես, այդ ցանցառ մտքերը, անհամբերութեամբ ընդհատեց նորա խօսքը Ամիրանօվը։ Դիտեմ, այդ այն երկու սանոտիւննուալ ընկերուհիներիցդ լսած կը լինես, որոնք հասարակութեան մէջ եղած ժամանակ երկու խօսք չեն կարողանում իրար հետ կապել ու անդադար կարմրում են։

— Խնձ թւում է, որ մարդու աղքատութիւնն ու համեստութիւնը ծաղրի առարկայ չեն կարող լինել, — տաքացաւ Հեղինէն։

Նա շուռ եկաւ և ուզում էր գնալ, բոց մարդը կանգնացրեց։

— Լսիր, հոգիս, ասածս ճիշտ չես հասկացել։ Ի՞մ ուզածս այն է, որ դու մտերմանաս այնպիսի մարդկանց հետ, որոնք կարող են նպաստել զարգացմանդ, որոնք կարող են քեզ մարդամէջ մտնող, ասող-խօսող ու մարդավարի վարւող կին դարձնել։ Լաւ է, որ հենց մէկը մի քիչ սրտովդ չի լինում, մի խօսք էլ է հետք չես խօսում։

Ամիրանօվը երկար ու բարակ բացատրում էր իւր միտքը։ Նա ուզում էր պարզ և անկեղծ Հեղինէին ճարպիկ և վայելչակիրժ կին դարձնել։

Այսիսի գէպքեր աննշան փոփոխութիւններով բաւական յաճախ էին կրկնւում ամուսինների մէջ և Հեղինէն ակամայ ցիշում էր, որ իւր մարդը մի քանի ամիս առաջ, նշանած ժամանակը, բոլորովին ուրիշ տեսակ մարդ էր երևում։

Սի օր իրինապահին Ամիրանօվենց մօտ հիւր եկան կատարինէն ու իւր մարդը։ Հեղինէն գեռ նառած տեղիցը չէր վերկացել նոցա զիմաւորելու համար, որ ընկերուհին, ձեռներն իրար խփելով, աղաղակեց։

— Լա՛ւ էք անցկացնում մեղրամիսներգ։

— Խնչո՞վ է վատ որ, պատասխանեց Հեղինէն աշխատելով ժըպտալ. և ակամայ մտքով անցաւ, թէ որքան քիչ ժամանակ է նւիրում մարդը իրան, — առաւոտը վաղ գնում է ծառացութեան մինչև ճաշ, ճաշից յետայ էլ իսկոն պարկում է քնելու ու սպասի, որ քնից պէտք է վերկենայ, վերջապէս վեր է կենում ու իսկոն զնում է

իւր իշխանաւորի՝ զեներալ Միհրանօվի կնոջ մօտ նրա համար զանազան յանձնաբարութիւններ կատարելու կամ թէ մի քիչ նստում է ու յետոյ գնում էլի նրա մօտ պրէֆէրանս խաղալու։ Եթէ ազատ բովէններ մնում է՝ իրան երեխայի նման փաղաքշում, գուրգուրում է, դեսից դէնից մի քանի խօսք է խօսում հետը, ասելով թէ շատ ցաւում է, որ նրան չի կարող աւելի ժամանակ նւիրել, հետը երկար նստել, ժամանակ անցկացնել։

Հեղինէն հաւատում էր նորա ասածին, բայց չէր կարողանում սովորել մենակութեան։

—Ի՞նչ ես ընկել մոքիդ հետ, Հեղիկ, հարցրեց Կատեան ուրախ ձայնով ու մօտեցաւ պատուհանին։ Տեսէք, ի՞նչ լուսնեակ գիշեր է. դուրս եկէք, ման եկէք, չէք ուզում ման գալ, միասին մի բան կարդացէք, թէ չէ ի՞նչ էք ամեն մէկդ մի անկիւն մտել ու փիլխոսիացի նման մատածում, կարծես աշխարհիս հոգսերը ձեզ են տւել։

—Այ այրպէս, այրպէս, մի քիչ նախատեցէք Հեղինէին, թէ չէ շուտով գլխիս «կապոյտ գուլպա»¹⁾ կը դառնայ, վրայ բերեց Ամիրանօվը։

—Այդ ի՞նչ է ձեռիդ, Գէորգ։

—Տիկին Հեղինէին խոստացածս գրքերն է։

Հեղինէն շնորհակալութիւն յայտնեց Սահառունուն ու սկսեց հետաքրքրութեամբ թերթել գրքերը։

—Լա՛ւ, լա՛ւ, յետոյ կը նայես, արի, քեզ բան ունեմ ասելու, ասեց Կատարինէն ու զօրով քաշ տւեց նորան պատշգամբը։

Նրանք որ դուրս եկան սենեակից՝ Ամիրանօվը խէթ-խէթ նայեց Սահառունու վերաց։

—Աստուած սիրես, Գէորգ, կամ Հեղինէին այդ տեսակ գրքեր մի բեր կամ թէ ինքդ արի հետը կարգա։ Ես որ վաղուց է էլայդպիսի փիլխոսիայութիւններով չեմ պարապում և՝ բացի գորանից՝ ժամանակ չունեմ, գործերով խեղտւած եմ, մինչև անգամ չեմ իմանում թէ աշխարհիս երեսին ինչ է կատարւում ինչ չէ կատարւում։

¹⁾ «Կապոյտ գուլպա» Խւրոպացում անւանում են ուսումնական ձևացող կանանց։

Գործերս իբր թէ քիչ էին, Ելիզաւետա Բօգդանօվսան էլ բարեգործական մասնաժողովների քարտուղարութիւնը դրեց վզիս:

— Դու էլ բան չունես, այդ անզգամի ձեռն ես տւել սանձդ. Հօ' գիտես, որ երեսին ամօթի նշոց չը կայ, զայրացած սկսեց խօսել Սահառունին:

— Ես այդպիսի կարծիք չունեմ նորա մասին...

— Խնչպէս թէ. միթէ՞ քո կարծիքով անսամթութիւն չէ, որ որ մի հայ կին բան ու գործ է դարձրել աջ ու ձախ զրպարտել, հայշնել հայերին, մինչդեռ նա՝ ընդհակառակը՝ պէտք է իւր պարտականութիւնը համարէր որքան կարելի է փարատել իւր շրջանի հասարակութեան մէջ մեր դէմ տիրող կանխակալ կարծիքները: Մենք բոլորս աշխատում ենք որ բոլորն էլ կասկածով վերաբերւին նորան, իսկ դու...

— Եատ բան կարողացանք անել, չ՞։ Հօ էլի կանանց մանկավարժական մասնաժողովի ամենագործունեայ անդամը նա է։

— Որովհետեւ գիտի, որ այդ միջոցով ամենից հեշտ է արիստօկրատների շրջանը նորա համակրութիւնը վայելել:

— Իսկ այն թէ ով է եղել քարտուղարը, ե'ս թէ Սարկոսը, Կիրակոսը, ի՞նչ նշանակութիւն ունի, մէկ չ՞։ Բացի այդ՝ Ելիզաւետա Բօգդանօվսան ացնքան էլ վատ կին չէ, որքան դու ես կարծում: Զուր ես, եղբայր, մեզնում գաղափարական ազնւութիւն փնտրում: Մեր հայերիս ճակատին գրած է, որ պէտք է չարչարանքով մեզ համար կեանքում ճանապարհ բանանք ու շատ անգամ՝ ակամայ՝ խորամանկութիւն գործ դնենք պատահած արգելքներին յաղթելու: Ես էլ գիտեմ, որ այդ շատ ցաւալի բան է, բայց ինչ արած, եղբայր, աշխարհն այդպիս է, մի մարդ հօ չի կարող բոլորի դէմ գնալ:

— Հա, ի հարկէ, այդ սկզբունքով որ դատելու լինենք, ամեն բանի վերայ պէտք է թեթև նայենք: Ար այդպէս է էլ ինչո՞ւ ենք, ասա ինչդրեմ, աշխատում ուսում տալ, կրթել ջահէլներին, դառն ծիծաղով պատասխանեց Սահառունին:

— Խօսքերդ շատ քաղցր են հնչում, Գէորգ, բայց շատ հետաքրքրական է, թէ արգեօք էլի այդ շարականները կերպելիր ու արհամարհանքով կը վերաբերւէիր պետական ծառայութեան, եթէ՝

բան է՝ զրկւելիր կալւածներիցդ սոսացւող տարեկան երկու հազար բարբու արդիւնքից:

Սահառունին ընկերներից շատ էր լսել այդ տեսակ նկատողութիւններ, արհամարհանքով նայեց Ամիրանօվին ու աւելի լաւ համարեց լուել:

—Այնպիսի սքանչելի երեկոյ է, պարոններ, որ մեղք է տանը նստելլը, լսեց տիկինների ձայնը:

—Ուրեմն գնանք ման դալու, վճռեցին ամենքը և բոլորը միասին տանից դուրս եկան:

—Հեղիկ, գու Գէօրգի թեւն անցիր, իսկ ես քո մարդու, մի լաւ սիրաքստիկ լինենք ով աւելի շնորհք ունի:

—Դուք, Եկատերինա Խւանօվլա, մեռելին էլ տեղիցը կը շարժէք, կենդանութիւն կը ուաք. վերաց բերեց Ամիրանօվը:

—Դուք, կարծեմ, մարդուս հետ խօսում էիք Միհրանօվայի մասին: Մարդս ասում է, որ նա շատ խելօք ու եռանդոտ կին է և ուզում է ինձ նորա հետ մօտ ծանօթացնել, ճոնակարհին դիմեց Հեղինէն Սահառունան:

—Հա՛, ճիշդ է, նա շատ եռանդոտ կին է ու յիմար էլ չէ, հեղնօրէն պատասխանեց Սահառունին, բայց վախենալով, թէ չը լինի Միհրանօվան մարդ ու կնկայ մէջ կուապատճառ դառնայ, խօսքը կոտորը զցեց:

Երկու երեք անհետաքրքրական նախադասութիւններից յետոյ Հեղինէն ասաց:

—Զարմանալի է, Գէօրգի Ալեքսանդրօվիչ, դուք երկար ժամանակ արտասահմանումն էք եղել ու ոչինչ չէք սպասմում այնտեղի մասին:

Հեղինէն թւեց, թէ իւր վերջին խօսքերը անախորժ տպաւոյնութիւն գործեցին Սահառունու վերաց. նա տարակուսած շարունակեց:

—Կարելի է ձեր արտասահմանում անցրած ժամանակը անախորժ յիշողութիւնների հետ է կապուած. շատ ցաւում եմ, որ սկսեցի իւսել արտասահմանի մասին:

—Ո՛չ, ո՛չ, տիկին Հեղինէ, աշխատեավ ընդհատեց նորա խօսքը Սահառունին: Ոչ մի տեղ ես այնպէս բախտաւոր չեմ եղել, ինչպէս արտասահմանում: Չը կարծէք թէ ես միշտ հիմիկ այսպէս մռացլ եմ

եղել։ Ոչ, սիրտս այն ժամանակ լիքն էր ուրախ զգացմունքներով։ Մենք ամենքս, տիկին Հեղինէ, օտարութեան մէջ աշխատելիս, մեծ յոյսեր ենք տածում վերջը մեր հայրենիքի համար օգտակար զաւակ լինելու։ մարդ յօյսով է ապրում, հոգին փառաւորւում է, սիրալ միշտ լիքն է լինում քաղցր զգացմունքով, որ չի կարելի խօսքով նկարագրել։ Այս, մենք ամենքս էլ այդ ժամանակ, այդ բարոյապէս հարուստ ժամանակներս, զգում էինք, որ բարի և ազնիւ ենք։ Այդ խօսքերից յետոյ Սահառունին մտախոհ գլուխը քաշ զցեց։ Զը նայելով որ նա իրան զսպում էր, բայց էլի մի թեթև հոգոց դուրս թռաւ նորա կրծքից։

Հեղինէն այդ նկատեց ու մտերմաքար նայեց Սահառունուն։

— Յետոյ երեխ հիասթափւեցիք. մեղաւորն ո՞վ է։

— Բացի ինձանից ես ոչ ոքի չեմ մեղագրում։ շատ բան որ յետոյ կատարեց, ես պէտք է առաջուց գուշակէի. դորա մասին, տիկին Հեղինէ, մենք մի օր կը խօսենք երբ որ յարմար ժամանակ լինի։ Երկար նոքա լուռ գնում էին, վերջապէս Հեղինէն նորից խօսք բաց արեց։

— Որքան նկատում եմ, Գէօրգի Ալեքսանդրօվիչ, դուք ձեր վերաբերմամբ շատ խստապահանջ էք։ Ես բառ առ բառ լիշում եմ այն խօսքերը, որ դուք մարդուս, երբ որ նա ձեզ խորհուրդ էր տալիս ծառայութեան մտնելու, — աամեն մարդ պէտք է քննական կերպով վերաբերւի ինքն իրան, իւր իմացածին, իւր ոյժերին, հաստոտ իմանաց թէ ինքն ինչ կարող է անել և յետոյ մի բանական նպատակ որոշելով զիմի նորան, աշխատի իրագործելու։ Զեր այդ խօսքերը այնպիսի խոր ապաւորութիւն գործեցին իմ վերայ, որ մինչև այժմ էլ չեմ կարողանում մոռանալ։

Սահառունին զարմանքով ու երախտագիտութեամբ նայեց Հեղինէին և մտածեց, «ահա թէ ում սրտումն են արձագանք գտնում իմ խօսքերլու։

— Նատ շնորհակալ եմ, տիկին Հեղինէ, ձեր համակրութիւնը ինձ երկար ժամանակ սիրու կը տայ գործելու, ասաց նա ժպտալով և մուերմաքար մեկնեց նորա ձեռքը։

— Վազը եկէք մեզ մօտ ճաշելու, Գէօրգի Ալեքսանդրօվիչ, կը թերթիւնք նոր գրքերը, ինդրեց Հեղինէն մնաս բարեւ անելիս, մա-

նաւանդ որ դուք վաղը մենակ էք մնալու, Կատեան ամբողջ օրով գնալու է իւր սանամօր մօտ:

— Մեծ ուրախութեամբ:

— Հազիր ձեր բնագիտութեան դասերն էլ կը սկսէք, իսկ ես ու Միհայիլ Պետրօվիչն էլ ամիսը մի անգամ ձեզ կը քննենք, ուրախ ուրախ ասաց Կատարինէն:

— Իսկ երեկոյեան բոլորս միասին կ'երթանք նւադահանդէս. բարեգործական մասնաժողովն է սարքում իւր ուսումնարանների օգտին, ես արդէն ձեզ համար տոմսակներ առել եմ. համաձայն էք, առաջարկեց Ամիրանօվը:

— Նատ լաւ, շատ լաւ, — միաձայն բացականչեցին Հեղինէն ու Կատարինէն:

VI

Սահառունին, քսան տարեկան հասակում աւարտելով ուսումը Խօսկրայի համալսարանի բնագիտական բաժնում կանգիտասի ասոիծանով, զնաց արտասահման իւր մասնագիտութեան մէջ կատարել լազործւելու համար: Չորս տարի արտասահմանում մնալով, նա լուրջ և բազմակիումանի կերպով ուսումնասիրեց բնական գիտութիւնները. վերջին տարին նա զլիսաւորապէս պարապում էր գործադրական քիմիայով:

Մանուկ հասակում հեռացած լինելով Կովկասից նա երազի նման էր յիշում իւր հայրենիքը, բայց նորա սրտում մնացել էր և տարէց տարի զօրանում էր ջերմ սէր դէսկի իւր հայրենակիցները: Երբ որ Սահառունին վերագարձաւ իւր հայրենի Ե. քաղաքը, Անդրկովկասի նահանգական քաղաքներից մէկը, նորա սիրու լի էր ազնիւ ձգտումներով. նա ուզում էր օգտակար լինել իւր հայրենիքին, գործադրել իւր ձեռք բերած գիտութիւնը և քաղել իւր երկարամեայ աշխատանքների պատովը: Առաջին ամիսը ամբողջ նա նւիրեց մօրը, քոյրերին ու եղբայրներին, որոնք մինչև նորա վերադրձը նորան տեսնելու յոյսով էին միայն ապրում: Ինքն էլ շատ էր կարօտել նրանց, մանաւանդ մօրը, որի բարի պատկերը խորը տպաւորւել էր երեխայի յիշողութեան մէջ: Հօրական տունը զարթեցրեց

երիտասարդի երեւակացութեան մէջ մանկութեան տպաւորութիւնները. լիշեց նա թէ ինչպէս մայրը տովորեցնում էր իւր երեխաններին, ոչ թէ չոր ու ցամաք խրառներով, այլ իւր անձի օրինակով, կարեկցել, օգնել աղքատներին, ինչպէս ահա այս սենեակում լնդունում էր չքաւորներին, իւր ձեւով կարում—կարկտում աղքատ երեխաների շորերը և տօն օրերին իրան տալիս նոր շորեր, որ տանի նոցաբնակարանները. որքան քաղցր զգացմունքով էր յուզում նորասիրով այդ ժամանակ:

Յիշեց այդ բոլորը Սահառունին և սիրով նայեց իւր՝ թէւ բոլորովին անուսումն, բաց բարեհոգի և խելացի մօրը:

Խակ նա, այդքան տարւաց բացակացութիւնից յետոյ վերագրած տեսնելով, ուրախութիւնից քիչ էր մնում դժւի. պարծենում էր իւր որդովը, ինչպէս բոլոր մայրերը, և տանում էր իւր աչքի լոյսին բոլոր ազգականների ու ծանօթների մօտ՝ ցոյց տալու համար:

Ե. քաղաքի արտաքին տեսքը շատ անախործ տպաւորութիւն գործեց երիտասարդի վերայ, — ծուռ ու մուռ, ցեխոտ, անանցանելի փողոցներ, անշնորհք, անճոռնի շինութիւններ, չորս կողմը կեղտ ու գարշահոաւթիւն, աւողջապահութիւն ասած բանի մասին լսած էլ ըլ կան: Ֆի ամիս չ'անցած նա համոզեց, որ Ե.-ի ներքինն էլ լիովին համապատասխանում է արտաքինին: Հասարակութիւնը կազմում էին բնիկ հայերն ու թուրքերը և՝ մասամբ եկոր՝ ծառայողների դասակարգը: Բնիկ ժողովուրդը, ստրկաբար հնազանդելով հին արտաթներին, բոլորովին նահապետական կեանք էր վարում: Պառաւ կանայք գեռ բերանները կասում էին, խակ ջահելները հազարից մի մի անգամ էր պատահում, որ տանից դուրս գային, այն էլ օտար մարդու պատահելիս շտապով երեսները դարձնում էին պատին: Հրաւէրներին, խնջոքներին միշտ կանայք տղամարդիկներից առանձին էին նստում, ուտում: մի խօսքով բացի մի քանի ընտանիքներից, որոնք անվերջ բամբասանքների առարկաց էին դարձել, բոլոր հայ կանայք փակւած կեանք էին վարում:

Խուլ գաւառական անկիւններում մարդիկ միշտ պատահելով ու աւեսնելով իրար, իմանալով միմեանց կենցաղավարութեան բոլոր մանրամասնութիւնները, միմեանցից զգւած են լինում, և այդ պատ-

ճառով ամեն մի նոր անձնաւորութիւն դարձնում է իւր վերաց զաւառացիների ուշալրութիւնը:

Սահաւունին ամեն կողմից հրաւերներ էր ստանում, ամենքն էլ ցանկանում էին մի որ և է բանով փայլել նորա առաջ: Նա ամեն տեղ գնում էր, բայց աւելի զիտում ու լսում էր քան խօսում: Սահաւունու համար զժւար չէր նկատել, որ Ե.-ի հասարակութեան կրթւած կուլած շրջանը զբաղւած է միայն պատաւական բամբասանքներով, անվերջանալի թղթախաղով՝ կոսկէկանոցից սկսած մինչև ազարու խաղերը՝ և աստիճանաւորների զատարկ կոխներով:

Սահաւունու Ե. գալու օրից կէս տարի էր անցել: Նա շատ էր ուզում մի որ և է գործ գտնել, բայց գեռ ոչ մի գործ չէր գտնեում: Ասենք Սահաւունին բոլորովին պարապ չէր մնում: Նա այնքան ժամանակ հայրենիքից հեռու էր ապրել, որ այժմ զիտելու և ուսումնաուիրելու շատ բան ունէր: բացի այդ՝ աշխատում էր ծանօթանալ ժողովրդի զրութեան հետ, իմանալ ինչով կարող է օգնել նորան, և գէպքը եկած տեղը օգնում էր ուրախութեամբ:

Սահաւունին բարեկամացաւ քաղաքացին պատգամաւորների հետ և աշխատում էր նրանց վերաց ազգել հասկացնելով իրանց հասարակական պարտականութիւնները քաղաքի վերաբերմամբ, բայց նա շուտով համոզւեց, որ նոքա խսկական մարդիկ չեն այլ մեքենաներ: Տեղացին վարչութիւննը սկսեց նայել Սահաւունու վերաց իրեր և անվսաահելի անձնաւորութեան վերաց, որ իրը թէ վայր է գցում իւր նշանակութիւնը ժողովրդի աչքում և քաղաքավարի կերպով այնպէս արեց, որ նա շը կարողանայ խառնել քաղաքացին գործերին:

Այդ միջոցին Սահաւունին ծանօթացաւ Աբգարեանների ընտանիքի հետ. — մի այրի մայր և մի աղջիկ էին: Տիկին Աբգարեանը ամուսնու մահից յետոյ իւր ձեռքն առնելով կալւածների, իրանց եկամուտների միակ աղբիւրի, կառավարութիւնը, սոխալւած էր միշտ Ե.-ում ասլրել, թէև աղջիկը շատ էր խնդրում նորան, որ Թիֆլիս գնան ապրելու: Աբգարեանների ընտանիքը իւր զաղափարներով, իւր կրթութեամբ Սահաւունուն՝ անապատում պատահած՝ օաղիս թւաց, իսկ սասմնութ տարեկան սիրուն աղջիկը՝ մի շուշան այդ օաղիսում: Օրիորդի նորափիթիթ զեղեցկութիւնը մարդու խելք էր տանում: Նորա շարժուն դէմքի ամեն մի զիծը անսեղութիւն ու աշխոցք էր

արտայալտում։ Սահառունուն որ թողնէին, ամեն երեկոյ հիւր կերթար Աբգարեանների մօտ, բայց մայրը չէր թողնում։

— Իմացի՛ր, Գէորգ, ասում էր նա համոզիչ եղանակով, եթէ ամեն օր գնաս գաս նոցա տունը ու յետոց չը պասակես աղջկայ վերայ, անունդ կը կոտրւի քաղաքում և էլ քեզ ոչոք աղջիկ չի տար։

Սահառունին աւելի ևս մօտ ծանօթացաւ և բարեկամացաւ տիկին Աբգարեանի հետ, երբ որ երկուառվ սկսեցին աշխատել օրիորդաց դպրոց հիմնել և. քաղաքում։

— Եսուսո՞վ կը բացւի մեր ուսումնարանը, հարցրեց մի օր տիկին Աբգարեանը երեկոյեան թէի ժամանակ։

— Պէտք է յուսալ, որովհետև քաղաքացիներից շատերը համարեա թէ համոզւել են, որ օրիորդաց ուսումնարանը անհրաժեշտ բան է։

— Ես էլ, Գէորգի Ալեքսանդրովիչ, աշակերտուհիներին երաժշտութիւն ու երգեցողութիւն գաս կը տամ, ուրախ ուրախ առաջարկեց տիկին Աբգարեանի աղջիկը։

— Ափառո, օրիորդ, որ այդ առ ժամանակ աւելորդ կը լինի մեր աշակերտուհիների համար, ծիծաղելով ասեց Սահառունին Դուք հայերէն ու ուստերէն կարդալ — գրել կը սովորեցնէք, համաձայն էք։

— Լա՛ւ։

— Ես համոզւած եմ, որ ձեզ պէս վարժուհու ձեռքի տակ մեր աշակերտուհիները շատ առաջ կերթան։

— Մի՞թէ, — Կատարինէն ձը կարողացաւ սլահել ծիծաղը և փախաւ սենեակից։

— Մի շաբաթ յետոց քաղաքացիներից տասը — տասնհինգ հոգի, որոնք զարդացմամբ բարձր էին ամբոխից, Սահառունու երկար ու բարակ յորդորներից յետոց վերջապէս յանձն առան որոշեալ գումար նւիրել օրիորդաց դպրոց հիմնելու համար։

Սահառունու ուրախութեանը շափ ձը կար։ Ժողովը վերջանալուց յետոց նա ուրախ զւարժ դուրս եկաւ և զնաց փոխնահանգապետ Միհրանօվի տունը։ Այնուեղ այդ երեկոյ խնջոցք էր ի պատիւթիվլիսից եկած երկու բարձրաստիճան պաշտօնեաների։

— Ասէք ինդիրեմ, Գէորգի Ալեքսանդրովիչ, դեռ ձեռք չեք

վերցրել օրիորդաց զպրոց հիմնելու մտքից, — հարցրեց նորան տանտիկինը, Ելիզաւետա Բօգդանօվնան։ Նա նստած էր նորեկ երկու հիւրիրի մէջ տեղը և շողբքորթաբար նայում էր նրանց երեսին և առ չի լինի մի ուրիշ բանի համար դործ գնել փողերը. այնպիսի մի բանի համար, որ աւելի օգտակար լինի քաղաքին։

— Ի՞նչ բանի համար, ասէք խնդրեմ, բարկացած ընդհատեց նորա խօսքը Սահառունին։

— Բան չունե՞ս, Գէորգ, ասեց նորան Պետրոսեանցը, որ նորա հին ընկերներիցն էր, ինչ ես երկար ու բարակ խօսում։ Այդ խօսքերը արտասանելիս Պետրոսեանի տգեղ, թուխ և սև մօրոքով պատած դէմքը տժգոհ արտապատութիւն էր կրում։

Պետրոսեանցը պատանեկան հասակից արդէն վառվում էր սիրով գէպի իւր ազգը, տանջւում էր նորա ցաւերով. . . Նա հասարակ վաճառական տղայ էր և դժւարութեամբ էր կարողացել համաձայնեցնել հօրը, որ իրան թոյլ տայ բարձրագոյն ուսում ստանալու։ Նա քսանչորս աարեկան էր երբ որ համալսարան մտաւ։ Զքաւորութիւնը և ոռուսերին վաստիմանալլ սկզբում խանգարում էին նորա պարապմունքներին, բայց տոկուն աշխատասիրութեան, հաստատակամութեան և ընկերների նիւթական օգնութեան շնորհիւնա յաղթեց բոլոր արգելքները և վերադարձաւ հայրենիք բնական գիտութիւնների կանդիդատի աստիճանով։

Երկար ժամանակ զուր աշխատելով իւր մասնագիտութեան համապատասխան մի պարապմունք գտնելու, նա ակամայ ծառացութեան մտաւ վարչական բաժնսւմ։ Թէև Պետրոսեանը գոհ էր իւր ստացած չնին ոռօճիկից, բայց տժգոհ էր իւր զրութիւնից, որով հետեւ վարչութեան մէջ ծառայելլ նորա սրառովը չէր։ Բախտը Պետրոսեանին երես չէր տւել. նորա ամբողջ կեանքը մի անընդհատ կոխւ էր եղել կեանքի անբարեյածող պայմանների հետ։ Այդ անընդհատ կոխւը Պետրոսեանին զիւրազրգիս և զաժան բնաւորութեան տէր մարդ էր դարձրել, այնպէս որ շատերին նա անհամակրելի էր թւում։ Բայց Սահառունին Պետրոսեանին երեխայ ժամանակւանից էր ճանաչում և անկեղծ սիրում էր նորան նորա ազնիւ. և ամեն մի լուգործի անձնւիրաբար ծառայելու պատրաստ սրախ համար։

— Զէ, ճիշտ ես ասում, Ցիգրան, խօսելով, զիմելով բան չի

դուրս գայ: Պէտք է աշխատել հանել մեր ժողովուրդը իւր այժմեան վիճակից, հնարաւորութիւն տալ նորան կրթւելու, զարգանալու. մեզ ուսումնարաններ են պէտք, ուսումնարաններ՝, իսկ այժմ մենք համարեա չ'ունինք ուսումնարաններ: Տւէք ժողովրդին ուսումնարաններ:

—Ասելլ հեշտ է, բանը՝ անելն է, դառնութեամբ արտասանեց Պետրոսեանը և ամբողջ մարմնով կուչ եկաւ:

Սահառունին մտածմունքի մէջ ընկաւ:

Որքան աւելի էր ծանօթանում նա Եւ-ի հասարակութեան հետ, այնքան աւելի էր զգում որ իւր և ացդ հասարակութեան մէջ ոչինչ բարոյական կապ չը կայ, որ լնդհակառակը բոլորը սկսել են քաշւել իրանից. բաւական է մի բան ասի, մի բանի վրայ ուրախանաց կամ թէ մի կարծիք յայտնի, ամեն կողմից հազար ու մեկ դասողութիւն կը տան, կազաւաղեն տասձը, կը բամբասեն: Ճիշտ է, նա առաջ էլ գիտէր, որ իւր հայրենիքը թաղւած է տգիտութեան խաւարի մէջ, բայց այդքան չէր կարծում: Ծանօթներն ու ազգականները հանգիստ չեն աալիս Սահառունուն, հարց ու փորձ էին անում թէ ինչ ծառացութեան է մտնելու. նա միշտ միւնոյն էր պատասխանում,— թէ կը նայեմ, կը ծանօթանամ, կը տեսնեմ ինչ կայ, ինչ չը կայ, երեխ մասնագիտութեանս համապատասխան մի գործ կը դոնեմ,— բայց ահա երկրորդ տարին է, ինչ Եւ-ումն է և դեռ ոչ մի հաստատ գործի չի կպել: Քաղաքացիք սկսել էին նորա վերայ ծիծաղել, քիթը շատ է բարձրացրել, փիլիսոփայ է եկել մեր զլիսին. այս արտասահմանի ուսումը խելքից զցում է մեր երիտասարդներին, որ այսուեղ մնացին ու գրիծով պարապէին, չէր լինի. պէտք է գնացին պարապ քաշ գալ ու զաւգակութիւն անել սովորէին: Ացգիսի խօսքեր շատ անգամ Սահառունու ականջին էլ էին հասնում, որովհետեւ բաւական ազատ, համարձակ էին խօսում, մանաւանդ մի դէպքից յետոյ.—Սահառունուն մի շատ շահաւետ պաշտօն առաջարկեցին ի պատիւ նորա հօրեղբօր, որ բաղաքում մեծ ազգեցութիւն ունէր. Սահառունին հրաժարւեց. բոլորը մնացին ապշած և աւելի սկսեցին ծիծաղել նորա վերայ:

Սահառունին ուշ չէր գարձնի այդ ասէկուէներին, բայց մօր թախանձաննքն ու լացը հանգիստ չեն տալիս նորան: Մայրը և իւր

աեգրը չէին կարողանում հասկանալ, թէ ինչ է ուզում Սահառունին, ինչու է հրաժարում այդպիսի բախտից, որ հազարից մի անգամ է մարդու առաջը գալիս:

Սահառունին բոլորովին էլ պարագ չէր մնում. պաշտօնից գուրս էլ մարդ շատ գործ կարող է գտնել կատարելու: Երկու ամիս էր ինչ նա իրան նւիրել էր մի գործի, որ համապատասխանում էր իւր գաղափարներին: Մի օր գործով պարագելուց նա սաստիկ յոդնածու տիտուր տուն եկաւ ու տեսաւ որ մայրը աղջիկներին ու փեսաներին զլիսին հաւաքած լաց ու շիւանը զրել է:

—Ի՞նչ է պատահել, մայրիկ, հարցրեց նա սրտացաւթեամբ:

—Ել ինչ պէտք է պատահի, ուր գնում եմ, քո վատն են խօսում. իշխանները, աղաները հօ կատաղած են քո դէմ. ինչ բան ունես նրանց հետ, որդիս, ինչու ես նրանց հակառակ գնում:

Մայրիկ չան, գուռ գիտես, որ բէգերից մէկը ուզում է խեղճ գիւղացիներից խել հօրական, պատական նրանց պատկանող հողերը. ուզում է հարիւրաւոր ընտանիքներ կտոր հացից զրկել: Նրանք էլ ինձ են դիմում, որ իրանց պաշտպանեմ: Ի՞նչ անէի, ասէի գնացէք ինչ անում էք արէք, իմ բանս չի. Թողնէի՞, որ հարիւրաւոր խեղճ մարդիկ գոնէ գուռ լնկնէին:

—Գիտեմ, որդիս, այդ վաղուցւայ վէճ է, քանի տարի է գիւղացիք դատարանների շէմքերը մաշում են. գործը այնպէս խճճել է, որ գուռ չէ, ով էլ զայ չի կարող արձակի, արի, հոգիս, ինձ լսի, ու ձեռք քաշի այդ գործից. ես գիտեմ, գիւղացիներին օգուտ չես տալու, միայն այն է, որ նրանց կը թշնամացնես մեր բոլոր աղքականների հետ:

—Ապահով եղիր, մայրիկ, ոչ ոքի իմ պատճառով վնաս չի հասնի: Թողէք այս գործը վերջացնեմ, էլ այսուեղ չեմ մնայ, կերթամ թուա:

Այդ միջոցին ներս մտաւ հօրեղբայրը. բոլորը պատկառանքով վեր կացան աեղներից:

Ակւեց լաց ու կոծ, չորս կողմից աղաչում պաղատում էին, բաց Սահառունին իւր վճիռը փոխելու միտք չ'ուներ. մնալ Եւում, ուր ոչ մի առողջ գաղափար համակրութիւն չէր կարողանում գտնել, նորս կարծիքով նշանակում էր ողջողջ գերեզման մտնել, որ միայն

խելացնորը կարող է անել։ Տեսնելով որ լաց ու կոծով բան չի դուրս դալիս, մայրն ու քողերը դարձրեցին իրանց աղերասալից աչքերը հօրեղբօր վերաց, իբրև տան մեծի վերաց, որ Սահառունու հօր մահից յետոց նորա ընտանիքի գլուխն ու պաշտպանն էր համարւում։ Նա հպարտ-հպարտ մի խիստ ակնարկ գցեց շուրջը, և ծալասալատիկ նստելով սկսեց մտահոգ կերպով յետ ու առաջ գցել ստթե, համ- րին խոշոր հատիկները։ Սենեակում տիրեց խորին լուսութիւն, բոլորը սպասում էին, թէ ինչ կ'ասի հօրեղբացը և հանդիսաւոր բուզէի ազդեցութեան տակ իրար երեսի էին նայում։ Հարցական հայեացքով։
Վերջապէս հօրեղբացը, համբիչը ձեռքին փաթաթելով և երեք անգամ հազարոց յետոց, աչքերը բարձրացրեց դէպի Սահառունին ու սկսեց խրատական եղանակով։

— Որդի, քեզ լաւ յայտնի է, որ մենք ոչինչ չենք խնայել քեզ լաւ ուսում տալու համար, զու գիտես, թէ մայրդ ինչ զժուարութեամբ քեզ թողեց զնաս արտասահման, ու զնալուցոր յետոց ինչպէս աչքը ջուր կտրած սպասում էր քեզ։ Որքան տանջւել, որքան զրկանք է քաշել նա քեզ համար, իսկ զու, ապերախտ, ինչով ես վարձատրում այդ բոլորը։ Ինչո՞ւ չես ուզում ծառայութեան մանել, ի՞նչ գործ պէտք է գտնես որ զրանից պատւառը լինի. ախր ինչո՞վ է վատ ծառայութիւնը։ Մի հարցնող լինի թէ այժմ գործիդ անունն ինչ է, — տուտուց-տուտուց բաներ ես բռնում, օր չի անցնի որ մի խայտարակութիւն դուրս չը գայ, հիմա էլ՝ այդ բաւական չէ՝ ուզում ես մօրդ թողնել ու գնալ. աֆֆերի՛մ, աֆֆերի՛մ։

— Գէորգ ջան, աչքիս լոյսը, խելքի եկ, մեզ մենակ մի թո՛ղ, լնդհատեց հօրեղբօր խօսքը մայրը՝ աղաչելով։

Որդին քնքշութեամբ բռնեց մօր երկու ձեռքը։

— Մայրիկ, հանգստացիր, հօ՛ չեմ կարող պարապ մնալ, ինչ անեմ որ այտոեղ ինձ յարմար գործ չեմ գտնում։ Դու հօ չես ուզի, որ քո որդին փողոցները չափելով ման գայ։ Մայրիկ ջան, ապահով կաց, ես ձեզ չեմ մոռանաց, շուտ-շուտ կը գամ տեսնելու։

— Տեսէք, տեսէք, ծիծալեց հօրեղբացը, այստեղ իրան յարմար գործ չը կա՛ց։ Այ լաւ տղաց. ինչի պէտք է մօրը, քոցերին բախտաւորացնել, նորանց համար փող աշխատել. հազիր ամբողջ տարին մեզ համար պարապ ման կը դանք ու քէփ կը քաշենք։

Ասա, Աստծու սիրուն, մինչև հիմա մի դրօշ բերել ես տուն. է, զրօշն էլ քեզ լինի. ինչո՞ւ էիր դալիս ու մեր տան խաղաղութիւնը վրդրվում է Սորա՞ համար էիր սովորում. արժէ՞ր այնքան փող վշաց-նել ուսմանդ վերայ, աւելի լաւ չէ՞ր լինի, որ ուրիշ բանի համար գործ դրած լինէինք այն փողերը:

Սահառունին յօնքերը կիաեց ու ուզում էր պատասխանել, բայց մացրը ձեռքով արեց, չը թողեց որ խօսի: Խեղճը աղերսալից հա-յեացքը ուղղած որդուն, աչքերով խնդրում էր որ լսի, և աշխա-տում էր փոխել անախորժ խօսակցութիւնը, բայց, չը նայելով նորա-զդոց վարմունքին, հօրեղբացը էլի նեղացաւ և վիրաւորւած ձայ-նով ասաց:

—Հա, ի հարկէ, հիմա այս տանը կամ ես կամ Կօշայ Ժամ-հարը, խօսքիս ո՞վ է ականջ զնողը, ո՞ւմ են պէտք իմ խորհուրդ-ներս: Այ հիմա ձեր տան գլուխը, մատնացոյց արեց նա Սահա-ռունուն:

Հօրեղբացը վեր կացաւ թախտի վրացից. բոլորը նորանից ա-ռաջ ոտքի էին կանգնել: Սահառունուն շատ չէր դուր գալիս այդ սովորութիւնը, բայց իմանալով որ այդ սովորութեան հակառակ վարւելով բոլորին կը վիրաւորի, ինքն էլ վեր կացաւ տեղիցը: Հօ-րեղբօրը այդ շատ զուր եկաւ և նորա դէմքի արտացայտութիւնը մի փոքր մեղմացաւ: Սահառունին լրու կանգնած շրթունքները ծա-մում էր: Նա գիտէր, որ ընտանիքի կրտսեր անդամների ներկայու-թեամբ ծերունուն հակաճառելլ տեղական սովորութեան համաձայն մեծ վիրաւորանք է համարւում: Բախտաւորապէս մի պատահական հանգամանք ազատեց նրան այդ դժւար դրութիւնից. եկան ասա-ցին, որ Պետրոսեանը եկել է, կանչում է, գործ ունի հետր:

Ընկերոջ հետ մօտ մի ժամ խօսելուց յետոյ Սահառունին առա-ջարկեց նորան միասին զնալ Աբգարեանների մօտ:

—Կարծէ՞ս, այսօր նրանց նշանակած օրն է:

—Հա:

—Որ այդպէս է, կարող ես մենակ գնալ. այսօր ևս դամ, ի՞նչ անեմ:

—Ինչպէս թէ ինչ անես: Օրիորդ Աբգարեանի նման հիմնալի աղջկայ հետ խօսելն էլ զւարծութիւն է. կասես, կը խօսես, երա-

ժշտութիւն կը լսես։ Գիտեմ, գիտեմ, ինչու չես ուզում գնալ, Տիգրան, վախենում ես սիրահարւես։

— Ե՛հ, եղբայր, ինչ կը սազի ինձ սիրահարւել, գրպանումն մկներ են պար գալիս, ասաց Պետրոսեանը տարօրինակ կերպով ծիծաղելով և սկսեց պատմել իւր ծառացութեան ժամանակ պատահած անհամութիւնների մասին։ Խմացած կաց, եղբայր, որ ինչ որ ուրիշները անպատիծ անում են, եթէ մենք անելու լինեինք արժան չեր նստի մեզ։

— Ե, ես այդ վազուց գիտեմ։

— Եթէ ուզում ես ծառացել, պէտք է ազատ, անկախ հայեացքներդ ծալես, գրպանդ դնես, այս է փորձւած մարդու խորհուրդը։

— Ապահով կաց, Տիգրան, ես ծառացութիւն մանողը չեմ։ Դու էլ վեր կաց միասին... Դնանք Թիֆլիս բախտ փնտրելու։

— Զէ, եղբայր, ես չեմ կարող հաստատ բանը թողնել անցայտի յետևից ընկնել։ ամբողջ ընտանիք կայ վզիս։

Նոքա խօսելով մօտեցան Արգարեանների տանը. խօսք ընկաւ Կատարինէի մասին։

— Գիտե՞ս, Գէորգ, նորա աչքը քո վերայ է։

Սահառունին կարմրեց, բայց և միւնոյն ժամանակը ուրախացաւ։ Նա ինքը գրաւուած էր օրիորդովք. մի քանի ժամանակւանից սկսած օրիորդը նորա զլսիցը էր դուրս գալիս։

Արգարեանների հիւրասենեակում հաւաքւած սակաւաթիւ հասարակութիւնը ուրախ ուրախ խօսում էր առաջիկաց ուխտագնացութեան մասին. շուառվ լինելու էր Սուրբ Գէորգի ուխտը։

— Դուք էլ ի հարկէ կը գնաք, զիմեց Կատարինէն Սահառունուն ու մինչեւ ականջատակերը կարմրեց։

— Այնտեղ կը տեսնէք Ե-ի ու ըրջակաց բոլոր գիւղերի հասած աղջիկներին, մէջ ընկաւ Միհրանօվան։

— Որոնց ծնողները տանում են ուխտաեղիները փեսացուներին ցոյց տալու համար, կարծես տօնվաճառ լինի, ընդհատեց զռքանչի խօսքը աստիճանաւորը։ Ազնակէս չի, Ելիզաւետա Բօգդանօվնա, այդ նպատակով են ուխտ զնում, չէ։ կարծեմ, ձեզանից եմ լսել այդ։

— Տիշտ է, միշտ ։ Խա'չը, մարդու զարմանքը գալիս է՝ տես-

նելով մեր ժողովուրդը. ո՞րքան վայրենի սովորութիւններ ունի, առաց Միհրանօվան և ինքնագոյն ժամանակով նայեց նահանգապետի կողմէ:

—Իսկ կատած բերանները տեսնելիս հօ՛ մարզու զգւանք է դալիս, աւելացրեց Միհրանօվացի աղջիկը դէմքը ծամածոելով:

—Ժամանակով այդ էլ կը փոխափի. ժողովրդի մէջ շատ խոր արմատներ են զցում սովորութիւնները. անկարելի բան է, որ դարերավ եղած սովորութիւնը մի օրում արմատախիլ լինի, բայց հետզհետէ անպատճառ կ'ոչնչանայ. ա՛յ, տեսնում էք, դուք հօ՛ չեք...

—Ես ձեզ մի անգամ ընդ միշա խնդրել եմ, Գէօրգի Ալեքսանդրովի՛, չարացած ընդհատեց խօսքը տիկինը, որ ինձ այստեղացիների շարքը չը դասէք, ինձ կրթել են կատարեալ:

—Ի հարիէ, ի հարիէ, վրայ բերեց Միհրանօվան, իմ աղջիկը ամենալաւ պանսիօններից մէկումն է կրթւել, ա՛յ, այս տարի էլ երկուսը կ'աւարտէն ինստիտուտը:

—Ախ, հազար ներողութիւն, որ անգիտակցաբար ձեզ վիրաւորեցի. այսուհետեւ էլ չեմ մոռանայ, որ դաւք եւրոպական ծագումից էք, հծուհեգնեց Սահառունին:

Միհրանօվացի աղջիկը կարմրատակած դուրս եկաւ սենեակից:

Սահառունին ու Կատարինէն իրար նայեցին համակրութիւն արտայալուող հայեացքով:

—Ես վաղուց է բախտ շեմ ունեցել լսելու ձեր գեղեցիկ նւագածութիւնը:

Օրիորդը այնպէս նայեց Սահառունուն, կարծես, աչքերով ասելիս լինէր՝ «ձեր ցանկութիւնը ինձ համար սուրբ է», և մօտեցաւ դաշնամուրին:

Կատարինէն շատ լնդրւնակ էր երաժշուութեան և հիանալի ածում էր. Սահառունին միշտ մէծ հաճութեամբ էր լսում նորա ածելը:

Արդէն կէս զիշերից անց էր, երբ որ նա մնաք բարեւ ասեց Աբգարեաններին. տրամադրութիւնը շատ լաւ էր:

Միւս օրը Սահառունին Փայէտօն նստացրեց Կատարինէին, նորա մօրը և իւր քրոջը, և ինքը ձի նստած հետները ճանապարհ ընկաւ. դէպի սուրբ Գէորգ:

Ֆայէտօնների, տարանտասների և՝ դոյնզզոյն գորգերով ու մետաքսեաց բարձերով, մութաքաներով զարդարւած՝ սալերի քարաւանը ձգւում էր ամբողջ ճանապարհի երկանութեամբ մինչև ուխտառեղին, որ մի սարի գաղաթին ծառերով շրջապատած գեղեցիկ վանք էր: Կառքերի կողքին ճանանին էին տալիս զուքւած ու զբահաւորւած իդիթները, նստած նժողովների վերաց, սրոնց արանքին զգոյշ շարժւում էին ոտաւորները:

Աւխտատեղին հասնելով Սահառունին մի բարձր տեղ ընտրեց, որտեղից ամբողջ տեսարանը լաւ երևում էր: Կատարինէն ծառին կռթնած, ուրախ դէմքով նացում էր տօնախմբութեանը: Հիանալի տեսարան էր: Ճիւառները ճիւարշաւ էին անում, մի տեղ պար բռնած երգում էին, մի քի: Հեռու գափի ու զուռնա էին ածում: ծափի ու ծիծաղը սար ու ձոր թնդացնում էին. աչքդ որ կողմը դարձնէիր ծաղկազարդ գալար կանաչի վերաց սպիտակ վրանների, վրանանման սարքած սալերի ու ծառերի սուերում քէփ անող աղամարդկանց ու դոյնզզոյն շորեր հագած պարող աղջիկների ու նորահարսերի խմբեր կը տեսնէիր: Սահառունին հիացած նացում էր օրիորդի կարմրած դէմքին, որ ոչ մի ժամանակ նորան այնքան դրաւիչ չէր թւել, ինչպէս այդ բարեկին:

— Դուք այսօր շատ ուրախ էք, օրիորդ, չէ:

— Եա՛տ, շա՛տ, բացականչեց նա, և վազեց մօր մօտ ու սկսեց նորան համբուրել: Խնչ լաւն ես այսօր, մայրիկ ջան:

Տեղը վերադառնալով Կատարինէն Սահառունու վերաց քնքոյշ հայեացք զցեց:

— Ես շատ եմ սիրում չորս կողմն լիութիւն ու գոյութիւն աեսնել: Գիտէք, Գէօրգի Ալեքսանդրօվիչ, ես որ թագուհի կամ մեծ հարստութեան տէր լինէի, ունեցածիս մեծ մասը ժողովրդական տօնախմբութիւնների վերաց գործ կը գնէի:

— Միթէ՞, ուրախ-ուրախ հարցրեց Սահառունին ու ծիծաղեց: Իսկ ես, օրիորդ, երկիւզածութեամբ կը խոնարհւէի այդպիսի մեծահոգի թագուհու առաջ:

— Դուք ծիծաղում էք, բայց տեսէք թէ ինչ հիանալի բան է: Խեղճերը բոլոր ցաւերն ու հոգսերը տանը թողած, զարգերը մոռացած, ուզում էն սրաննց ուրախանալ, քէփ անել: Խճ համար

այնքան էլ նշանակութիւն չունի, ես առանց այն էլ միշտ լաւ տրամադրութեան մէջ եմ, բայց խեղձերը...

Կատարինէի աչքերը հանդիպեցին Սահառունու աչքերին և նա կարմրեց: Նայելով օրիորդին Սահառունին զգում էր, որ սիրով լցւում է մի ինչ որ նոր, մինչև այդ ժամանակ նորան անծանօթքալցը զգացմունքով: Նա կարծես մոռացել էր կեանքի բոլոր դառնութիւնները. նորա ապագայ կեանքը աչմ աւելի հրապուրի: դայներով էր նկարւում նորա երեւակացութեան մէջ:

— Մայրիկ, մայրիկ, աղաղակեց յանկարծ Կատարինէն հեռուից տեսնելով մօրը, Գէօրգի Ալեքսանդրօվիչին են մի քիչ նախառիր, ծաղրում է ինձ:

— Ըստհակառակը, ինձ մեծ զւարճութիւն պատճառեց ձեր ասածը, այդպիսի ցանկութիւնները միշտ անարատ ու չերմ օրտից են բղխում: Իմ կարծիքը սիալ գուրս չ'եկաւ, գուք հիանալի աղջիկ էք: Սահառունին յափշտակութեամբ բռնեց Կատարինէի ձեռքը, բայց իսկոյն բաց թողեց: Երանի նորան, որ կարժանանայ ձեր սէրին:

Օրիորդը աչքերը քաշ զցեց:

— Խսչի՞ վրայ էք այգակս միաք անում, օրիորդ:

— Մտքովս անցնում է, թէ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք մեր քաղաքը եկած չը լինէիք, որովհետև ձեր գնալուց յետոյ սարսափելի տիտուր կը լինի, արագախօսելով և բոլորովին անսպասիլի կերպով արտասանեց Կատարինէն:

Վերջին խօսքերը նա հազիւ լսելի ձայնով ասաց ու սաստիկ կարմրելով սկսեց անթարթ նացել մօտ քառասուն քայլ հեռու վառւող կրակին:

— Ձեմ կարող ասել թէ որքան ուրախ եմ, օրիորդ, որ կարող եմ հաւատացած լինել, թէ իմ բացակայութիւնը ձեզ համար զզալի կը լինի, յուզւած սկսեց խօսել Սահառունին մի փոքր լուսութիւնից յետոյ: Իմ սիրոս էլ դժւարութեամբ է հաշուռում այն մտքի հետ, որ մենք պէտք է բաժանենք, եթէ...

Այդ բոպէին նրանց մօտեցաւ տիկին Աբգարեանն ու Սահառունու քոյրը. նրանք վեր կացան և բոլորը միասին գնացին դէպի խարոյիկը: Այդ կրակի վրայ նոյցա համար բօզբաշ, փլաւ ու խորոված էին պատրաստում: Ամեն տեղ խարոյիներ էին վառւում, ամեն տե-

զից երգի ձախն էր գալիս. Սահառունին հետաքրքրութեամբ ու ուրախ սրառվ ման էր գալիս՝ մի խմբից միւսը անցնելով:

Հաշի ժամանակ և երեկոյեան տուն վերադաւնալիս ամբողջ ճանապարհի ընթացքում Կատարինէն լուռ էր ու մտահոգ և խուսափում էր Սահառունու հայեացքից: Սահառունին հասկանաւմ էր օրիորդի հոգեկան վիճակը: Նա վազուց յափշտակւած էր օրիորդի գեղեցիկ զէմքով, անմեղ և վառվուոն բնաւորութեամբ. նորա սէրին արժանանալը նորան անհասանելի բախտաւորութիւն էր երեւում իւր Ե.-ում՝ քաշած տարի ու կէսւայ աքսորի մէջ: Էլ երկար ու բարակ չը մտածեց Սահառունին. յարմար առիթ էր, առաջարկութիւն արեց օրիորդին:

Սահառունու մայրը իրան վիրաւորւած էր զգում: Որդին ու հարսը զլխովը փարւան էին գալիս, բաց էլի նա երկար ժամանակ չէր կարողանում մոռանալ, որ իւր անդրանիկը առանց իւր խորհրդի ու աջակցութեան է կին ընտրել:

-- Տա՛յ Աստուած, այնքան ապրեմ, որ թուներիս տեսնեմ, ուրիսանամ, քիշ-քի: միիթարում էր նա ինքն իրան:

VII

Հարսանիքից մէկ-երկու ամիս յետոյ Սահառունին իւր կնոջ հետ գնաց Թ.-ս: Թ.-սում այդ ժամանակ երիտասարդութեան առաջաւոր մասը մէծ եռանդով նւիրել էր իրան ժողովրդի կրթութեան գործին: Ոգեւորւած երիտասարդները ծխական նոր-նոր գպրոցներ էին հիմնում և աշխատում էին բարեփոխել թեմական դպրանոցի վիճակը: Ժողովրդի կրթութեան գործը շատ մօտ էր Սահառունու սրտին. նա հոգով սրառվ անձնատուր եղաւ նորան:

Իայց պարապմունք գտնել անհրաժեշտ էր: Երկար ժամանակ յարմար գործ չը գտնելով, Սահառունին վճռեց մոնել ծառալյութեան մի տեղացի գրամատէրի մօտ, որ ուրիշների հետ համեմատելով գոնէ այն առաւելութիւնն ունէր, որ գործունեաց էր: Պարապելով արդիւնաբերութեան զանազան ճիւղերով և յաճախ գործ ունենալով թէ կառավարութեան և մասնաւոր մարդկանց հետ, դրամատէրը այդ գործերը Սահառունուն էր յանձնում վարելու, որ այդպիսով միջնոր-

զի զեր էր կատարում: Սահառունուն գուր չէր գալիս պաշտօնի անորոշութիւնը. նա չէր ընդունի այդ պաշտօնը, բայց դրամատէրը խոստացաւ նորան յանձնել շատ ձեւնուու պայմաններով իւր շուտով հիմնելիք գործարանի կառավարութիւնը: Թէև այդ գործունէութիւնը Սահառունու մասնագիտութիւնից գուրս էր, բայց նորա գործնական կողմը նորան բաւական ծանօթ էր և դորա համար նա հեշտ կարող էր ուսումնասիրել և տեսական կողմը, որով և սկսեց պարապել պաշտօնից ազատ ժամերին:

Միայն մի բան լաւ չէր. գործը պահանջում էր, որ Սահառունին մի տեղ չը մնայ նստած, այլ ճանապարհորդի, այնպէս որ նա շատ յաճախ ստիպւած էր լինում մ.նակ թողնել կնոջը:

Կատարինէն մոտաւ իւր սանամօր իշխանուհի Ռիկօձէի թեկի տակ, որ տիկին Արգարեանի մօտ բարեկամն էր: Նա անզաւակ լինելով սէրը զցեց Կատարինէի վերայ, Կատարինէն էլ նորան սիրեց: Իշխանուհին չափից գուրս բարի սիրո ունէր, բայց մի քիչ թեթեւամիտ էր: Արձակ կետնք վարելով՝ իշխանուհին գնացող-եկող շատ ունէր, ինքն էլ տանը քիչ էր նստում. ամեն օր կամ հիւրեր էր ունենում կամ ինքն էր հիւր գնում կամ թէ թատրօն, երեկոյթ, զբունելու էր գնում: Խւր սանիկին նա մասնակից էր անում բոլոր իւր զւարձութիւններին, հետեւ տանում էր ամեն տեղ:

—Կատեա, զու օր գալիս ես՝ տունս կենդանութիւն է ստանում: քեզ պէս սիրուն ու զրաւիչ կին քաղաքումը քիչ կը գտնէի: Հիմա քո այն ժամանակն է, որ միշտ պէտք է քեզ անես, ուրախանաւ: Նուտով բոլոր երեկոյթների ու պարահանդէսների թագուհին կը դառնաս, —լսում էր անդադար նորահարսը և քիշ-քիչ սկսում էր ենթարկել այդ զովասանական խօսքերի ազգեցութեան: Երբ որ մարդը վերագառնում էր քաղաք, նա փաթաթւում էր զզին և սկսում էր յափշտակութեամբ պատմել իւր վայելած զւարձութիւնների մասին:

—Գէորդ, իշ սանամայրը հրաշալի, պաշտելի կին է, յաճախ ասում էր նա մարդուն:

Սահառունին սկզբում ուրախ էր, որ իշխանուհի Ռիկօձէն չէ թողնում, որ իւր բացակայութեան ժամանակ Կատարինէն տիրի, ձանձրանայ, բայց երբ նկատեց, որ նա շատ է դրավելում զւարձութիւնների մասին:

թիւններով, սկսեց ամեն միջոց զործ զնել, որ գատարկ, անխորհուրդ կեանք չը վարի: Նա աշխատում էր հետաքրքրեցնել կնոջը լուրջ խնդիրներով, ընտրում էր նորա կարգալու համար ժողովրդականացրած զրւածքներ, երեկոյիանները կամ հետը նորան թատրօն էր տանում կամ թէ հրաւիրում էր իւր տունը իւր ամենառախ լնկերներին, մի խօսքով՝ երևում էր, որ նա ամեն ջանք զործ էր զնում, տանու կեանքը կնոջ համար դուրեկան դարձնելու: Քանի որ մարդը հետն էր լինսւմ Կատարինէն բոլորովին գոհ էր լինում այդ տեսակ կեանքից, բայց հենց որ մարդը քաղաքից հեռանում էր նա էլի լնկնում էր գւարձութիւնների յետելից:

Կնոջ վարած կեանքը այնպիսի ծախսերի տակ էր դցում Սահառունուն, որ նորա կարողութիւնից վեր էր: Սահառունին պարտք անել չէր սիրում, բայց ստիպւած էր պարտք առնել կնոջ պահանջները կատարելու համար, յոյս ունենալով շուտով վճարելու իւր ապազայ սկաշտօնից ստանալիք ոսմիկից, իսկ երբ որ շաքարի գործարանը գլուխ չ'եկա, նա սաստիկ մտահոգութեան մէջ լնկաւ և սկսեց իրան աւելի յարմար ու ձեռնոտու գործ փնտրել: Դրամատէրը նկատելով ացդ և չ'ուզենալով զրկւել Սահառունու պէս աշխատաւոր, լնդրունակ և բարեխիղճ օգնականից խնդրեց որ դուրս չը գայ իւր մօտից, իւր բոլոր գործերի հաւատարմատար շինեց նորան և ոսմիկը առաջւանից երկու անգամ աւելցրից: Սահառունին ստիպւած էր լնդրունելու նորա առաջարկութիւնը, որովհետեւ ուրիշ գործ գոնելու յոյս չը կար: Ստանձնելով իւր նոր պաշտօնը նա ուզէր չ'ուզէր պէտք է երևան հանէր առաջւայ կառավարիների անբարեխիղճ գործափարութիւնը, որոնք զանազան միջոցներով կարելիս էին եղել բանւորների փողերը իրանց զրպանը լցնելու համար: Սահառունու ցանկութիւնն էր միայն բարեխզճութեամբ վերաբերւել իւր պաշտօնին, բայց նա իւր բարեխզճութեամբ թշնամիներ վաստակեց:

— Եհ, Գեորգ, ես չի ասում, որ քո այդ նորամձեւթիւնների շնորհիւ վաստամարդի կը լինես ու շատերին կը զրգուես քո դէմ, ասաց նորան մի օր վարդցում նորա լնկելներից մէկը՝ Ասունին:

Ասունին տանու մարդու պէս էր լնդրունուտծ Սահառունիների մօտ: Նա ուսանողական չորս տարւաց կեանքի լնթացքում Սահառունու հետ ապրելով բարոյադէո ենթարկւել էր նորա ազդեցու-

թեանը և այժմ էլ ացդ ազդեցութեան տակ էր, թէև ինքը այդ չէր նկատում: Նորա ամենաբնորոշ յառկութիւնը նորա անշահասէր կամակատարութիւնն էր ու անհոգ ուրախութիւնը: Նա սիրում էր նոր նոր տպաւորութիւններ, իսկ այնքան դրական խելք չուներ, որ այդ տպաւորութիւնները խոր հետք թողնէին մէջը:

Աւարտելով ուսումը համալսարանի իրաւաբանական բաժնում, նա իրեւ Կովկասեան թօշակաւոր իսկոցն տեղ ստացաւ դատաստանական մասում Կովկասի մի նոհանդում, որտեղից մի տարի անցած նորան փոխադրեցին Թ-ս:

— Ճիշտ, Գէորգ, զարդ չունեիր, զլիսիզ դարդ շինեցիր, կարեկցաբար կրկնեց Ասունին փոքր ինչ լսելուց յետոց:

— Այդպիսի բաներից, Ազեքսանդր, ես չեմ վախենում, զուսա դործը յաջող գնայ:

Անցաւ մի ամիս, երկու ամիս, Սահառունին տեսաւ, որ գործը առաջ չի դնում, իսկ ինքը օր օրի վերայ աւելի ու աւելի թշնամիներ է վաստակում իւր պաշտօնակիցների միջից:

Սահառունին օրէց օր աւելի ու աւելի հաստատ էր համոզւում, որ չարիքը շատ խոր արմատ է զցել, որ ծառայողների անբարեխճութիւնը այնքան սովորական բան է դարձել, որ էլ անազնւութիւն չի համարում:

Ազդ անհամութիւնները այնքան զգւեցրել էին Սահառունուն, որ նա վճռեց ընդ միշտ թողնել իւր պաշտօնը: Յարմար առիթ էլ կար.— երկու զրամատէր շատ ձեւնառու պայմաններով կապալով էին վերցրել Թ-սին մերձակաց մի կալւած և քանի ժամանակ է առաջարկում էին Սահառունուն ընկերանալ իրանց հետ:

Սահառունին, նոցա հետ պայման կապելուց յետոց, այնպիսի թեթեռութիւն զգաց, կարծես շալակիցը մի ահազին սար վայրը ընկաւ:

Տուն վերադառնալով, նա կնոջը խորհուրդ տւեց առ Ժամանակ տանու ծախսերը կրծատել: Նատ քաղաքավարի կերպով բացարեց նորան իւր միտքը Սահառունին, բայց էլի տհաճութեամբ լսեց կինը նորա ասածը:

Ամեւսինների կեանքի այդ տագնասպի ժամանակն էր, որ Ամիրանովին ու Նեղինին պատկեցին: Կատարինչն սրտով ուրախ էր այդ

բանին։ Նա առժամանակ ամեն բան մոռացութեան տեղ և զբաւուեց իւր վաղուցւայ լնկերուհու բարեկամութեամբ։ Սահառունուն
մեծ ուրախութիւն էր պատճառում նոցա բարեկամութիւնը և նա
մեծ յոյսեր էր զնում կնոջ լուրջ, համեստ ու սակաւագահանջ լնկե-
րուհու բարերար ազգեցութեան վերայ։ Բայց մի քանի ամսից յետոց
Կատարինէն սկսեց սառել դէպի Նեղինէն։ Նա էլ առաջւաց նման
ուրախ չէր զգում իրար Հեղինէի հետ եղած ժամանակ և երբեմն—
երբեմն մինչեւ անգամ կարծես նորան նեղութիւն էր պատճառում
լնկերուհու ներկայութիւնը։

VIII.

Որոշւած երեկոներից մի երեկոյ Ելիզաւետա Քօգանօվնա Միհ-
րանօվան քաղցր սրտացուզութեան մէջ քայլում էր՝ երեկոյթի հա-
մար սարքած, պատրաստած՝ դահլիճներում։

Նորա մարդք բարձր պաշտօն ստանալով Սահառունուց երկու
ամիս առաջ էր նուից թշու տեղափոխւել։

Միհրանօվան այն տեսակ կանանցից էր, որոնք ոչ մի միջացից
չեն խորշում իրանց ամուսինների համար բարձր շրջաններում աչքի
ընկնող զիրք ձեռք բերելու համար։ Մի կողմից՝ պատրաստ լինելով
ամեն տեսակ ծառացութիւն մատուցանելու մեծերին, միւս կողմից՝
նա իւր մարդու առորապրեալների զլուխը ստանում էր հազար ու
մի խնդիրքներով ու յանձնարարութիւններով, բայց ի հարկէ նա
այդ այնպիսի վայելուչ ձեւով էր անում, որ շատ չէր ծակում կողմ-
նակի մարդկանց աչքը։ Ճարպիկ և խորամանկ բնաւորութեան տեր
լինելով՝ նա անդամ էր գրւամ և ընտրւում բոլոր բարեգործական
յանձնաժողովներում, բայց անվարձ լաւութիւն անելու սովորութիւն
չունենալով, նա իւր կօպէկանոց աշխատանքի համար տամնապատիկ
վարձատրութիւն էր ուզում ստանալ։

Միհրանօվան զնում գալիս էր ու շուշ-շուշ կանգ առնում սե-
ղանի առաջ, բաց էր անում գեղեցկաշէն, արկղիկը և հաշւում թէ
որքան տոմսակ ունի ծախսելու բարեգործական նպատակով տրւող
նւագահանդէսի համար։ Ամիբանօվը երեխ մի քսան տոմսակ կը
վերցնի, Կատարինէ Սահառունին տասը, իշխանուհի նակունին
երեսուն, յետոց մոռքումը էլի շատերին հաշւելով վճռեց, որ կը

մօտ հարիւր տոմսակի Ե՛հ, ո՞ինչ, այդ էլ դժւար չի լինի ծավել, մտածեց նա. անցեալ երեքշաբթի թէւ հաստատ ըլ զիտի, բաց բոլորին ասացի, որ այս անդամ իմ մօտ կը լինի և կը երգի գեղեցկուհի պրիմադոննան. այդ լաւ հրապոյր է ջահելների համար, շատերը կը գան... իսկ կոմուհին ո՛րքան կ'ուրախանազ, ոչ մի բան նորան այնքան գւարձութիւն չի պատճառում, որքան յաջող սարքած նւագահանդէսը, յաղթական եղանակով համարեա լսելի ձայնով արտասանեց նա և սկսեց մտածել ընթրիքի մասին Ընդամենը երեսուն հոգու համար է պատւէր տած, իսկ կարելի է յիսուն հոգի գան. պէտք կը լինի աւելի շատ պատրաստել... բայց ո՞ինչ, որ շատ լինին թղթախաղից մօտ երեսուն բութի կը հաւաքւի, միիթարում էր ինքն իրան Միհրանօվան: Պէտք է այնպէս կարգադրել, որ գոնէ տասը սեղանի վերայ խաղան... Պէտք է հոգս տանել բարեգործական ներկայացման համար... Աղջիկներս, մանաւանդ Նաղեան, շատ գեղեցիկ կը լինին իրանց զերերում, վաղը պէտք է խօսել Կոմուհու հետ այդ ներկայացման մասին...

Մէկ մէկի յետելից եկող հիւրերը ընդհատեցին Նլիդաւետա Բօդրանօվնայի մտախոհութիւնը:

— Ախ, սիրելիս, չեմ կարող ասել թէ որքան ուրախ եմ ձեզ ահանելով, չափազանց սերալիր կերպով ընդունեց նա Կատարինէ Ասհառունուն, որ ներս մտաւ Ասունուհետ ձեռին բոնած մի ծրաբ:

— Այդ ի՞նչ էք բերել, սիրելիս:

— Խոստացած եմ բերել վիճակախաղի համար:

Ելիդաւետա Բօդրանօվնայի աչքերը ուրախութիւնից փայլեցին:

— Ո՛րքան բարի էք դուք, ասաց նա շողոքորթոթեամբ և համբուրեց Կատարինէին: Բայց ինչու էք այսքան թանկազին բաներ բերել, աւելի հասարակ բաներն էլ ձեռք կը տավին:

— Ոչինչ, այզակի մանր-մունք բաներ շատ ունեմ:

— Ե՛հ, ինչ էիք նեղութիւն կրում:

Նա Կատարինէի բերած իրեղինները գնելու յարմար տեղ էր վնարում, որ բոլորն էլ տեսնէին ու օրինակ առնէին նորանից. իսկ Ասունին ու Կատարինէն այդ ժամանակ կամաց խօսում էին:

— Մինչև այժմ մարդու զլուխ էր տանում, իսկ այժմ ասում

է, թէ ինչու էիք նեղութիւն կրում: Օ՛ք, Աստուած փրկի, ազատի այդպիսի բօշաներից:

—Կամաց, կը լսի, Ալեքսանդր Ա.ասիլիշ: Ինչ արած ամեն մարդ մի պակասութիւն կ'ունենազ, առանց դորան չի լինի:

—Բայց դորա պակասութիւնները անհաշիւ են: Այ, շուտով Պրիմադոննայի բենեֆիսն է լինելու, տեսէք թէ ինչպէս է փողեր պոկելու մեզանից: Ինչ արած. Հօ չի կարելի որ աղջիկների վարժուհու բենեֆիսին իրանց ընտանիքի կողմից ընծայ ըլ տայ:

—Զէ, չէ, այդպիսի բան չի անի, դուք զրաւարտում էք նորան, ու շքը ցրւած պատասխանեց Կատարինէն և նայեց նոր եկող հիւրերին ու շատ ուրախացաւ տեսնելով նրանց մէջ երիտասարդ և գեղեցիկ Տրունեցկուն:

Տրունիցկին, շքեղազգեստ, մի ձեռին զլիսարկը բոնած, միւս ձեռքում կոտրուելով պոտացնում էր մենակնոցը, լորնետը և ինքնավտահ, յանդու գն հայեացքով նայում բոլորովին ոտից մինչ զլուխ:

Միհրանօվայի աղջիկները, Նադեսն և Սօվիան, տեսնելով ցանկալի հիւրին, քշփշացին կողքներին կանգնած օրիորդներին՝ «տեսաք, որ ասում էինք թէ այսօր Տրունիցկին կը լինի մեզ մօտ», և ուրախուրախ դիմաւորեցին նորան:

Մեծ քոյրը նադեսն սիրուն, կարմրայտ, սեւահեր և գեղեցկակազմ օրիորդ էր. ծնողներն ու ծանօթները յափշտակւած նորա գեղեցկութեամբ երեխայ ժամանակից նորան երես էին տւել. նորա գէմքը հպարտութիւն, գոռողութիւն էր արտայաշտում: Սօվիան մի տարով էր նորանից փոքր, նա ոչնչով աչքի չեր լնկնում, թէև զիմազծերը կանոնաւոր էին, բայց շատ լզար ու բութիկ էր: Երկուսն էլ կրթւել էին Թ.սի ամենալաւ համարւող պանախօններից մէկում, ուր բացի վայելուշ ձևերից ու ֆրանսերէնից էլ ուրիշ համարեառ ոչնչի վրայ ուշք չեին դարձնում:

Անուշապիր թողնելով միւս բոլոր հիւրերին օրիորդ Միհրանօվաները բաց էին արել իրանց հաճոյախօսութիւնների տոպրակը Տրունիցկու համար: Նա, ըստ երեղիթին, շատ էլ ուշք չեր դարձնում նոցա խօսքերին և աչքերով ում-որ փնտրում՝ էր:

Վերջապէս գոտայ, մտածեց նա և պացաւ դէպի Կատարինէն:

—Թոյլ տւէք, Կատարինա Խւանօվնա, Հրաւիրել ձեզ կաղըիլի
և մազուրկայի:

—Ուրախութեամբ, Համաձայնեց նա ժպոափայլ դէմքով:

Միհրանօվայի աղջիկների դլիին կարծես սառը ջուր ածեցին.
Նոքա անլայտացան:

—Ու բախութեանս չափ չը կայ, որ ինձ արժանացրիք այդ պատ-
ւին: Ո՞ր ասողիցն էր այս բախուր, սկսեց հաճողախօսել Տրունիցկին:

Կատարինէն կոտրուելով գլուխը չետ զցեց ու ինքնազոհ կեր-
պով ծիծաղեց. այտերը փոս ընկան և երևացին սպիտակ, զեղեցիկ
ատամները: Այդ րոպէին նա հիանալի էր: Տրունիցկին աչքը չեր
հեռացնում նորա երեսից: Կատարինէն զզում էր, որ ինքը նորան
դուր է գալիս:

—Ոչ մի տեղ չեք երեռում, Աղօլի Անդրէիչ, ասաց նա փոքր
ինչ լոռութիւնից յետոց:

—Եթէ ամեն տեղ հանդիպէի ացնողիսի սքանչելի էակների...
Խօսքը բերնումն էր, որ Կատարինէին մօտեցաւ Հեղինէ Ամիրանեանը
և քաշ տեսց տարաւ հետը:

Միհրանօվաները և մի քանի ուրիշ օրիորդներ ճանկեցին Տրու-
նիցկուն:

Դահլիճը լցւում էր հիւրերով. տանտիկինը ամեն մէկին զիմա-
ւորում էր աւելի կամ պակաս սիրալիր կերպով նայելով թէ ով և
ինչ աստիճանի տէր էր:

—Յրւեցի՞ք տոմսակները, Թօմա, և դիմեց նա մի փոքրահասակ,
թիկնաւէտ, բայց գեղեցիկ երիտասարդի: Նա նոր էր աւարտել ու-
սումը Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական բաժ-
նում կանդիդատակ աստիճանով:

Թօմաեւը բարեսիրտ և լնդունակ տղայ էր, բայց շարժւածք-
ների կոպութեան, անհոգ հագնւածքի և կծու, խիստ խօսակցու-
թեան շնորհիւ կողմնակի մարդկանց դուր չեր գալիս: Թօմաեւը այդ
հասկանում էր, բայց սկի հոգը չեր. նա ոչ ոքի աչքը մանել չեր
աշխատում, ամենքի երեսին շխոակ խօսում էր և առհասարակ չեր
սիրում իրան ազատութիւնը ճնշել այս կամ այն նկատումներով:

—Դժբախտաբար, ո՛չ, Ելիզաւետա Քօզլանօվնա, անհոգ կեր-
պով պատասխանեց Թօմաեւը, վերադարձնելով նորան տամակները:

Ես ձեզ առաջուց ասացի, որ այդպիսի բաներում ես շատ անշնորհք եմ: —Այ քեզ բա՞ն, մի հաս էլ է չի ծախել, տհաճութեամբ բացականչեց Միհրանօվան տոմսակները հաշելուց յետոյ և շարացած նայեց Թօմաեւին:

Միհրանօվան նորա վրայ նայում էր իբրև իւր պարտապանի վրայ, որովհետեւ բացի այն որ նա իւր տանը շաբաթը ջրս անգամ գաս էր տալիս, երկու-երեք ուրիշ ընտանիքներում իւր շնորհիւ գասեր էր գտել:

Յոյս ունեմ, որ գուք աւելի ուրախ լուր բերած կը լինէք, դիմեց նա Ասունուն, որ մօտենում էր իրան:

Ասունին գրապանից հանեց շքեղ զրամատուփը և տւեց Միհրանօվային տոմսակների փողը:

—Ի՞նչ հիանալի գրամատուփ է, մեր վիճակախաղի զարդերից մէկը կարող էր լինել:

—Թոյլ տուէք առաջարկել ձեզ...

—Զէ՛, չէ՛, ես կատակով էի ասում, ինչու զրկւէք...

—Ի՞նչ էք ասում, արժի՞ խօսել այսպիսի չնչին բանի մասին:

—Տւէք, ես ուզում եմ միայն ցոյց տալ մի քանի տիկիններին Միհրանօվան առաւ գրամատուփը և գուրս եկաւ դահլիճից:

—Քարեկա՞մ, էլ ծործորակդ կը տեսնես ու զրամատուփդ չես տեսնի, ծիծաղելով ասաց Թօմաեւը ու խիեց ընկերոջ ուսին:

Այդ ժամանակ ածեցին կաղբիլի բիտուրնելը:

—Դրամատուփս «վայ տէր» կանչելով գնաց, գնամ գոնէ սիրուն օրիորդների հետ պարերով միսիթարւեմ, ասաց Ասունին ու մօտեցաւ Կատարինէին ու Հեղինէին, որոնք տաք-տաք խօսում էին:

—Կարելի՞ է ձեզ հրաւիրել, Կատերինա իւանօվեա:

—Ես պարում եմ Տրունիցկու հետ, առանձնապէս շեշտելով արտասանեց Կատարինէին:

—Իսկ ձե՞զ, տիկին Հեղինէ:

—Աւրախութեամբ, մահաւանդ որ այսօր սիրտս՝շատ է ուզում պարել:

—Ագոլֆ Անդրէիչ, վիղ-ա-վի չը փնտրէք, արդէն կայ:

—Նատ ուրախ եմ, ասաց Տրունիցկին զլուխ տալով Հեղինէին: Մի բանն է վաստ, Ելիզա Պաւլովնեա:

— Կ՞եզ:

— Les vis-à-vis sont des amis, իսկ դուք երբէք բարեհաճ չէք եղել գետի ինձ: Հեղինէն անտարբերութեամբ լսեց նորա ասածը և իսկոյն խօսակցութիւնը փոխեց ուրիշ նիւթի վերաց:

— Զէք կարող երեւակացել, Ալեքսանդր Վասիլիչ, թէ որքան լաւ է պարում Տրունիցին: Նորա հետ պարելիս մարդու ուները կարծես գետնին չեն կպչում, ոգեսորութեամբ ասաց Կատարինէն Ասունուն: Նա այսօր ամենից գեղեցիկն է, չէ:

— Ամեն բանում նա միշտ առաջինն է, հաստատեցին նորա խօսքը կողքին կանգնած օրիորդները:

— Հեղիկ, ինչո՞ւ ես դու այդպէս սառը վարւում Տրունիցիու հետ, հարցրեց Կատարինէն:

— Ինչու պիտի. նա միի դուրս չի դալիս:

— Ի ա՛. ա՛յ թէ ասացիր, հա. ասա տեսնենք նորանից լաւ ո՞վ կայ այտոեղ: Ճի՞շտ է, ասում են որ նա քո վեսացուն է եղել:

— Այսինքն ուզել է լինել, բաց չի յաջողել: Ասուած սիրես, ոչ ոքի շասես, ես չեմ սիրում պարծենալ եղած վեսացուներով: Գէօրգի Ըլեքսանդրօվիչը այսօր կը վերադառնա՞յ:

— Խա՛մ, չը գիտեմ. ով է իմանում, կարելի է գայ:

Կատարինէի անտարբեր պատասխանը Հեղինէին շատ գարմացրեց:

— Մի ժամանակ ժամերն էր հաշւում թէ երբ պէտք է վերադառնայ մարդը, իսկ այժմ կարծես նորա համար մէկ է թէ մարդը քաղաքումն է թէ չէ, մտածեց նա:

— Մինչև հիմա դեռ չի եկել ձեր մարդը, խեղճ աղջիկ, հարեւանց ի կերպավ ասաց տանտիկինը:

— Նա այնքան շուտ-շուտ է ինձ մենակ թողնում, որ քիչքիչ սովորում եմ:

— Ինչի՞ն էք սովորում, հարցրեց Տրունիցին, որ այդ ժամանակ մօտեցել էր նորան:

— Մարդու բացակայութեանը, նորա տեղ պատասխանեց Միհրանօվացի մէծ աղջիկը և այնպէս գոհ մնաց ինքն իրանից, կարծես մի քաջութիւն արեց, որ այդ ասաց: Ասում են այժմ այդ մօդա է, աւելացրեց նա ուզելով սրախօսութիւն անել:

Տրունիցկին թեթև ժպտաց և հրաւիրեց Կատարինէին մի պտոյտ վալսի:

—Ո՞վ է ձեզ ասել, որ այդ մօդա է, ձեր լեկցիաներումը կամ՝ ինչպէս ասում են՝ բարձրագոյն կուրսերումն էք այդ սովորել, հեղանօրէն ասաց օրիորդին Ասունին:

—Ձեզ հետ չեն խօսում, խիստ կերպով պատասխանեց Նաղեան և հեռացաւ: Ասունին վազեց նորա յետեից:

—Մի պտոյտի տեղ երեքն արեցինք, ասաց Կատարինէն կարմըրատակած ու ընկաւ առաջին՝ պատահած աթոռի վերայ:

—Ձեզ հետ պարելիս մարդ շի նկատում թէ քանի պտոյտ է արել, դուք շատ թեթև էք պարում:

—Ճի՞շտ: Այստեղ շատ շոք է, Աղօլֆ Անդրէիչ, գնանք միւս սենեակը: Նոքա թեթևի անցրած դուրս եկան դահլիճից, գնացին հիւրասենեակը և բազմեցին վառարանի դէմ ու դէմ:

—Եկատերինա Խւանսկինա, հոգիս, մի բան ածէք դաշնամուրի վերայ, ընդհատեց նոցա քաղցր տետ և տետ-ը տանտիկինը: Կատարինէն բացասաբար շարժեց զլուխը:

—Խնդրեմ, սիրելիս, մի մերժիր. բոլորը անհամբերութեամբ սպասում են ձեզ:

Կատարինէն նայեց Տրունիցկուն, կարծես սպասում էր, որ նա խնդրի, և վերջապէս համաձայնեց:

Սկզբում կարծես մատները չէին հնազանդում նորա կամքին, բայց քիչ քիչ նա ոգևորւեց և դահլիճը լցւեց Շօպէնի վալսի հրաշալի գեղգեղանքով:

—Դուք էլ կ'երգեք, չէ, Աղօլֆ Անդրէիչ, դիմեց նորան Միհրանօվան երբ որ Կատարինէն վերջացրեց վալսը:

Տրունիցկին երկար ժամաները նազ էր անում, կոտրաւում էր, դանազան պատճառներ էր բերում, որ իբր թէ չի կարող երգել, բայց տանտիկինը այնքան խնդրեց, որ նա վերջ ի վերջոյ սովիալած սկսեց երգել և ներկայացրեց մի քանի տեսարաններ ուուս ժողովրդի կեանքից: Նա այնպէս լաւ ներկայացրեց, որ բոլորը մնացին հիացած:

Նւագածութիւնը վերջանալուց յետոյ, քիշ-քիչ Կատարինէի շուրջը պատեցին համարեա բոլոր հիւրերը. գովասանըներ էր, որ ամեն կողմից թափում էին գլխին: Ոչ միայն ջահէլները, հասակն

առաջներն էլ կողքիցը չէին հեռանում և աշխատում էին մի կերպ հաճոյանալ նորան:

Մարդ զարմանում էր Կատարինէի ընդունակութեան վերայ. Հէնց որ մի հասարակութեան մէջ էր ընկնում, մէկ էլ տեսնես արդէն հասարակութեան ծաղիկն է գարձել, և որ զլսաւորն է միւս կանանց մէջ նախանձ չէր գրգռում:

Օրիորդ Միհրանօվաները Կատարինէի կողքը բռնել էին ու չէին հեռանում, որ իրանք էլ նորա ջրերն ընկնեն, նորա շնորհիւ միշտ կաւալերների հետ լինեն:

Կատարինէն խակապէս ասած գեղեցկուհի չէր:

Ոչինչ նշանաւոր բան չունէր. միջին հասակ, համաշափ կազմւածք, կլոր, թարմ երես, շագանակագոյն մազեր, վառվուուն մուգ աչքեր, ծայրը մի քիչ վեր բարձրացած քիթ,—ահա նորա կերպարանքը: Բայց միշտ սազով հագնելու վարպետութիւնը, շարժունքների բնածին նազուկութիւնը, այտերի սիրուն փոսերը, վարդագոյն շրթունքներից վայց չ'եկող անկեղծ, ուրախ ժայխալ նորան վերին աստիճանի նազելի ու սքտչելի էակ էին դարձնում:

—Կատեա, կուզես քեզ ճանապարհ գցենք տուն, ասաց նորան Հեղինէ Ամիրանեանը տուն գնալիս:

—Ոչ, մերս, ես գեռ կը մնամ:

—Ուրեմն մնաս բարեւ: Չը գիտես ո՞րտեղ է Միքայէլը:

—Նթէ թոյլ կը տաք, ես այս բոսէին կը գանեմ նորան, ասաց Տրունիցկին:

Ամիրանօվը կէս ժամ կը լինէր ինչ Միհրանօվայի հետ առանձնասենեակում նստած քչփում էր:

—Հանգիստ եղէք, ինձ վերաց յոյս դրէք, Ելիզաւետա Բօդլանօվնա, բոլոր առմասիները կը ծախւեն և ամեն բան ինչպէս հարկնէ կը լինի, ասում էր նա այն ժամանակ երբ որ Տրունիցկին մօտեցաւ նորան յայտնելու, որ կինը կանչում է տաւն գնալ:

Ամիրանօվի գէմքը մթնեց, բայց նա խիզն փոխեց դէմքի արտացայտութիւնը:

—Երբ պէսք է գու սոխուս վերջապէս ազատ ասել խօսել հասարակութեան մէջ, մարդկանց հետ ինչպէս հարկն է վարւել, ասաց նա կնոջը ճանապարհին:

— Զեմ հասկանում, Միշէլ, թէ ինչ ես ուզում ասել. ո՞ւմ հետ եմ ես վատ վարւել:

— Առածս այն է, սիրելիս, որ զու մինչև այժմ չես կարողանում աջնապէս խօսել, այնպէս վարւել, ինչպէս ընդունւած է լաւ շըջաններում: Այ, օրինակ առ Կատարինէից. տես ինչպէս է բոլորին գրաւում, իսկ քո վերայ մարդամէջի մարդու սիրտ չի էլ ուզում նայի, մի անկիւն կը մոռնես ու լուռ—մոռնջ կը նստես: Ճիշտն ասած, ես չեի ուզի որ զու միշտ ացգպէս մնաս:

— Լաւ կանէիր, Միշէլ, որ մի ուրիշ բանի վերայ ուշք դարձնէիր: Այս էլ քանի անգամ եղաւ, որ ես ասում եմ, թէ չեմ կարող բնութիւնս փոխել, ուր մնայ որ մի առանձին կարևորութիւն էլ չեմ տեսնում բնութիւնս փոխելու:

Մարդը անհամրերութեամբ ձեռքը թափ տւեց ու յօնքերը կիտեց:

— Զը պէտք է մոռանաս, Հեղինէ, որ մենք ապրում ենք կարգին, կրթւած մարդկանց հասարակութեան մէջ, որոնք իրաւունք ունին մեղնից պահանջնելու...

— Իմ կարծիքով, տաքացած ընդհատեց նորա խօսքը կինը, մեղնից իւրաքանչիւրը աւելի լուրջ պարտականութիւններ ունի հասարակութեան վերաբերմամբ, քան նորա ամեն մանր-մունք պահանջներին սարկաբար հնազանդւելլ և նորա բոլոր յիմար կարծիքներին զին դնելլ: Երբեմն, ճիշտ է, մարդու սիրտն ուրախանում է, երբոր հաւաքւում խօսում են, բայց...

Այդ բոսկէին նոցա ֆայէտօնի կողքով սլացաւ մի եռալուծ կառք, որ բոլորովին զրաւեց Հեղինէի ուշքը: Լուսնի պայծառ լուսով նա տեսաւ կառքում նստած տղամարդի դէմքը:

— Ախ, Ամհառունին է, զարմացած տասց Հեղինէն ու ձայն տւեց նորան, բայց նա արդէն հեռացել էր նոցանից:

Հեղինէն ուզում էր յետ գառնալ Միհրանօվենց մօս ու տուն տանել Կատարինէին, բայց մարդն ասաց, որ այդ անցարմար է:

IX

Ամիրանօվերի ամուսնական կեանքի առաջին տարին լրանալու վերայ էր: Հեղինէն օր օրի վերայ աւելի սաստիկ էր զգում, որ մինչև այժմ անօգուտ է անցել իւր կեանքը և յաճախ ինքն իրան հարց էր տալիս թէ ինչի՞ համար է նա ապրում աշխարհիս երեսին, ի՞նչ է նորա կեանքի նպատակը: Վերջապէս նա հանկացաւ որ իւր հոգու երբեմն մութ, անորոշ ձգտութիւնը այժմ պարզել, որոշ կերպարանք են տոացել և գործ են ինարում, բայց միւնոյն ժամանակ նա զգում էր, որ իրան պակասում է զիտութեան պաշար և որոշ աշխարհահայեացք: Հեղինէին չեին կարող բաւարարութիւն տալ ոչ դաշնամուր ճնշենգայնելը, ոչ ձեռադործով պարապելը, ոչ էլ աննպատակ ընթերցանութիւնը, մի խօսքով այն բոլորը, ինչով աշխատում են լցնել իրանց կեանքի դատարկութիւնը մեր կանանցից շատերը: Նորա սիրու ուրիշ բանի էր փափագում և ամեն անգամ, երբ նորա զլսում մի խելք միտք էր ծագում, նա քիչ էր միում որ ուրախութիւնից ուար գայ, վազում էր մարդու մօտ և փաղաքշելով, գուրգուրելով ինսդրում էր, որ լսի ինչ որ ինքը պատմելու է: Խոհ նա այդպիսի դէպքերում, սաւնութեամբ ոչքերը գրելու թղթից հեռացնելով ու ծաղրական հայեացք զցելով կնոջ վերայ, ասում էր «Հը», ցնորամիտ, ելի երեխ խելքու մի բան է փշելո:

Մի անգամ վերագառնալով մի երեկոյթից, ուր մարդը վռապ գործեր ունենալու պատճառով հետք չէր գնացել, Հեղինէն ուրախուրախ ներս մտաւ նորա առանձնատենեակը:

—Պատմիր տեսնենք, լաւ ժամանակ անց կայրիր, շա՞տ սպարեկար:

—Հա, Միշել, շատ ուրախ անցաւ ժամանակը:

Ես ծանօթացայ մի մանկավարժի հեա: Նա ուղում է ամսազիր հրատարակել և կին աշխատակից է վնարում:

—Ելիզա Բօգդանօվեան այնուե՞ղ էր, չո՛ իմ մասին չը հարցուե՞ց, ընդհատեց նորա խօսքը մարդու:

—Մանկավարժը առանձնապէս ուշադրութիւն է դարձնում մանկական ծաղկոցների վերայ, ուզում է մեզնում ապահով ծաղկոցներ:

Պատմելու ժամանակ Հեղինէի դէմքը զնալով աւելի ու աւելի աշխայժմ էր ստանում:

— Եհ, ի՞նչ անտանելին ես դարձել այսօր, քեզնից մարգավարի բան են հարցնում, իսկ դու ինչոր մանկական ծաղկոցների մասին ես խօսում, կոպտութեամբ ասաց Ամիրանօվլը: Գլուխս կը կտրեմ, թէ դու ամբողջ երեկոն այդ պետանու մանկավարժի հետ նստած չը լինես:

— Թէկուզ հէնց նստել եմ, յետո՞յ, բարկացած պատասխանեց Հեղինէն:

— Այս չի լինի, քանդւած ինստիտուտումն ես սովորել: Եհ, երբ սկսաք է վերջապէս խելքի գաս:

Ամիրանօվլ կնոջը գրկեց և մօտեցրեց իրան:

— Լսիր, թէ ինչ եմ ուզում անել, Միշել. ուզում եմ այժմ մանկավարժութեամբ պարապել. մանկավարժութիւնը վազուց է ինձ հետաքրքրում: Երբ որ լաւ սովորեմ, սրծնեմ, կ'աշխատեմ սովորածիցս օդուտ քաղել:

— Բաւական է փիլիսոփայութիւն անենք. կես գիշերից անց է, քնիլու ժամանակ է, ծիծաղելով ասաց Ամիրանօվլ բունելով կնոջ ձեռքը: Առաւոտը վեր կը կենանք, կը տեսնենք:

Հեղինէն յանդիմանօրէն նայեց մարդուն և լուռ ու մունջ գնաց նորա յետելից: Սա միշտ այսպէս բանը կատակի է դցում, իսկ ես շատ մեծ յոյս ունէի սորտ աջակցութեան վերայ, մտածում էր Հեղինէն: Ի հարկէ նա նորա համար է այդպէս անում, որ ես աշխատելու, գործ կատարելու անպատճառ եմ, բայց ինձ վերայ ծիծաղելու տեղ նա կարող էր ընդհակառակը օգնել խորհուրդներով: Այդպիսի մտածմունքներ խորվելով Հեղինէի միտքը, չէին թողնում, որ քնի:

Միւս օրը Ամիրանօվները ճաշի էին հրաւիրւած Նակունու մօտ:

— Ճիշտ է, Միխայիլ Պետրովիչ, որ քեռիդ 75,000 ր. է տարել, հարցրեց Ամիրանօվին ճաշի ժամանակ իշխանը:

— Կարծեմ ճիշտ է, շփոթւած պատասխանեց նա:

— Մարդ տանի, այդպէս տանի, հա՛. հը՛, Մայիկօ, ի՞նչ կասես:

— Այսու՞որ երկար ժամանակ չի վայելելու այդ փողերը, ասաց իշխանուհին խորհրդաւոր կերպով նայելով Ամիրանօվներին:

— Ելի մի ասա՛ց, դու ո՞րաեղից զիտես թէ ինչքան ժամանակ է վայելելու: Այս մեր կանայքը միւմի մարգարէ են: Ով է իմանում,

Հեղիկ, դու էլ ես մարգարէ դարձել, հը՞, հարցրեց քեռին ուսին խփելով:

Հեղինէն ժպտաց ու մեղմ սեղմեց նորա ձեռքը:

— Իշխանուհին ճիշտ է ասում, որ քեռու առողջութիւնը խառուտ է, մտահոգ կերպով ասաց Ամիրանօվը:

Ճաշից յետոյ, Ամիրանօվեկիրի գնալուց առաջ իշխանուհին Հեղինէի ձեռքը բոնելով քաշեց մի կողմ ու սկսեց տաք-տաք հետը խօսել:

— Նո քեռու մասին չէր հարց ու փորձ անում, հետաքրքրութեամբ հարցրեց Ամիրանօվը սանուղղքներից իջնելիս:

— Նա հետաքրքրում էր, թէ դու ինչու ես խռովել քեռուդ հետ, խորհուրդ էր տալիս հաշտւել հետը, հաւատացնում էր որ նա շատ լաւ մարդ է թէև մի քիչ յամառ է ու վարւող բնաւորութիւն չ'ունի:

— Հըմ... ճիշտ է ասում, խորհրդաւոր կերպով արտասանեց Ամիրանօվը: Խսկ դու ի՞նչ ասացիր նորան:

— Ես ասացի, թէ իմ կարծիքով այժմեան հանգամանքներում հաշտւելը շատ օտարուի, անշարժար բան կը լինի:

Մարդը խոր-խոր նայեց կնոջ վերայ: Նա վճռեց, որ քեռու հետ հաշտւելու համար կնոջ միջնորդութեան վերայ յոյս դնել չի լինի: Միայն քոյրերս կարող են այդ զլուխ բերել, մանաւանդ այրին. Նա շատ վարպետ է այդպիսի բաներում, մտածում էր նա: Վատ չի լինի, եթէ ելիզաւետա Բօդգանիօվսայինն էլ մեջ գցեմ, նա էլ այդպիսի բաներում լաւ է:

Նոքա ամբողջ ճանապարհին իրար համարեա մի խօսք չ'ասացին: Կէս ժամի չափ առանձնասենեակում նատելուց յետոյ Ամիրանօվը, առանց կնոջը բան ասելու, զլսարկը վերցրեց որ գնաց:

— Ո՞ւր, Միշել:

— Քոյրերիս մօտ, վաղուց է մօտները չեմ եղել:

— Ինձ չի՞ս հասցնի Սահառունիների առւնը:

— Աչքիս վրայ, մանաւանդ որ ճանապարհը մէկ է:

Սահառունին տանը չէր. Կառարինէն նորա ընկերներից մի քանիսի հետ նառած հիւրասենեակում, ալբօմն էր նայում:

— Նայիր, Հեղիկ, ի՞նչ սիրուն է այս հագուստով, ասաց նա

ցոյց տալով Տրունիցիու պատկերը: Զես կարող երեւակացել, թէ ինչ հիսնալի էր երէկ նա յեսու premier-ի դերում: Ափսոս, Պետերբուրգ է գնում:

— Ո՞ւմ տանն էին երէկ ներկայացսւմ տալիս, հարցրեց Թօմաեւվը ծոյլ-ծոյլ տեղիցը վերկենալով:

— Իշխանուհի Ռիկօձի տանը: Կուզեք, ձեզ հետ ծանօթացնեմ, շատ ուրախ տուն է:

— Նատ կը պարտաւորեցնէք, Եկատերինա Խվանօվնա:

— Իմացած կայ, Դաւիթ, որ նորա մօտ պէտք է անպատճառ կոկւած սօթւած ու վրակով երթաց մարդ, ասաց Ասունին մասները քսելով Թօմաեւի գզզուած մազերին: Բայց ո՞ւր է կորել Գէորգը, այսքան ժամանակ չը կայ, աւելցրեց նա դուրս նայելով լուսամուտից:

— Ճիշտ, մի քանի ժամանակ է նա շատ տիսուր է երեւում, ի՞նչ է պատահել, հարցրեց Հեղինէն:

— Ինչ պէտք է լինի որ, գործերը լաւ չեն գնում, կարեկցար պատասխանեց Ասունին: Սկզբում մեծ յոյս կար, որ սկսած զործը լաւ օգուտ կը տայ, իսկ այժմ բանից դուրս եկաւ, որ մեծ վնաս կ'ունենայ: Ընկերները սառուցին են քաշել նորան:

— Ով է մեղաւոր, խօսակցութեանը խառնեց Թօմաեւը: Գէօրգի Ալեքսանդրովիչը կուրօրէն հաւատում էր իւր ընկերակիցներին. այժմ իւր զիւրահաւատութեան պատիժն է կրում. լաւ է, թող այսուհետեւ մի քիչ զգոյշ լինի, թէ չէ ամեն մարդու հաւատում է և ամենքից խարբում:

— Ի՞նչ ես ասում, Դաւիթ: Ում մտքովը կ'անցնէր, որ այն երիտասարդները, որոնք համալսարանն աւարտելիս մեզ՝ առաջին լսարանի ուսանողներիս՝ հիացնում էին իրանց վսեմ զազափարներով, յանկարծ այդպիսի անպիտան մարդ դուրս կը գան: Ասա սորանից յետոյ էլ ոչ ոքի չը պէտք է հաւատանք էլի՞օ:

— Կարելի է հաւատալ, բայց պէտք է շատ զգոյշ լինել, առաջուց լաւ ճանաչել մարդուն: Չը պէտք է մուտանալ, որ կովկասցիները այժմ անցողական շրջանումն են գտնուում, նահապետական զրութիւնից դուրս են գալիս, բայց դեռ բոլորովին չեն քաղաքակրթւել. իսկ այդպիսի վիճակում՝ գտնողները չեն կարողանում դիմադրել

կեանքի հրապոյրներին, փորձութիւններին, որոնք այդ ժամանակ աւելի շատանում, զօրանում են:

— Հեղինէն լուռ լսում էր ու ժամանակ առ ժամանակ պատուհանից դուրս նայում: Զանգը խփեցին. ներս մտան Սահառունին, Ամիրանօվեռ Պետրոսեանը:

— Ներկցէք, տիկին Հեղինէ, որ ես երէկ խօսքս չը կատարեցի, ասաց Սահառունին նստելով նորա կողքին:

— Ինչո՞ւ այս անդամ խօսքներիդ տէր չեղաք, հարցրեց Հեղինէն ժպառալով:

— Ճիշտն ասած, չէի ուզում ոչ ոքի աչքին երևալ, տրամադրութիւնս էլ շատ վատ էր, վախենում էի ուրիշների տրամադրութիւնն էլ խանգարեմ:

— Նատ զուր. հասպա էլ ինչ ժամանակւայ համար են բարեկամները, որ մարդ վատ տրամադրութեան եղած ժամանակը չը դնայ մօնները, դարգը մօռանայ:

Սահառունին շնորհակալ սրոտվ նայեց Հեղինէին բայց գեռ բերանը չէր բաց արել խօսելու, որ կատարինէն սպատախանեց Հեղինէին:

— Զէ մի ի՞նչ. բաւական չէ, որ մարդ ինքը վատ տրամադրութեան է, գնայ ուրիշների մօռ, որ նոցա քէվն էլ փշացնի:

— Գործերդ ի՞նչպէս են, Գէորգ, ուղղում են թէ էլի առաջւայ նման են, սրտացաւութեամբ հարցրեց Ասունին:

— Կարծես ուզում են ուղղւել Տիգրանի ու Միքայէլի շնորհիւ: Այս շաբաթ դու շատ չարշարւեցիր, չեմ իմանում ինչպէս պէտք է քո լաւութիւնիցդ դուրս գամ, դիմեց նա Պետրոսեանին և պինդ սեղմեց նորա ձեռքը: Վախենում եմ իմ պատճառով ու շացած լինես, ժամանակին չը համես քո գործին:

Բոլորը աչքները զարձրեցին Պետրոսեանի վերայ. խեղճը ամօթից չէր իմանում ինչ անի. վերջապէս կարծես տհաճութեամբ քթի տակին մրմրթացրեց:

— Եհ, ինչեր ես ասում... իմ արածս դատարկ բան է, այ Միւայէլ Պետրօվիչը...

— Նա, զորա ընկերներին «զորս զու սպատիրեցիր», մի լաւ դրասեցի, ուռած—ուռած ասաց Ամիրանօվը առանց աչքը հեռացնելու «կաւկազ» լրադրի առաջին երեսից:

— Փառք Աստծու, որ ազատւեցիր, չնորհաւորում եմ, ասաց
Թօմակը տեղիցը վերկենալով:

— Մինչև մի ուրիշ նոյնականի դէպք, հեգնօրէն արտասանեց
Սմիրանօվը:

Ե, եղբայր քանի քանի անգամ ասել եմ քեզ, որ բացի ծառ
ու այսութիւնից ուրիշ գործունէութիւն չը կայ, խրատի ձեռվ աւել-
ցրեց նա:

— Ճիշտ որ, արի դու ծառացութիւն մտիր, հաւատացնում եմ
որ գոհ կը մնաս, համոզում էր Ասունին: Նայիր անցեալիդ, այս երեք
տարւաց ընթացքում բացի գառնութիւններից ու թշնամներից
ի՞նչ ես վաստակել:

— Իմ մասին խնդրեմ էլ մի խօսիր, Ալեքսանդր, բարկացած
դադարեցրեց նորա խօսքը Սահառունին: Մի անգամ ընդ միշտ
խնդրում եմ, որ իմ մօտ ծառացութեան անուն չը տաս, ես ծա-
ռայութեան համար ոչ պատրաստել եմ, ոչ էլ ընդունակութիւն
ունեմ:

— Իսկ եթէ ապրուատի ուրիշ դուռ չը կա՞յ, ահաճութեամբ
ասաց Կատարինէն: Սանամայրս, Ելիզաւետա Բօդդանօվնան, իշխա-
նուհի Շակունին, ամենքը զարմանում են թէ ինչու չես ուզում
ծառայել. բոլորն էլ ասում են, որ ծառացութիւնից աւելի ձեռնուու
ու պատւաւոր գործունէութիւն չը կայ:

Սահառունին հոգոց քաշեց ու ուզում էր պատասխանել, բայց
յիշեց, որ ինքը շատ անգամ է կնոջը բացարել իւր հայեացքը
ծառայելու մասին, բայց նա չը կամենալով հասկանալ բանի էու-
թիւնը, միշտ միւնոցնն է կրկնում, ու լուեց: Յիշեց Սահառունին, թէ
ինչորէս շատ անգամ դրամական սուզ դրութեան մէջ գտնւելիս
զժւարացել է նորան ասել, որ պէտք է ծախսերը քչացնել: Խնչեր
չեր անումնա, ինչ զգուշութիւններ չեր բանացնում, որ կնոջ սիրու
չը կորի գորանով, բայց էլի չէր լինում, նա իսկոյն սկառում է լալ:
Թէև Սահառունին սրտիցը սիմոն էր, բայց կնոջ արտասուքներին
չէր զիմանում: Կնոջը միանգամից չը զրգուելու համար, նա վճռեց
քիչ-քիչ նորան սովորեցնել աւելի համեստ կեանք վարելու և այդ
պատճառով չը նայելով իւր նիւթական սուզ դրութեանը քիչ էր
պատահում, որ կնոջը զրկեր այս կամ այն թանկ արժող զւարձու-

թիւնից և բաւականանում էր միայն նորանով, որ աշխատում էր համոզել կնոջը:

Ոչ ոք խօսելու սիրո չ'ունէր. բոլորն էլ լուս ու մունջ ընկզմել էին մտածունքների մէջ: Վերջապէս Ամիրանօվը ընդհատեց լուռ-թիւնը, առաջարկելով կնոջը գնալ տուն:

— Աեր էք շուապում, մնացէք, միասին թէյ կը խմենք, խնդրում էր տանաերը: Կատեա ջան, ինչու չեն բերում հեշտաեւը:

— Վա՛յ, բոլորովին մոռացել էի: Ասաց ու օպերացից ինչ որ մի եղանակ զնդնացնելով գուրս եկաւ սենեակից:

— Ո՞ր օրն է լինելու, Տիգրան, հայոց օրիորդական դպրոցի օդ-տին արւող ներկայացումը, հարցրեց Ասունին:

— Հինգշաբթի: Այ, պարսներ, տոմակները, վերցրէք ամեն մէկդ ձեր ծանօթների շրջանում ցրւելու համար. դուք գիտէք, որ ես այդ բանում շատ անշնորհք եմ, ասաց Պետրոսեանը զրպանից մի ծրար տոմսակներ հանելով: Պէտք է աշխատել այս տարի մի քանի ներկայացումներ, նւազահանդէմներ սարքել, որքան կարելի է շատ փող հաւաքել, թէ չէ ոչ միայն նոր ուսումնարան չենք կարող բանալ, այլ և տոխպւած կը լինենք եղածներից մի քանիսն էլ փակել, որովհետեւ շատ անմիխթար դրուժեան մէջ են գտնւում, աւելացրեց նաև աւելի ու աւելի ոգեսրելով:

Սահառունին ու Ասունին հաստատեցին նորա ասածը և մի քանի րոպէից յետոց ընկերների մէջ տաք վիճաբանութիւն սկսեց հայոց ծխական ուսումնարանների դրութեան ու նշանակութեան մասին: Թօմակը հերքում էր հայոց սեփական ծխական ուսումնարաններ ունենալու անհրաժեշտութիւնը. Սահառունին ոգեսրւած ապացուցանում էր մայրենի լեզւի կարեսրութիւնը տարրական կը թութեան համար. Պետրոսեանը յուզւած ժամանակ առ ժամանակ խառնւում էր խօսակցութեանը, մէկ երկու խօսք էր առում Թօմակի դէմ և կամ ինքն էր լսում ու սկսում մօրուքը անխնայ կերպով ձգձգել կամ խօսքը կտրում էին, չեին թողնում շարունակի. Ասունին էլ նոցա կողմն էր, իսկ Ամիրանօվը «թէ պայտին էր խփում, թէ մէխին»:

— Լաւ, Գէորգ, իսկ թեմական դպրոցները ձեր կարծիքով ինչ նշանակութիւն ունեն:

— Նաս մեծ, Դաւիթ:

— Գիտեմ որ կարեւոր նշանակութիւն էք տալիս. այսպէս որ չը լիներ, այնքան ժամանակ ու ջանք չէիք գործ զնիլ նոր կանոնադրութիւն կազմելու համար:

— Թեմական գպրոցները միակ ուսումնաբաններն են, որտեղից կարող են արժանաւոր քահանաներու ժողովրդական ուսումնաբանների համար հմուտ ուսուցիչներ գուրս գալ: Խսկ այժմ մեր ժողովուրդը ինչ աւելի մեծ կարօտութիւն ունի քան արժանաւոր քահանաների ու գիւղական ուսուցիչների: Նոքա պէտք է միջնորդի գեր կատարեն...

— Ում չէ յայտնի, տաքացած սկսեց խօսել Պետրոսեանը, որ ժողովրդի սկզբնական կրթութեան յաջողութիւնը անմիջապէս կախւած է գիւղական քահանաների ու ուսուցիչների պատրաստականութեան աստիճանից:

Թօմաեւը՝ լստ երեղիթին՝ համոզւեց ու շարունակում էր անհոգ կերպով նայել չորս կողմը պատաժ ծուխի քուլաներին:

— Պարտներ, ձեր վէճը մարդ կը քնացնի, յօրանշելով ասաց կատարինէն: Աւելի լաւ կը լինի գնանք թէջ խմենք:

Իոլորը գնացին սեղանասուն:

— Երեխ զլուխներդ տարանք մեր վէճով, Հարցրեց Սահառունին նստելով Հեղինէի կողքին:

— Ինչ էք ասում. ընդհակառակը, դա ուզում է մանրամասնօրէն իմանալ, թէ ինչ բարեփոխութիւններ են կատարւում գպրանոցում, ասաց կատարինէն ծիծաղելով:

— Ճի՞շտ:

Սահառունու ձայնի փոքր ինչ հեգնական եղանակը զիպաւ Հեղինէի սրտին:

Նա անթարթ նայեց նորա աչքերին. նորան թւաց, թէ Հեղինէի աչքերը վառւում են հարցասիրութեամբ, նոր բան լսելու փափագով և միենոյն ժամանակ կարծես յանդիմանութիւն են արտապայտում:

— Ներեցէք, տիկին Հեղինէ, աղաչական ձայնով բացականչեց Սահառունին. ինձ համար այնքան սովորական է դարձել մեր կանանց անտարբերութիւնը դէպի հասարակական խնդիրները, որ ես

անդիտակցօրէն ձեր հարցասիրութեան անկեղծութեանն էլ կասկածով վերաբերւեցի:

Նա աթոռը մօտեցրեց Հեղինէին և ակսեց պատմել:

—Թուսում, ինչպէս ձեզ յայտնի է, մենք նիւթական կողմից ապահովւած միայն մի ուսումնարան ունինք — թեմական գաղանոցը: Այդ ուսումնարանը թէ իւր ուղղութեամբ և թէ ծրագրի ու դասաւանդութեան եղանակի կողմից շատ է յետ մնացել ժամանակի պահանջներից. նորան այդ անմիտիթար վիճակից հանելու համար արմատական փափոխութիւն է պէտք: Ահա այդ ի նկատի առնելով մենք աշխատում ենք, որ մասնաւոր եկեղեցական եկամուտները տրւեն ուսումնարանին և հոգևորական հոգաբարձուների տեղ, որոնք ի շարն են գործ դնում իրանց իշխանութիւնը, ընտրւեն աշխարհական հոգաբարձուներ: Իսկ հոգևորականութիւնը սաստիկ դէմ է մեր ձրդտումներին:

—Հասարակութիւնը, որքան ես նկատել եմ, մեծ յոյս ունի ձեզ վերայ:

—Եխալում էք, տիկին Հեղինէ, այս բանում ես միայն ոչինչ չեմ կարող անել. մենք ամենքս, ժողովրդից ընտրւած պատգամաւորներս, միասին պէտք է ամեն ջանք գործ դնենք այդ նպատակի իրագործման համար: Իսկ նոր ընտրւած հոգաբարձութիւնը կ'աշխատի շարունակել մեր սկսածը, ներքին բարենորոգութիւններ մոցնել դպրանոցում:

—Այդ բոլորը լաւ է, բայց առան գնալու ժամանակ է, ասաց Ամիրանօվը կնոջը:

—Ես մի քիչ էլ գետ կը մնամ, Միշէլ, գուք ինձ տուն կը հասցնէք յետոյ, Գէօրգի Ալեքսանդրօվիչ:

—Մեծ ուրախութեամբ:

Հեղինէն մարդուն մինչև սրահը ճանապարհ գցեց: Երբ որ նա վերադարձաւ, Ասունին աթոռ առաջարկեց, որ նստի և հարցրեց նորան հայերէն.

—Տիկին Հեղինէ, ինչո՞ւ գուք երբէք հայերէն չէք խօսում: Ձեր ուսուցիչն ասում է, որ գուք շատ լաւ գիտէք հայերէն:

—Ճիշտ է, ես բառական լու հասկանում եմ, բայց ազատ խօշութել չեմ կարողանում:

—Ավասո՞ւ: Իսկ եթէ զուք հայերէն խօսէիք, զիտէք, որքան օրիորդներ ու տիկիններ ձեր օրինակին կը հետևէին: Իայց կարծեմ Պետրոսեանը հաւատացած է, որ այդ լինելու բան չէ:

—Ե՞ս. այդ ես հաւատացած եմ... որովհետեւ կրթւած կոչւող կանացք շատ արհամարհանքով են վերաբերւում հայերէն լեզուին: Ես համոզւած եմ, որ նոքա աւելի շատ չինական լեզուով կը սկսեն պարապել քան իրանց մայրենի լեզուով, մաղձոտութեամբ արտասահնեց Պետրոսեանը: Մի աեսակ ցաւ է, էլի:

—Սխալում ես, Տիգրան: Ճիշտ է տասը տարի սրանից առաջ այդպէս էր, բայց այժմ մենք այդ ասելու իրաւունք չ'ունինք: Ես շատ օրիորդներ ու տիկիններ եմ ճանաչում, որոնք սկսել են հայերէնով պարապել և մեծ յառաջադիմութիւն են անում. փոխանակ նոցա վերայ յարձակւելու, պարոններ, աւելի լաւ կանէք եթէ խորհուրդներով օգնէք նոցա, հասկացնէք մայրենի լեզուի նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը, և այն ժամանակ, հաւատացած կացէք, ձեր խօսքերը զուր չեն կորչի:

Ասունին ոգեւորւած էր խօսում և նորա՝ սովորաբար ծաղր արտայացող՝ աչքերը փայլում էին ոգեւորութեան կրակով: Նա՝ բառիս բուն նշանակութեամբ՝ ազգասէր կոչւել էր կարող, բայց մի ամենաչին առիթ անգամ կարող էր նորա ազգասիրական զգացմունքը բորբոքել, որ՝ պէտք է ասել՝ շատ շուտ էլ ասուչում էր. ընկերները ներողամուռթեամբ էին վերաբերւում Ասունու այդ րոպէական բորբոքումներին, որովհետեւ զիտէին, որ ինչ որ Ասունին ասում է, անկեղծ է ասում և ոչ թէ աչք շլացնելու համար: Այս անդամ էլ երբ որ Ասունին սկսեց պնդել, թէ այսուհետեւ իրանք պէտք է իրար հետ միշտ հայերէն խօսեն, բոլորն էլ ժամանակ պատացին, հաւատացած լինելով, որ ինքը Ասունին ամենից առաջ կը քանդի այդ պայմանը:

Նոցա վիճելու ժամանակ Կատարինէն թէցի պարապութիւն էր տեսնում:

—Ինչ շոք է հեշտաեռի մօտ, ասաց նա տաքութիւնից կասկարմիր կտրած:

—Տուր ինձ, նո թէց շինեմ, իսկ դու դաշնամուր ածա: Թէյ կը խմենք, ասաց Թօմաեւը, որ երաժշտութեան սիրահար էր:

Կատարինէն գնաց դահլիճը. Սահառունին էլ գնաց այնտեղ,

բաց արեց դաշնամուրը և աթոռին կոթնած ուշադրութեամբ լում էր:

—Քեզս եկաւ, սիրելիս, տեսնելով թէ ոքքան մեծ յառաջաղի-մութիւն ես արել ածելում, ասաց նա կողը հիւրերի ցրւելուց յետոց:

—Այդ քեզ ացպէս է թւում քո թափառական կեանքից յետոց:

—Ես էլ չեմ թափառի այսուհետև, հոգիս:

Սահառունին շատ անգամ ինքն իրան մեղադրում էր, որ կողը շաբաթներով, երբեմն և ամիսներով մենակ է թողնում. շատ անգամ նորա դէմքը կնճռում էր երբ որ յիշում էր, որ իւր երկու տարւայ ջերմեռանդ գործավարութեամբ ոչ ոքի ոչինչ օգուտ չի տւել, իսկ ինքը գուցէ ընդ միշտ զրկել է բախտաւոր ընտանեկան կեանքից:

—Կուզէի՞ր, կատեա, որ ես այնպիսի գործով պարապէի, որ կարողանացի աւելի ժամանակ նւիրել քեզ, քեզ հետ լինել, անսպասելի կերպով հարցրեց նա: Խնչո՞ւ ես լուել ու ացպէս տարօրինակ կերպով նախում ինձ վերաց: Էլ ինձ չե՞ս սիրում:

Սահառունու զգացւած ձայնը ներգործեց կողը և նա քնքշաւթեամբ բռնեց մարդու ձեռքը:

—Եհ, ինչ մտքեր են գալիս զլուսդ: Ի հարկէ սիրում եմ... Սանամօրս գնալուց յետոց, Գէորգ, սիրոս մի քիչ տիսրել է, բայց այդ ոչինչ, չէ՞ որ զու ուր որ գնաս ինձ էլ հետդ կը տանես, այնպէս չէ՞, ոգեորւելով հարցրեց կատարինէն:

—Սահառունին չէր իմանում ինչ պատախանի նորան և մըտքամոլոր վերկացաւ ու գնաց առանձնասենեակը:

Միւս օրը երբոր ժամի մէկից անց Սահառունին մտաւ կող սենեակը, նա ծոյլ—ծոյլ ինչ որ ամսադիր էր թերթում:

—Ո՛ֆ, Գէորգ, ձանձրութիւնը հոգիս մաշում է, չեմ իմանում ինչ անեմ օրը մի կերպ մթնացնելու համար, չե՞ս գայ ացցելութիւններ անենք:

—Այսօր թատրօն ենք գնում, իսկ ացցելութիւնները, հոգիս, կը յետաձգենք կիւրակէ օրւան:

Կինը ուռեց և այնպէս էր պատասխանում մարդու փաղաքշանք-ներին ու հարցերին կարծես բերնիցը վարձ էին ուզում:

Յանկարծ զանգահարութեան ձայն լսւեց, և իսկոյն ներս թռան

օրիորդ Սիհրանսկաները, մի քիչ յետոց էլ նոցա մալրը Ելիզաւետա
Բօգդանօվիան։ Կատարինէի դէմքը իսկոյն պարզեց և նա աշխուժի
եկաւ։ Սահառունին մնաց զարմացած տեսնելով, թէ ինչպէս կինը
մի ակնթարթում կերպարանափոխեց, նա յօնքերը կիտեց և ան-
նկատելի կերպով դահլիճից դուրս եկաւ։

—Ինչ լաւ երդիների խումբ է այս տարի մեզնում, չէ՞ Կա-
տեա, ասաց Խօնիս Սիհրանսկան։

— № 20 օժեակը երկրորդ աբօնեմենտին էլ քոնն է լինելու,
չէ՞ Հարցրեց Նաղեան։

Կատարինէն տարակուսւած, չէր իմանում ինչ պատասխանի։

—Ի հարկէ էլի պէտք է վերցնէք, ամենալաւ օպերաները երկ-
րորդ աբօնեմենտին են նշանակւած, համոզիչ եղանակով ասաց Ելի-
զաւետա Բօգդանօվիան։

Կատարինէն շուտ-շուտ հրաւիրում էր օրիորդ Սիհրանսկանե-
րին իւր օժեակը և աշխալիսով ազատում էր Ելիզաւետա Բօգդանօվ-
նային առանձին օժեան՝ վերցնելու ծախսից. ահա թէ ինչու այդ
Հարցը հետաքրքրում էր նորան։

—Ինչ մարդավարութիւն է, Գէորգ, հիւրերին մենակ թողնել
ու գնալ, ահաձութեամբ ասաց Կատարինէն մարդուն հիւրերի
գնալուց յետոյ։

—Դու վաղուց դիտես, որ այդ ընտանիքը ինձ դուր չի դալիս
ևս շատ ուրախ կը լինէի, եթէ մօտ յարաքերութիւններդ նոցա հետ
կտրէիր։ Եթէ դու դոնէ մի փոքր յարդում ես ինձ, պէտք է
ինչիրքս կատարեաւ։

—Այ քեզ բան. Դու կարող ես չը սիրել նոցա, բայց իրա-
ւունք չունես ինձնից պահանջնելու, որ ես էլ անպատճառ քո պէտք
վերաքերւեմ նոցա։ Այդ համարեա միակ ուրախ ընտանիքն է հայերի
մէջ և միակ առոնն է, ուր հաւաքւամ է օրինաւոր հասարակութիւն։

—Կատեա, հօ դիտես, որ իմ պահանջս կապրիզից չի առաջ
դալիս. ես չեմ ուզում, որ քո պէս մաքուր, ազնիւ էակը իւր հեշտ
յափշտակւող բնաւորութեան շնորհիւ վարակւի այն կեղտից, որ...

—Ո՞վ, ձեռք քաշի, մարդու զզւանքը գալիս է աշխալիսի խօս-
քեր լսելիս, լնկհատեց նորա խօսքը կինը։ Այ, Ալեքսանդր Վասի-
լիչն եկաւ, Հարցրու տես ով գնալ-գալ չունի Սիհրանսկինց հետ։

—Յաձալսել նոցա երեկոյթները ձեզ պէս սիրուն կանանց լնեկերութիւնից հաճոյք ատանալու համար և բարեկամութիւն անել այդ լնոտանիքի հետ-դրանք չոկ բաներ են:

—Դուք էլ էք այդպէս ատում, հա՛:

Առունու կատախներից Կատարինէն ուրախացաւ և խոստացաւ մարդու ցանկութիւնը կատարել:

Մի քանի օր անցած Սահառունին գործից տուն դառնալով Կատարինէն սուզ ու շիւանի մէջ տեսաւ:

—Խնչ ես լալիս, Կատեա, զու գիտես, որ աշքերիդ արտասուք տեսնելիս հողիս քաղւում է, ասաց նա քնքշութեամբ բանելով նորա ձեռքերբ:

—Խնչ է, կարծում ես, քիչ բան է ինձ համար, որ չեմ կարողանում նորոգել օթեակի արօնեմենոց: Մեր բոլոր ծանօթները արդէն զրւել են: Ձեմ իմանում քեզ ինչ է պատահել, երէկ խնդրեցի մետաքսէ շոր առնես՝ չ'առար, այսօր օթեակին չես թողնում գրւեմ, վաղը ով է իմանում...

Էլ չը կարողացաւ շարունակել, լացից կոկորդը բոնեց, բացց մարդու վրայ յառած հայեացքը յանդիմանութեամբ լի էր:

—Միթէ՞, հոգիս, կարծում ես թէ զիտամամբ միայն քեզ վլշտացնելու համար եմ անում այդ: Դու պէտք է լաւ իմանաս, որ եթէ ձեռքիցս գար, չէի թողնի որ զու զրկւեկիր թողնի որ զու զրկւեկիր այդ անմեզ հաճոյքներից: Համբերութիւն ունեցիր, սիրով ուրախ պահիր, որ ես էլ քեզ տեսնելով սիրտ առնեմ, կարողանամ առաջւայ եռանդով աշխատել: Արտասունքդ որ տեսնում եմ, Կատեա, էլ սիրտ չի մնում բան անելու:

Սահառունին սկսեց զգւել ինոջը: Նա զգացւեց և զրկելով մարդուն խոստացաւ էլ ցիմարութիւններ չ'անել: Կատարինէն նոյնքան հեշտ ու շուտ էր մվսիթարւում, որքան հեշտ յուսահասուում էր...

Արքան Սահառունին աշխատում էր, որ կինը տանը ուրախ լինում: Նա օրէցօր աւելի ձանձրանում ու տիրում էր, և միայն այն ժամանակն էր նորա երեսին ծիծաղ երևում, երբ որ մարդը առաջարիւմ էր մի տեղ զբօսանքի կամ հիւր դնալ: Մարդու բոլոր ջանքերը զարգացնելու կնոջ խելքը, ընդլացնելու նորաաշխարհահայեացքը, լուսամիտ հայեացքներ ներշնչելու նորան ի զուր

անցան։ Սահառունին վերջապէս համոզւեց, որ ուղղւելու յայս չը կալ. դատարկութեան արմատը շատ խոր էր։ Նա շատ էր լսել ինստիտուտի կրթութեան թերութիւնների մասին. այժմ նա իւր աչքով տեսաւ, թէ ինչպէս ինտստիտուտի վայրիվերոյ ուսումը զարգացնելով օրիորդների մէջ փայլելու, աչք շլացնելու ցանկութիւնը, բոլորովին մեռցնում է նոցանում կատարելագործւելու, զարգանալու ձգտումը։

(ԿԸ Հաբուճակւի)

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՅԱԳՈՒՄ

Յ. ՍԱԴԱԹԵԼԵԱՆԻ

(Նարունակութեւն¹⁾)

Այժմ այլ ևս կասկածանքի առարկայ չի կարող լինել, որ Հայաստանը աւելի հին ժամանակներում անհամեմատ աւելի շատ ազգաբնակութիւն ունէր, քան վերջին դարերում և այժմ մեր երկրի շատ մասերում գտնուում են ամայի և քար քարոտ տարածութիւններ, որոնց մէջ ճանապարհորդը զարմացմամբ պատահում է քաղաքների և գիւղերի աւերակների: Առաջի անգամից նա չի կարողանում ըմբռնել, թէ ինչպէս մարդիկ բնակութիւն են հաստատած եղել այդ անապատներում և միջոց ունեցել հոյակապ շինութիւններ կանգնեցնել: Նա տեսնում է հնձաններ և չի կարողանում հասկանալ, թէ արդեօք ինչպէս այդ տեղ այգիներ էին բուսնում: Բայց նորա համար այդ գժւար խնդիրը բոլորովին պարզում է, երբ նրան ցոյց են տալիս կամ նա ինքը կարողանում է տեսնել հազիւնշմարելի հետքեր վազուց աւերւած ջրանցքների, որոնք շատ անգամ սկսում են հեռաւոր լեռներից: Սուրմալու գաւառի համարեակէս մասը, որ այժմ կատարեալ անապատ է, մի ժամանակ ծածկւած է եղել պաղաբեր այգիներով և արտերով:

Այդ գաւառում տարածւող Արարատեան լեռնաշղթայով անցնելիս են եղել ջրանցքներ, որոնք ոռոգել են ահազին տարածութիւն: Այդպիսի ջրանցքների գոյութիւնը ապացուցանելով անկասկած մեծ

¹⁾ Տե՛ս «Մուլք»-ի № 5.

տեխնիկական հասկացողութիւն զբանց առեղծող ժողովրդի մէջ, ցոյց է տալիս միւնոյն ժամանակ, որ այդ ժողովուրդը սպասած լինելով բոլոր մշակութեան յարմար հողերը, իւր բազմամարդութեան սպատճառով, ստիպւած է եղել մ.ծ հմտութիւն և աշխասանք գործ զնել ծառայեցնելու հողագործութեան այնպիսի տարածութիւններ, որոնք իրնէ անսպաս են եղել և առանց աշխատութեան ոչ մի բերքի լնողունակ: Այս երեսոյթին կարելի է հանդիպել համարեա ամեն մի հայկական գաւառում: Հայաստանի նախնի բազմամարդութիւնը ապացուցում է և ուրիշ կողմից: Հողի նոյն կարօտութիւնը, որ ստիպել է ջրանցքներ և ամբարտակներ կառուցանել, հողագործութիւնը տարածել է մի ժամանակ մեր երկրում մինչև նրա կիմայական սահմանի վերջին կէտը: Նոյնամման աւերակներ ինչպէս վերև ցիշւածները պատահում են այնպիսի բարձր լեռների վերաց, որտեղ բացի ալպեան բոյսերից հազիւ հազ բուսնում են ցորեն և գարի: Մասիսի արևեմտեան գմւարամատչելի կողքի վերաց, որ շատ հեռու մշտական ձիւնից, կանգնած է մի աւերակ մի քանի կոփածոյ քարերից շինւած եկեղեցիներով: Այդտեղ այժմ ապրում են մի քանի տուն կիսավայրենի քրդեր իրանց խաշիններով:

Հայկական տարրի նւազիչ պայմանները միւնոյն ժամանակ կորստաբեր էին սեփականութեան զարգացման համար: Այն թշնամին, որը մինչև անգամ սպատերազմը վերջանալուց յետոյ, միայն իւր արիւնոշտութեան և վայրագութեան բաւարարութիւն տալու համար չէր ինայում տիրած երկրի բնակիչների կեանքը, մինչև անգամ շինութիւնները, հասկանալի է թէ ինչպէս կը վերաբերւէր այդ բնակիչների իրաւունքներին, մասնաւորապէս սեփականութեան: Վերջիններիս մասին նորա աշքում հարց անգամ չէր կարող գոյութիւն ունենալ: Այն կեանքը, որը առաջ եկաւ Հայաստանում բարբարուների արշաւանքներից յետոյ՝ իսկապէս կեանք չէր, այլ մի աեսակ օրհասական կորիւ էր, որից հրաշքով ազատուեց հայկական տարրը վերջնական կորստից: Յափշատկութիւնը, ամեն տեսակ իրաւունքի բռնարարութիւնը և կոսորածը թրքո-թաթար ազգերի կեանքում նոյն չափ ազգեցիկ և գրաւիչ են եղել, որքան մարդկութիւնը դէպի յառաջադիմութիւն մղող ձգտումները հնդկա-եւրոպական ազգերի համար: Այդ ցեղի հակակուլտուրական ինստինկտները չը թուլացան

ժամանակի ընթացքում, չը նայելով ոչ մի շփումի, չը նայելով որ նոքա բռնեցին այն երկիրները, որտեղ որրանն էր քաղաքակրթութեան: Եւ այս տեսակ մի տարր չը բոնեց մեր երկրի մի որոշ մասը, ինչպէս Բուսատանում, այլ նաև տարածւեց ամբողջ երկրի մէջ և այդ պատճառով նորա տերիչ ազգեցութիւնից ազատ չը մնաց ոչ մի հայկական գաւառ: Խնչ որ գարերի ընթացքում առեղծել էր մեր ժողովուրդը, քանդուեց և նա գատապարուեց ոչ թէ միայն կանգ առնելու զարգացման մի կէտի վերաց, այլ շատ բանում յետադիմելու: Եթէ աւելի խորը տեսակեաից նայենք, ծանր վտանգը միայն մի ազգի չը հասաւ, միևնոյն ժամանակ և ամբողջ քաղաքակրթութեան: Բայց այդ քննելը մեր նպատակից դուրս է: Մենք պատճութեան զիմեցինք որոշ նպատակով: Մեզ հարկաւոր էր որոշելու այն հետեւանքը, որ ունեցան յայտնի պատճական անցքեր հոգատիրութեան վերաբերմամբ: Մեզ հարկաւոր էր պարզել համայնական հողատիրութեան երկանակեցութեան պատճառները մեզանում, և պատճութիւնը բացատրում է մեզ այդ:

Ենակիների նւազելու պատճառով հողագործութեան համար պիտանի հողը մեզանում քանի գնում էր ընդարձակւում էր և իւրաքանչիւր յետագայ սերունդ աւելի շատ հողով կարող էր օգտաել քան թէ առաջ: Իւրաքանչիւր հողագործ կարող էր մշակել այնքան հող, որքան ցանկանում էր և ընտրել այդ հողը այնտեղ, որտեղինքը կը կամենար: Հողի առառութեանը չափ չը կար: Հողը այսպիսի դէպքերում կարելի է համեմատել բնութեան միւս բարիքներին, որոնցից իւրաքանչիւրը կարող է օգտաել որքան կը կամենայ: Բայց այդ ցանկութիւնը աահման ունի: Աշխատանքի արդիւնաբերութիւնը շատացնելու համար, հարկաւոր է բանող ոյժ և հարկաւոր է, որ աւելացրած արդիւնքը մի որ և իցէ տնտեսական արժէք ունենայ: Աւելորդ է ասել որ այնպիսի քաղաքական պայմանների մէջ, որոնցում գտնուում էր Հայաստանը, բերքերի արտահանութիւն չէր կարող լինել: Զէր կարող լինել և ներքին պահանջ, որովհեաւ նոյն պատճառները արգելաւորիթ էին քաղաքների զարգացման և եղած քաղաքների բնակիչները նոյնպէս պարապւում էին հողագործութիւնով: Մի քանի քաղաքներում մինչև այժմն էլ ժողովրդի մի մասը պարապւում է հողագործութիւնով, ինչպէս օրինակ Ալեքսանդրոսովում, նոր հայագէղում, և

այլն։ Այսպէս ուրեմն արդիւնաբերողը, բացի իրանից, ուրիշ սպառող չունէր, ուստի և շահ չունէր արդիւնքները աւելացնելու նպատակով՝ ընդարձակել իւր մշակութեան հողի տարածութիւնը։

Այսպիսի պայմաններում մասնաւոր սեփականութեան գաղափարը չէր կարող զարգանալ, չէր կարող զարգանալ ցանկութիւն գիւղացու մէջ բացառապէս և մշտապէս իրան յատկացնել այս կամ այն հողը, որովհետեւ նորա ընտրութեան համար խոշնդու չը կար՝ իւր կարիքների չափ նա կարող էր հող մշակել որտեղ և որքան կամենար։

Նոյն իսկ դաշտերի առառութիւնը հարկաւ պիտի թելաղբէր շատ շուտ փոխելու վարելահողերի տեղերը, սպառւածից անցնելու աւելի պարարտին։

Միւնոյն ժամանակ անընդհատաբար գոյութիւն ունէր մի ուրիշ նշանաւոր խոշնդու մասնաւոր սեփականութեան զարգացման։ Դա բնակութեան անհաստատութիւնն էր և իրաւունքի անապահովութիւնը։ Ամեն մի համայնք դառը փորձերից լաւ գիտէր որ երկար չի տեկելու նորա գոյութիւնը, որ մի օր կարող է հիմնայատակ լինել նորա բնակութեան գիւղը և որ նորա անդամները սրի ճարակ կը լինեն կամ կը գաղթէն։ Այսպիսի պայմաններում հասկանալի է, որ հողատիրութեան կազմակերպութիւնը չէր կարող առաջ ընթանալ, պիտի կանգ առնէր և մնար միւնոյն դրութեան մէջ, քանի շարունակում էին գոյութիւն ունենալ այդ պայմանները։ Եւ ահա ինչն էր պատճառը որ համայնական հողատիրութիւնը մեզանում երկար ժամանակ տեկեց և հասաւ մինչև մեր օրերը, չնչին բացառութիւններով։

Իոլորովին այլ ուղղութիւն է ստանում հողատիրութիւնը, երբ պիտանի հողի տարածութիւնը մնում է նոյնը, իսկ ազգաբնակութիւնը անընդհատ աւելանում։ Այդ դէպքում անկասկած կը գայ ժամանակ երբ բոլոր հողագործութեան համար պիտանի հողը կը սպառւի։ Բայց համայնքը անընդհատ աճում է, իսկ նորա աւելացած անդամների պահանջներին պէտք է բաւարարութիւն տալ։ Այդ ժամանակ դիմում են վերաբաժանման (պերեմբլա)։ Համայնքը ընդհատում է իւր լուս համաձայնութիւնը, որով նա մինչ այժմ թոյլ էր տալիս իւր անդամներին ազատ օգտականութիւն իրանց բռնած հողերից և նորերին ափելու, որովհետեւ նա այդ էլ չի կարող թոյլ

տալ առանց գոհելու իւր անդամների մի մասի շահերը յօգուտ միւս-ների. և նա կարգադրում է հողի վերաբաժանումը, որի սկզբունքը լինելով միւսնոյնը, արտայացուում է մի քանի ձեւերով։ Համայնական հողատիրութեան հիմքը կայսնում է ոչ թէ այս կամ այն հողատիրական կարգերում, այլ այն համոզմունքի մէջ, որ ունի համայնքը ամբողջ գիւղի հողի վերայ։ Եթէ համայնքը գիւղական հողը իւր իրաւասութեան է ենթակայ համարում, հողատիրութիւնը այդ տեղ համայնական է, թէկուզ մի կտոր աղատ հող չը լինի և բոլորը բանում լինին մանաւոր ընտանիքները, որոնք կազմում են այդ համայնքը և վերաբաժանումը զեռ տեղի ունեցած չը լինի։ Համայնքը կարող է մտցնել վերաբաժանումը և փոփոխել իւրաքանչիւրի ձեռքին ունեցած հողի չափը։

Վերաբաժանման գոյութիւնը անհրաժեշտ պայման չէ համայնական հողատիրութեան։ Մենք հետեւում ենք պրօֆեսսօր Կուալեսկու կարծիքին, որը արեւմտեան Եւրոպացի հողատիրութեան պատմութեան մէջ ասկցուցանում է վերաբաժանման ուշ ծագումը, որից առաջ լինում է առհասարակ նախադրաւական ձեր, զրաւման ձեր (զախառական սիստեմա), որը կայանում է նրանում, որ համայնքի իւրաքանչիւր անդամը հողի առատութեան պատճառով ազատ աւելացնում է իւր փարելահողերի տարածութիւնը, որքան կարողանում է։ Խշպէս ասացինք, վարելահողերի սպառումը չետեղնում է վերաբաժանմանում (ուրեմնական սիստեմա)։ Միւնոյն պատճառը սկսկում է ազգել մասնաւոր սեպհականութեան շրջանի տարածման վերայ։ Մասնաւոր սեպհականութիւնը նոյն չափ հին է, որքան հին է մարդկային հասարակութիւնը, բայց նորա շրջանը սկզբում եղել է շատ նեղ, ամփոփելով իւր մէջ միայն տունը և ազգին, որոնք անհատի աշխատանքի արտադրութիւն են և հետևապէս պիտի պատկանեն անհատին։ Բայց այդ շրջանը ժամանակի ընթացքում տարածւելով, բըռնում է գիւղական հողի ամբողջ տարածութիւնը։ Մասնաւոր սեպհականութիւնը ընդարձակող գործիչները բարդ են և ամեն տեղ միանման չեն։ Այստեղ մենք կարիք չ'ունենք դոցա քննել։

Եւ այսպէս եթէ մենք հայոց պատմութեան մէջ չենք գոնում տեղեկութիւններ հողատիրութեան վերաբերմամբ, մենք նորանում գտնում ենք բացարձութիւն համայնական հողատիրութեան երկա-

րակեցութեան մեզանում, ընդունելով որ այդ հողասահրական ձեր առաջւայ եղածի շարունակութիւն է: Հակառակ ենթադրութիւնը դէմ կը լինի պատմութեան տգիտութեան:

Ինչպէս ասել էինք նախընթաց զլխում իրաւաբանական ցիշատակարանների բացակայութիւնը հայ գրականութեան մէջ տևում է մինչև 12 զարը, այսինքն երբ սկսում է հայ ազգի քաղաքական և կուլտուրական անկումը: Այդ ժամանակ կազմեց իւր յայտնի գատաստանագիրը Մխիթար Գոշ անւանւած գիտնական վարդապետը: Այս գատաստանագիրքը ինչպէս յայտնի է ընթերցող հասարակութեանը, հրատարակեց ընդարձակ ցառաջարանութիւնով՝ լի գիտնական տեղեկութիւններով և խորհմաստ գատողութիւններով հայկական իրաւաբանութեան վերաբերմամբ վաղակորոց Բաստամեան վարդապետը: Այդ յառաջարանութիւնը խսկապէս մի խելացի և դիտնական հետազոտութիւն է հայկական իրաւաբանութեան մութ աշխարհում:

Թէպէտ Մխիթարը նախադրութեան 10-րդ զլխում թւելով իւր գատաստանագրքի աղբիւրները, որոնք են, բնական օրէնքներ, օտար քրիստոնեայ ազգերի օրէնքներ, մահմէդական օրէնքներ, սուրբ գիրքը, Հայոց Եկեղեցու կանոնները, նա չի ցոյց տալիս ազգային աղբիւր ոչ աւանդական և ոչ գրաւոր, բայց հայր Բաստամեանը իրաւացի գատում է. «Եթէ նա (Գոշը) հարկաւոր և օգտակար համարեց մի քանի բաներ քաղել ուրիշ քրիստոնեայ ազգերի իրաւաբանական աւանդութիւններից, մահմէդական և հրէական գրաւոր օրէնքներից, ինչպէս կարող էր առանց ուշադրութեան թողնել այն ազգի իրաւաբանական աւանդութիւնները, որի համար նա գրում էր իւր գատաստանագիրքը: Եւ արդարեւ որ նա ոչ սակաւ նիւթ է քաղել նաև ժողովրդի մէջ եղած իրաւաբանական աւանդութիւններից՝ այդ պարզ երեւոմ է ամբողջ գատաստանագրքի մէջ մանաւանդ նորա Երկրորդ մասնում, ուր ամփոփւած են առաւելապէս աշխարհական օրէնքները»: Նա այդ հատաստում է և Մխիթարի խօսքերի հիման վերայ. «Առաջին մասնի 109 կանոնի մէջ, ուր նա խօսում է ազգականների ամուսնութեան չհասութեան վերայ, նա ասում է. «Եւ թէ ունեի յաղազս այդոցիկ այլ ինչ ըստ տեսութեան զնել մտաց՝

ո՞չ կամեցաց զի մի՛ ընդդէմ ինչ կարծիցեմ կանոնաց, այլ որ ոչ
թուին ի կանոնաց ի կենդանի առաք ձայն էր. իսկ երկրորդ
մասնի առաջին յօդւածի մէջ բացատրելով թէ ի՞նչպէս պէտք է բա-
ժանել պատերազմում ժողոված աւարը, նա ասում է՝ «զայս ըստ
սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց»: Եւ մենք
բոլորովին համերաշխ ենք հայր Բատուամեանի համոզմունքին, որ
զատաստանագրքի նշանաւոր նիւթը պիտի մատակարարէին ժողովրդի
իրաւաբանական աւանդութիւնները Զը նայելով, այս հանդամանքին չը
նայելով, որ դատաստանագիրքը նախասահմանւած էր մի հողադործ
ժողովրդի գործադրութեան համար, ընդարձակ դատաստանագրքում
ժամանակակից հողատիրութիւնը շատ չնշին դատի նիւթէ ներկա-
յացնում, որից անկարելի է նորա կազմակերպութեան մասին մի որոշ
կարծիք կազմել: Այս փատոից ուղղակի յետևում է այն, որ դատաս-
տանագրքին ժամանակակից ժողովրդի մէջ պատահող հողատիրական
վէճերը, դատաստանականների իրաւասութեան ենթակայ չեն եղել,
այլ ուրիշ հիմնարկութեան, որի մասին մեր խօսքը յետոյ է:

Այն մի քանի յօդւածներից, որոնք շօշափում են մեզ հետա-
քրքրող աւարկան, երեւում է, որ դատաստանագրքին ժամանակակից
Հայատանում գոյութիւն են ունեցել, եկեղեց ական կալւա-
ծատիրութիւն, ազնւական կալւածատիրութիւն և
զիւղացու անկախ հողատիրութիւն. բայց չի երեւում
այդ իրաւունքների էութիւնը և սահմանը, որոնք առհասարակ մեծ
զանանազմանութիւն են ներկայացնում և այդ կողմից հասնութ այն-
պիսի ծայրահեղութեան, որպիսին օրինակ կարելի է տեսնել մեր
•Միւլքադարութեան և անդլիական «Անդլորդութեան» մէջ: Մինչ-
պես մեր միւլքադարը առանց իրաւունք ունենալու խառնւել հո-
ղաբաժնութեան մէջ, ստանում է հողագործութեան արդիւնքի մի
որոշ մասը ($\frac{4}{30}$), լենդլորդը կատարեալ սեպհականատէր է իւր կալ-
ւածքի, և տալիս է վերջինս կապարզ նորան, ով աւելի է տալիս:
Հազւագիւտ շեն դէպքերը երբ նա (լինդլորդը) հեռացնում է զիւ-
ղացուն, քանիդում է նորա խրճիթները և իւր կալւածքը արօտա-
տեղի գարձնում, եթէ այդ գտնում է իւր համար աւելի օդ-
ատկար:

53 յօդւածը խօսում է եկեղեցական կալւածների մասին, որից

երևում է, որ այդ կալւածները հոգեւորականութիւնը իրաւունք է ունեցել և վաճառելու. «Ասան ընչից, որ անւանեալ իցէ եկեղեցւոց զինչ և իցէ եթէ գեղ, եթէ այլ ինչ, մինչև եպիսկոպոս լեալ է ի տեղուցն և երեցունք վաճառեցին, իշխան լիցի անդրէն ի նոյն պահանջել. բայց եպիսկոպոսն կշռեսցէ զիրաւնն և զարժանն, եթէ մարդ է առնուլ զգինն կամ դարձուցանելո... Բայց չը նայելով այդ հանգամանքին (վաճառելու իրաւունքը) գիւղացիք այդ եկեղեցական կալւածքում կարող էին զանազան հողատիրական կարգեր ունենալ համայնականից սկսած մինչև մասնաւոր սեպհականութիւնը, կրելով եկեղեցու վերաբերմամբ որոշ պարտականութիւններ տուրքով և աշխատանքով: Այդպէս է մեր այժմեան վանքական կալւածներում, որոնցում եկեղեցին ստանալով որոշ մուտք հողաբաժանական կարգերը թողնում է համայնքին: Այդպէս էր Վրաստանում, ինչպէս ապացուցանում է պ. Իահաթիրեանը իւր հետաքրքրական բրօշիւրում „Լիպիա և պոզեմելինա պրավա Դրենեյ Հրազին“: Եկեղեցուն կալւածներ բաշխելիս, սկզբում մինչև անգամ սահմանները չէին որոշում այդ երկրում, որովհետև մուտքը, որը որոշ էր, կախած էր ոչ թէ հողի տարածութիւնից, այլ տների թւից: Միայն 17 դարում այդտեղ կալւածների մուտքը վերածւեց արդիւնքի մի որոշ մասի, իսկ հողը մնաց համայնքի անմիջական իրաւունքին:

Երկրորդ մասի III գլուխը շօշափում է ազնւական կալւածատիրութիւնը: Այս յօդւածի մէջ շատ նշանաւոր կէտ կայ. «Ազատ յԱրարչէն եղև մարդկալինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան զի թողեալ զտերունին ազատ է ուր և կամեսցի կալ: Ապա այսմ ոչ ներէ ոք իտերանցն և բռնագատ է զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահւան հօրն ազատ են որդիք ծնեալ այլ ուր և ւչ անդա: Այս յօդւածի վերաբերմամբ կարելի է ասել նոյնը ինչ որ նախորդի, մասին ասւեց—այն՝ որ նա ցոյց է տալիս ազնւական կալւածատիրութեան գոյութիւնը միայն, որը կարող էր զանազան հողատիրական կարգեր ունենալ: Աւելի հետաքրքրական է այս յօդւածը ուրիշ կողմից: Սորանից պարզ երեւում է, որ մեզանում եղել են գիւղացիք սահմանափակած իրաւունքներով. արդեօք ճորտութիւն է եղել այդ (քրքութեան սպառութեան) թէ աւելի սահմանափակ կախում, մնում

է մութ։ Որ այս յօդւածը աչքի առաջ ունի հողագործ գիւղացի-ներին և ոչ սարուկներին, պարզ երեւում է «ծառայել տերանց յա-ղագս պիտոցից եղեւ հողոյ և ջրոյ խօսքերից։ Բայց նոյն իսկ ճորտու-թիւնն էլ չի որոշում հողատիրութիւնը։ Խուսաստանում ճորտերը, կրելով որոշ պարտականութիւններ տուրքով (օքրօք) և աշխատան-քով (նարպառ) իրանք էին որոշում հողատիրական կարգերը։ Աւելի հետաքրքրական է 106 յօդւածը, որը խօսում է նոր գիւղ շինելուց յետոյ հողերի բաժանման մասին։ Բայց այս յօդւածն էլ չի պար-զում՝ թէ ինչ տեսակ հողատիրութիւն պիտի դոյութիւն ունենայ այդ գիւղում—մամնաւոր սեպհականութիւն թէ համայնական։ «Յորժամ զառաջին շինիցի գիւղ, չէ հաստատուն բաժանումն հողոյն և ջրին և այլոց այսպիսեաց մինչ բաւական բնակիչք ժողովիցեն և ապա բաժանումն հաստատիցէ։ Ապա թէ աւերակ շինիցի և չից է բազմաժամանակեայ, մինչ զի գիտել իւրաքանչիւր զսահման ան-դաստանաց և զայլոց, իւրաքանչիւր ըստ սահման նախնեացն կալցին։ Իսկ թէ բազմաժամանակեայ իցէ և անգիտելի և տէրութեան փո-փոխումն եղեալ նորոգ արացեն բաժանումն հաւասարադասու-թեամբ, նախ եկեղեցւոյն և ապա այլոց մասն աւելի տալով, որ զիւաւորն իցէ գեղջն վասն հոգալոյ զայլսա։ Եթէ ընդունենք, որ այս յօդւածը ուղղակի մամնաւոր սեպհականութեան մասին է խօ-սում, դա չի նշանակում, որ այս հողատիրական ձեւ եղել է տի-րապետող։ Մամնաւոր սեպհականութիւնը և համայնական հողատի-րութիւնը միևնոյն երկրում կարող են զուգընթացաբար գոյութիւն ունենալ։ Բայց «բաժանել» խօսքը գործ է ածւում և համայնական հողաբաժանութիւնների ժամանակի համայնական հողառիրութիւնը չի ենթադրում անպայմանն անընդհատ վերաբաժանումներ։ Վերջին դէպքումն էլ (համայնական հողատիրութեան ժամանակ) կարող էր բաժանում լինել անորոշ ժամանակի համար, մինչև որ համայնքը կարիք կը զգար փոփոխութիւններ անելու։ Ինչպէս կը տեսնենք յետոյ, մեր համայնական հողատիրութիւնը հիմնւած է այդ սկզբունքի վերայ։ Իսկ ինչ վերաբերում է համայնքի մի քանի անդամներին աւելի հող տալուն, որը առաջարկում է յօդւածը «վասն հոգալոյ զայլս», այդ տեղի ունի և ուրիշ երկիրներում, ուր համայնական հո-ղատիրութիւն է, օրինակ Հնդկաստանում Պէնջապի շատ համայնք-

ներում, ինչպէս այդ հաստատում են Անզլիացի պիտնականը Սէնը և Եղիացի Լաւելէն:

Աւրեմն այսպէս, գատաստանագրքում չը կան յօվւածներ, որոնք որոշէին համայնքի անդամների հողացին յարաբերութիւնները, միմիանց վերաբերմամբ և համայնքի վերաբերմամբ, —ուրիշ խօսքերով՝ գատաստանագրքից չի երևում թէ ինչ հողատիրական կարգեր են աիրապետում նորա ժամանակակից գիւղական համայնքներում:

Այս իրողութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ կարելի է կարծել առաջի անգամից: Միայն մեր գատաստանագրքում չենք տեսնում այդ բացակայութիւնը, այլպէս է և ուրիշ շատ ազգերի նախնի գատաստանագրքերում, ինչպէս օրինակ զերմանացիների, Թումների: Առաջի անգամից շատ անհասկանալի է թւում՝ թէ ինչպէս մեր գատաստանագիրքը նոյնպէս և վերև ցիշւած ազգերի առանց իրաւարանական պաշտպանութեան են թողել առաջնակարգ տնտեսական նշանակութիւն ունեցող մի առարկաց, որը համարեաց միայնակ ապրուսոի միջոցն է եղել այն ժողովուրդների, որոնց համար նախսառահմանւած են եղել այդ գատաստանագրքերը: Որ հողագործ երկրում ամենից շատ հողացին վէճեր պիտի պատահեն, դրանում չի կարող կատած լինել: Հարց է ծագում, ի՞նչու այդ հողացին վէճերի համար օրէնքներ չը կան այդ գատաստանագրքերում Պարզ է, որ այդ վէճերը գատաստանատներում չէին գտառում, ուրեմն ուրիշ հիմնարկութեան էին ենթակաց: Մեր կարծիքով այսպիսի երևոյթ գատաստանագրքերում ուղղակի հետեւանք է երկրում տիրապետող համայնական հողատիրութեան և ուրիշ կերպ անկարող է լինել: Այդ ապացուցեց Արև մտեան Ներօպացի հողատիրութեան պատմութիւնը: Երբ տէրը և կառավարիչը գիւղական հողերի համայնք է, երբ վերջինիս առևն մի անդամը ձան ունի և մասնակցում է հողատիրական կարգեր կազմելու մէջ և օգտառում է այնշապէ հողով, որչափ թոյլ է տալիս նրան համայնքը, երբ տէրութիւնը յայտնապէս կամ լոելեան լնդունում է համայնքի այգախօսի մեծ իրաւասութիւնը գիւղական հողերի վերաբերմամբ, նա արդէն կարիք չ'ունի խառնուելու այդ համայնքի հողատիրական կարգերի մէջ իւր գատաստանատների միջոցով: Այդ գէպքում համայնքը է առաջին և վերջին գատաստանատեղը (ուղարկած): Աւրեմն, եթէ մի երկրի իրա-

ւաբանական յիշատակարանի մէջ լուսութիւն է պահպանւած գիւղական հողատիրութեան վերաբերմամբ, դա ուզգակի ցոյց է տալիս, որ այդ երկրում հողատիրական ձեւը համացնական է եղել:

Վերջացնելով սորանով մեր յօդւածի լնդհանուր մասը, հեռեալ դլխում մենք կ'անցնենք յօդւածիս անսիջական նազատակին:

(ԱՐ ՀԱՐՄՆԱԿԵՐ)

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ Ս. — ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕԲԸ: Արտասով-
ւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպարան Մ. Դ. Խօստինեանցի.
1890 թ., փոքր քառածալ, 157 երես, տառ. № 12, զինն է 40 կ.

Ս. Մելիք-Շահնազարեանցի վէպի
նիւթը առնւած է Բագու պանդխառու-
թեան գնացող սիսեանցիների կեան-
քից: Որովհետեւ պանդխառութիւնը մեր
ժողովրդական կեանքում հասարա-
կական նշանակութիւն ունեցող երե-
ւովթներից մէկն է, ուստի ուրախա-
լի է, որ նա զարձել է առարկայ
առնասարակ ուսումնասիրութեան և
մասնաւորապէս վիպագրութեան:

Պանդխառութիւնը, որի երեալը
հետեանք է տնտեսական և հասարա-
կական աճնպիտի հանգամանքների,
որոնք ստիպում են ժողովրդին՝ զբաղ-
մունք և ապրուսուամիջոց որոնելու
ծննդավայրից դուրս, լուսաբանւած
է վէպի մէջ այն տեսակէտից թէ նա
ինքը պանդխառութիւնը չաճախ ստա-
նում է մի տեսակ գրաւիչ, դէպի
իրան քաշող, ներգործական ոժ, որ
բազմացնում է պանդխառութիւնը թիւը:

Վէպի ընթերցանութիւնից մնում
է հետեեալ տպաւորութիւնը: Պան-
դխառութիւնը վնասակար է, նա տե-
ղափոխում է զիւղական առողջ և

թարմ ոչժը քաղաք, ուր նորան թու-
լացնում է և մեռցնում. նա սովորեց-
նում է և ընտելացնում պանդուխ-
տին քաղաքի ստոր խաւերի կենցա-
զալարութեանը. նա զրկում է ըն-
տանիքը ամուսնուց և նորա պատիւը
պաշտպանողից. նա տարածում է վա-
րակիչ հիւանդութիւններ մեր գիւ-
ղերում. նա քակագում է ժողովրդի
աւանդական կեանքի լաւ կողմերը,
նա մոցնում է շւազլութիւն և ազն:

Պանդխառութեան խնդիրը ի հարկ
է աւելի ընդարձակ է, քան ներկա-
յացրւած է վէպի մէջ. նա զեռ կա-
րօս է աւելի մանրամասն և խոր ու-
սումնասիրութեան. նա կապւած է
տնտեսական շատ ծանրակշիռ խնդիր-
ների հետ. բայց և աճնպէս նորա աճն
կողմը, որի մասին վիշեցինք, ներկաչ
գրքուում վիպական ձևով փոքր ի
շատէ պարզւած է:

Հեղինակը իւր վէպում փորձ է
փորձում գործածել ժողովրդա-
կան բառեր, ինչպէս են թոռ-
արև (սիրտ), շարան-շարան, տրխա-

տան, հետկի, երեսկահատ, պատա-
ծակ, սոռել, պաշկած, առասասան,
սովորած, լայակումած և ալին, ժո-
ղովրդական դարձւածներ,
ինչպէս են. Կորկոտ զցել, հայի չէն
են շինել, օճը բնից հանող, խօսքը
չուանի դնել և ալին. սական չէ կա-
րելի ասել թէ նա միշտ լաջողեցրել
է նոցա դորձածելու տեղին. Առա-
սարակ վէպը թէ ոճի և թէ բառերի
կողմից միապաղաղ գրւածքի տպա-
ւորութիւն չէ անում. տեղտեղ նա
շատ է մօտենում հասարակ ժողո-
վրդական լեղուին, իսկ տեղտեղ նա
այնքան զուտ զրական է, դառնում,
որ արդէն չէ սաղում վէպի ընդհա-
նուր բնաւորութեան. Խորի են
թւում. հու, խէ, վեր զաւանանք
(պատկենք) և սոցա նման բառերը
զրական լեղուի մէջ. Անխտիր գործ
են ածւած աչս և է ս ձեռը միենոն
տեղում. Երես 48-ում սաւաւու և
աղիշերու ը մտել են մի նկարագրու-

թեան մէջ անցարմար կերպով, երես
52-ում գործ է ածւած «թալիշ» բառը,
որ իբրև նորեկ սիսեանցիների ասած
խօսք անտեղի է. Կացիր (կաց),
արթնեցաւ (զարթնեց) և ալզ տեսակ
բառերը վեսառում են լեղուի սահու-
թեանը:

Աջնպիսի լաջողւած զլուխներ,
ինչպէս են վեցերորդ, եօթներորդ,
տասներորդը և մի քանի ուրիշները
գրւածքի (որի մէջ երեսում են ու-
սումնասիրութիւնն և դիտողութիւնն)
ընդհանուր բնաւորութեան հետ միա-
սին զարձնում են վէպը հետաքրքրա-
կան և լրտես զրական երեսութ ար-
ժանի գնահատութեան. Ցանկալի է,
որ հողինակը և ասղագաղում իւր
նիւթը առներ ժողովրդից, շօշափելով
նորա կեանքի այնպիսի կողմները,
որոնք տալիս են մեզ հասարակա-
կան մասագութեան նիւթ:

Ա. Ք.

ՍԱԿԱՆԻՆԻ, ԳԻՒԽՍԱԿԻ.—«Ձինական եղինջի մշակութիւնը» Հրատա-
րակութիւնն գնդապետ Ալեքսանդր Թոմի. Մելիք-Հայկագեանի, Թիֆ-
լիս, 1888 թ., տպ. Վ. Վարդանեանի. ուժածալ, 17 երես, տառ.
№ 12: «Դինը՝ ձրի»

«Ահա մի քանի տարի է ինչ եր-
կու կիսազների ուսումնականներին
սկսել է զբաղեցնել մի բոլոր, որին
մեծ ապագայ է վիճակւած. այդ՝ չի-
նական եղինձն է:

«Այդ թել շինելու և մանելու հա-
մար չարմար բոլոր կաշող է հարս-
տութեան մի նոր աղբիւր դառնալ՝

առանց այն էլ հարուստ կովկասի
համար:

«Փորձերի վերակ հիմնելով՝ եղին-
ձի համար բոլորովին պիտանի է ճա-
նաչւած կովկասի թէ հողը և թէ
կլիման:

«Այս բոլոր, որ կովկաս ըերւեց
առաջին անդամ 1862 թւին, հիա-

Նալի կերպով աճեց և կարող եղաւ եղանակի ամեն տեսակ փոփոխութիւններին դիմանալ:

«Թէպէտ և եղինձի հայրենիքը Ամիափի արեելեան երկիրներն են, բայց և այնպէս նա ընդունակ է ընտելանալու նաև պակաս առաջութիւն ունեցող կլիմային»:

«Այս բուսը եղինձի գասակարգին է պատկանում: Տուսարանները գորան անուանել են bochmeria urtica.

«Ամիափում այս բուսը chin grass է կոչւամ, Ֆրանսիացւում ramie (ռամի) որ ընդունւած է ամբողջ Եվրոպացւում, Ալժիրիացւում, Եզզիպտոսում և մինչև անգոստ Կոմիլասում: Խոկ Զինաստանում, Ճապոնիացւում, Հնդկաստանում և Նիդիրանցիան իշխանութիւններում բարձնի է զանազան անուաններով»:

«Անհերքելի է, որ եղինձի նրբաթելերը գերազանց են թէ վուշի, թէ կանեփի և թէ բամբակի նրբաթելերից: անպէս որ աւելորդ խառնադրութիւնը ջոկելուց լիտու, հնանալի մասած է ստացւում, և բայցի ազդ եղինձի թելերն աւելի երակարաւուն, մե-

տաքսանման, փակուն և առաձգական են, և բոլոր մանելիներից՝ կարելի է ասել, եղինձն աւելի մօտ է մետաքսին»:

«Օգուրգէթի նահանգի մէջ իշխան Դրիգոր Գուրիէլու կալւածներում եղինձի մշակութեան համար արած փորձերը, որոնք առաջին և լուրջ կերպով մշակածը կարելի է համարել, եթէ չը լաջողւեցան, դորա միակ պատճառը պէտք է համարել պ: Մարկի վաղահաս մահը, որ չը թողեց նրան իւր աշխատանքի պառազը վայելել: Խոկ պ: Մարկից լիտու չը գտնւեց մէկը, որ լսնձն առնէր այդ՝ հարսաւթեան մի նոր աղբիւր խոստացող ժառանգութիւնը»:

Համառօսակի սպազուցանելով, թէ եղինձի արդիւնաբերութիւնը կարելի է նաև կողմանակը կարճառօտ կերպով բացատրում է նորա մշակման միջոցները, նորանից նրբաթելեր ստանալը, նորա արդիւնաբերութիւնը և այն առաւելութիւնները, որոնցով նա գերազանցում է միւս բոլոր մանելիներին»:

v.—

Եկչիս, դօքտօր. — «Զինւորների ամենասովորական աչքացաւն ու նրանից հեռու մնալու միջոցները. կազմեց զ.-ը Ակչիս, ակնաբոյժ Կովկասիան զինւորական շրջանի: Խշանառութեան թովտութիւնով հրատարակութիւն գնդապետ Մելիք-Հայկազեանի: Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի 1888 թ., ուժածալ, 34 երես, առա. № 12. գինը ձրի:

«Զօրքերի մէջ երեացող աչքացաւի գէմ շատ միջոցներից մինն էլ անկարակած, նրանցում օգտակար

մտքեր տարածելն է, թէ ինչ են աչք հիւանդութեան պատճառները և թէ որոնք այն միջոցները, որոնցով կա-

բելի է դրանց առաջն առնել։ Այդպիսի մտքեր տարածելուն կարող է օգնել՝ բժշկի, սպափի (օֆիցերի) կենացանի խօսքը, նոյնպէս և տպագրական խօսքը, որպիսին անա այս գրքովն է. զինտորները այս կերպով ձեռք բերած օգտակար մտքերը՝ հայրենիք վերադարձած ժամանակ հետները կը տանեն և կը տարածեն նաև աղղաբնակութեան մէջ, որտեղ սաստիկ տարածւած է աչքացաւը։

«Այս զրքովկը իւր տեսակի մէջ լինելով առաջին փորձերից մինը, դրւած է զինտորների մէջ օգտակար մտքեր տարածելու համար, որպէս զի նրանք ևս իրանց կողմից նոյն մտքերը տարածեն աղղաբնակութեան մէջ։

«Դրագէտ զինտորներից շատերը միրում են կարգալ համարձակ կարելի է ենթագրել թէ նրանք, որոնք կը կարգան այս զրքովկը, իրանց կարգացածից դոնէ մի քանի հարկաւոր խրաներ կ'ըմբռնեն»։

Դրքովկում առած այս տողերը զաղափար են տալիս նորա բնաւորութեան մասին։ Հեղինակը քննում է երկու տեսակ աչքացաւեր, ա) տրախօմա առածք, որ աչքի կո-

պերն է բոհում և որ վարակիչ բնաւորութիւն ունի և թ) այն սաստիկ վտանգաւոր աչքացաւը, որ գուանում է սուսունակի ժահրից, եթէ նա զիազում է աչքին։ Այդ հիւանդութիւններից աղատ մնալու համար զրքովկը առաջարկում է զգուշութեան խորհուրդներ, այն է, գործ չածել հիւանդ մարդու երեսորդիչ, թաշկինակ, բարձ, աղտոտ ձեռքով չը արորել աչքերը և ամեն կերպ աշխատել մաքրութեան մէջ լինել¹⁾։

Ե.—

1) Խուսաց զօրքի մէջ ոչ մաշառիթ հիւանդութիւններից աչքացաւը կարեւը տեղ է ըռնում։ Մեղ հասած են ամենավերջին տեղեկութիւնները ռուսաց զօրքի հիւանդութիւնների մասին, որոնք վերաբերում են ներկայ թւականի փետրար ամսին։ Այդ պաշտօնական տեղեկութիւններից երեսում է, որ սոյն փետրար ամսին ռուսաց զօրքը ունէլ 44.207 հոգե աչքացաւով հիւանդներ։ Հասկանալու համար թէ այդ լինչ ակագին տոկոս է կազմում, աւելցնենք, որ պատերազմական մինիստրը զեկուցումից երեսում է, որ ռուսաց զօրքը առ 1-ի յունարի 1889 թ. բաղկացած էր 620.484 ստորին զինուրներից և 32.644 գեներալներից, շուրջ և աւագ սպայներից։

Խմբ.

Հեղինակ? — Տալագրութեան առաջին հնարողը՝ Յ. Գուտտենբերգ:
Թարգմանեց տիկ. Մարգարիտ Մոսկւա, տպ. Մկրտիչ Բարխուդա-
րեանի, 1890, փոքր քառածալ, 34 երես, տառ. № 12, գինն է
15 կուգ:

«Մուրճ»-ը առաջին անգամ չէ որ
բողոքում է մեր թարգմանիչների
այս վաստ սովորութեան զէմ, որ նո-
քա ծածկում են իրանց թարգմանած
գրաւածքների հեղինակների անուննե-
րը, և թէ ներկայ գրքովկի նկատ-
մամբ հեղինակի անունը մի առան-
ձին կարևորութիւն չունի, այնուա-
մենացնիւ առիթը չենք ուղում բաց
թողնել կրկին և կրկին բողոքելու
այդ երևոթի զէմ, որը արդէն սովո-
րութիւն է զառնում մնդանում:
Թարգմանչի անունից աւելի կարևորն
է հեղինակի անունը:

Դրանքով մի ցանկալի նպաստ է
մեր նորաբոլորջ էժանագին գրադա-
րանին: Նիսթի ընտրութիւնը չաջո-
ղակ է, պատմութիւնը հետաքրքրա-
կան, ոճը սահուն: Մի քանի տեղ
գործ են ածւած մեր լեզվի մի քանի
ձեերը, որոնք կամ սխալ են կամ
ցանկալի չեն (մարդիկներ, ապրաւ
և ալն): Նկատնք, որ Գերմանիա
չի ունեցած մի կայսր Ռոբերտ ա-
նունով (երես 5):

Դաշտով հեղինակին, նկատենք որ
տպագրութեան գիւտի մէջ նա աւելի
մեծ տեղ է տած կրօնականին և
աստուածալինին, քան այդ հարկա-
ւոր էր: Պէտք էր աւելի զրական
աչքով նաև լ գործի վերաց և ներ-
կալացնել Գուտտենբերգի գիւտը իբր

մի պարզ ձգտման արգասիք՝ տեխ-
նիկական նորութիւն ստեղծել մի-
սիրած գործի համար, առանց շրջա-
պատելու նորան ալլ և այլ կրօնա-
կան խորհրդաւորութիւններով: Որ
տպագրութեան գիւտից ամենից ա-
ռաջ օգտացին կրօնական գրքեր
հրատարակելու, այդ դեռ մի պատ-
ճառ չէ այդ գիւտի ծագման մէջ
ուրիշ զօրութիւն տեսնելու, քան ինչ
տեսնւած է բոլոր ուրիշ գիւտերի
հեղինակների մօտ: Գուտտենբերգը
իւր ժամանակի ամենալաւ արհես-
տագետներից մէկն էր և միննոցն
ժամանակ թէ գրասէր և գիւտութիւն-
ների տէր և թէ աղնւական ու մի-
ջոցների տէր մարդ էր, — պայման-
ներ, որոնք մեղնից մօտ 500 տարի
առաջ միննուն անձի մէջ միացած
դժւար էր գտնել: Մի աշդակիսի մարդ,
որ ունենաւ ոչ արտասովոր հնարա-
գիւտական խելք, բոլորովին բաւա-
կան էր տպագրութեան գիւտը ա-
նելու համար, նաև առանց միջա-
մտութեան խորհրդաւոր ոգիների և
երազավիճ երևովների:

Գրքովկը հետաքրքրական է նաև
նորանով, որ ծանօթացնում է ժա-
մանակւաց քաղաքական և հասարա-
կական մի քանի կողմերի հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՃԻԿՆԵՐ

«Մուրձակի անցեալ Նք ռում տպւեց Վեհափառ կաթողիկոսի կոնդակը վերաբերեալ հալոց ևկեղ.-ծխական ուսումնարաններին, որի գլխաւոր նիւթն է այդ ուսումնարանների ուսուցիչների և ուսուցչուհիների ոռօնիկ-ների սահմանումը։ Այդ նոր հրահանգի բնաւրութիւնը և հաւանական հետեւանքները խմանալու համար հարկաւոր է մի հաջեացք զցել անցեալի և ներկայի վերաց և որոշել իւրաքանչիւր շրջանի բնաւրութիւնը առհասարակ։ Հալոց ևկեղ.-ծխական ուսումնարանները մինչ այժմ երեք շրջան են անցել, մելքանում՝ Անդրկովկասում, ներկայ գարուս մէջ, առաջին շրջանը՝ տնօւմ է մինչ 60-ական թւականների սկիզբը, այդ շրջանում ուսումնարաններ շատ քիչ էին տարածւած, եղածների մեծագուն մասը՝ հին խալի. Փալական ուսումնարաններ էին, 60-ական թւականների սկզբից՝ Մատթէոսի կաթողիկոսութեան օրերակ սկսում է մեզանում ժողովրդական դպրոցների բացումը. ժողովրդական և ևկեղեցի մեռք ձեռքի տւած՝ ընդհանուր և կամուտներակ և առարքերալ հիմնում ևն մեր այժմեակ ևկեղ.-ծխական երկսեռ դպրոցները, հաստատաւում է ժողովրդական հոգութարձութիւնը։ Այդ շարժումը աւելի ևս մեծ ոգութ չարանակւում է Գէորգ Խ կաթողիկոսի ժամանակ։ Այդ շրջանը, որ տեսեց քսան տարի՝ մեր ևկեղ.-ծխական երկսեռ ուսումնարանների թէ զաղափարի պրոպագանդավի և թէ նոցահաստատութեան շրջանն է։ Այս շրջանումն է, որ թէ հոգեսր իշխանութիւնը և թէ ժողովրդը բնակլացան ուսումնարանական զործի մանաւանդ վարչական անտեսական մանրամասնութիւնների հետ. և այդ շրջանումն է, որ մեզանում կազմեց ուսուցչական դասակարգ, բաղկացած շատ տարբեր ցենզի տեր մարդկանցից՝ թէ արականներից, թէ իդականներից։ Այդ շրջանը՝ մեր ևկեղ.-ծխական ուսումնարանների ծննդեան ոլրօցեսի շրջանն էր։

1886-ից սկսած՝ ԱՄակար կաթողիկոսի օրերով, սկսւում է մի երրորդ շրջան, որի մէջ ես որոշում եմ երկու գծեր: Դոցանից մէկն է ուսումնարանական կարգաւորութիւնը: Եւ ահա թէ ինչ եմ ուզում դորանով ասել, մեր ծխակ.-եկեղեց, ուսումնարանները տարբեր ծրագիրներով հաստատած ուսումնարաններ էին. նույնանուն ուսումնարանների հաւասար դասսատներում նոյն ծրագիրը չէին անցնում. ուսումնարանի առաջին դասատնից աւարտածը չէր կարող առանց ազ և ալլութեան քննութիւն տալ կամ անցնել ուրիշ եկեղ.-ծխակ. ուսումնարանի երկրորդ դասատունը, կամ մտնել թեմական դպրոցի համապատասխան դասատունը: Ամեն մի ուսումնարան մի մի աւտօնօմ հաստատութիւն էր առանց կապի ընդհանրութեան հետ:

Ազդ փոխւեց. բոլոր ուսումնարանները, որ կրում են եկեղեցական-ծխական ուսումնարանի անունը, աչժմ ունին բոլորովին հաւասար ծրագիր: Միակերպ սխատեմի վերածել մեր տարրական ուսումնարանների ծրագիրները—ահա նպատակը: Ազ ինդիր է, թէ ինչ փոփոխութիւնների ենթարկեց ինքը ծրագիրը:

Ուսուցիչները ծառադում էին ուսումնարաններում՝ հոգաբարձութեան հետ կապւած պազմանների համաձայն. չը կար ոչ մի կանոն ծառակութեան տեղութեան համար: Մի տարի ժամանակով ծառակելը կանոն էր. աւելի երկարը՝ բացառութիւն: Դոցանից ամեն տարի ուսուցչական փոփոխութիւնների Ուսուցչի վիճակը ոչնչով չէր ապահովւած:

Ազդ փոխւեց. Ուսուցիչը աչժմ կապւում է երեք տարով: Թափառելը աչժմ անհրաժեշտութիւն չէ:

Ուսումնարանների ուսումնական թէ տնտեսական մասերը միանգամաց հոգաբարձութիւնների հսկողութեան ներքու էին: Ուսուցիչները ժողովրդական հոգաբարձուներից էին կախւած բոլորովին:

Աչժմ գործը մի փոքր ուրիշ տեսակ է. ուսուցիչները աւելի կապւած են աւագ ուսուցչի հետ, որը աչժմ աւելի մեծ մասնակցութիւն ունի խումբ կազմելում, քան հոգաբարձութիւնը. Խոկ աւագ-ուսուցիչը աւելի է հականում ուսումնական գործը, քան հոգաբարձութիւնները:

Ուսուցիչ առաջ լինում էր ով միայն ցանկանում էր և ում մի որ և իցէ հոգաբարձութիւն հրատիրում էր:

Աչժմ ուսուցիչ լինելու համար պահանջում է հաստատութիւն կաթողիկոսից, որը և հրատարակում է ուսուցիչների և ուսուչունների ցուցակը:

Ակապիսով մենք տեսնում ենք, որ ներկայ կաթողիկոսութեան զլիաւոր ուշքը, եկեղ.-ծխական ուսումնարանների նկատմամբ, ըստ արտաքինին, դարձրած է նոցա կազմակերպելու, սխառեմի վերածելու, նոցա համար որ և իցէ հաստատ և միակերպ կանոններ ստեղծելու վերաց:

Ես այս բոպէին չեմ մտնում ինդիրի մանրամասնութիւնների մէջ.

ապ միան աշխատում եմ ճանաչել այժմեալ հակոց ուսումնարանական իշխանութեան գործունէութեան գերիշխող ձգտումը. և գտնում եմ, որ՝ միակերպութեան վերածելը, կանոնաւորելը—ապէ գործունէութեան գվառը գծերից մէկն է:

Սա մի հայեացք է, որը բղխում է համեմատութիւնից:

Բայց ես գտնում եմ և մի ուրիշ զիծ, որը նմանապէս բնարաց է. ապ այն համեմատապէս՝ գերիշխող զերն է, որ լատիկացնում է հոգևորականին մեր ուսումնարանական գործերում: Հոգաբարձութեան երեք անդամներից մէկը անպատճառ ծխական քահանան է. երկրորդը՝ երեսփոխն է, ուրեմն նմանապէս եկեղեցու և բարձր հոգեւոր իշխանութեան հետ կապած ոմն: Եւ հոգաբարձութեան նախագահը նոյն քահանան է: Այսպէս է բանը անցեալ տարի հրատարակւած «կանոնների» համաձան: Արդ, «Մուրճ»-ը ապ մասին արդէն առիթ ունեցաւ նկատելու հետեւալլ՝... «մենք գտնում ենք, որ ապ նոր կանոնադրութիւնով ծխական քահանաների համար ստեղծւում է մի նոր պաշտօն, որը չաջողութեամբ վարելու համար նորա, ապ ծխական քահանաները, պէտք է ունենան աւելի բարձր կրթական ցենզ, քան այժմ նորա ունինու:

Ալդ ասաց «Մուրճ»-ը, երբ խօսքը միան քահանալի մասին էր, իբր հոգաբարձութեան անդամի և նախագահի:

Ակժմ ես գտնում եմ, որ ապ ձգտումը՝ ուսումնարանը կապել քահանաների հետ, մի նոր գործադրութիւն է գտնում նոր հրահանգի մէջ: Եւ առա թէ ինչպէս: Նոր կարգադրութեամբ հրամակւում է որ՝

«Եւ եթէ հնար իցէ, ընտրեսվլիք շաւագ ուսուցչութիւն զարժանաւորագոյնն ի քահանալից՝ մտնուց լընդհանուր ցուցակ, լատիկացուցանելով նոցա զդասու և եթ կրօնիու:

Արդ, անցեալ տարւանից հոգաբարձութեան մէջ իշխողը ծխական քահանան է, կրօնուսուց քահանան ուսուցիչների մէջ լուր տեղն ունէր: Խակ նոր հրահանգի զօրութեամբ, քահանան-կրօնուսուցը պէտք է նաև աւագ-ուսուցչի պաշտօնի համար գերադասութիւն ունենաց:

Եւ ըստ իս, նոր հրահանգի ամինակարևոր կէտը հենց ալդ է, որի վերաց և դարձնում եմ ընթերցողներիս ուշադրութիւնը:

Մնացեալում, ուսուցիչների սոճիկների կանոնաւորելու ջանքը ես համարում եմ իբր շարունակութիւն իմ վերը զծայրած համակերպութեան և կարգաւորութեան գործի, որ ես նմանապէս բնարուշ ընդունեցի ներկայ հայ եկեղ.-ծխական վարչութեան համար: Ակժմ ոսճիկներն են կանոնների տակ դնում, որպէս զի դէմն առնելի տևելորդ սակարգութիւնների, որ տեղի են ունենում ուսուցիչների և հոգաբարձութիւնների մէջ:

Բայց մի բան, որ աշքի է ընկնում առաջի անդամից, ապ այն է, որ դասաւանդական առարկաների մէջ մնա խարսխիւններ ևն զնուում:

կրօն, հայոց լեզու, ոռոսաց լեզու, ոռօծիկների նկատմամբ, համարւում են առաջնակարգ, մեացեալները՝ երկրորդակարգ—առաջինների համար զասին վճարում են ամենաշատում՝ 20 րուբլի, երկրորդների համար ամենաշատը՝ 15 ր.. Ազդ խտրութիւնը անկասկած վաս կերպով է ազդելու ուսուցիչների և ուսուցչական խմբերի կազմի վերաբ: Երկրորդ, նոր կանոններով արտակարգ դրութեան մէջ են դրւած այն երկդասեան ուսումնարանները, որոնց արդիւնքը անցնում է 2.640 րուբլին տղայոց և 2.910 րուբլին՝ օրիորդաց ուսումնարանների համար և այն միադասեան ուսումնարանները, որոնց արդիւնքը անցնում է 1450 ր. տղայոց և 1565 ր. օրիորդաց համար: Այս ուսումնարանները, որոնք ազդքանից աւելի ունին, ուրիշն և կարող են աւելի վճարել պէտք է առանձին կազմնեն իրանց եռամեաց նախահաշիւը և չականէ չանւանէ ներկացնեն բարձր հոգեոր իշխանութեանը այն ուսուցիչների և ուսուցչունիների անունները, որոնց ուզում են սահմանից դուրս ռոճիկներ տալ չուհիների մենք ունինք ացօր զոնէ մի քանի երկդասեան և մի-Մինչգեռ. մենք ունինք ացօր զոնէ մի քանի երկդասեան և մի-զասեան եկեղ.-ծխակ. ուսումնարաններ, որոնց տարեկան արդիւնքը նոր կանոններում նշանակւածից գերազանց է: Ես ուղղակի վերցնում եմ Ալիկանուններում նշանակւածից գերազանց է: Ես ուղղակի վերցնում եմ Ալիկանագրական տեղեկութիւնք եկեղեցական.-ծխական ուսումնարանաց համակագրական տեղեկութիւնք Ալիկեցական և կարագորդի ուսումնարանը (3.568 ր.), Ախալցխամի Նղիսաբէթեան և կարագորդի ուսումնարանները իրանց 11.100 ր. եկամուտով, Երևանի Ս. պետեան ուսումնարանները իրանց 4.244 ր.), Ալեքսանդրովի Արզութեան օրիգամիանեան ուսումնարանը (3.017 ր.), նոն տեղում Ս. Փրկիչ տղայոց ուսումնարանը (5.917 ր.), Շամախու օրիորդաց և տղայոց ուսումնարանը (7.365 ր.), Քաքուաչ օրիորդաց և տղայոց ուսումնարանը (10.870 ր.), Կղլարի օրիորդաց և տղայոց ուսումնարանը (6.121 ր.):

Բայց ես լորդուում եմ մեր գպրոցների հոգաբարձութիւններին՝ քաջօրէն օգտուել իրանց տւած իրաւունքից և ասլացով ասալ, որ լաւ ուսուցչին և լաւ ուսուցչունուն նաև լաւ վարձատրելու կամքն ունին:

Թերևս ինձ նկատեն, որ Կոնդակի վերջում վկացւում է, թէ «ե կ ե զ եց ական աղբիւրները մատակարարում են մեր եկեղ.-ծխական ուսումնարաններին աւելի մեծ գումարներ, քան նշանակւած են վիշատակւած կորաբներում և որ կից գորա հետ լորդոր է կարգացւում առաջնորդներին, որ նոքա աշխատուն ամեն եկեղեցու կից բանալ գէթ միւմի միտասեան»

ուսումնարան, իսկ միդասեանները աշխատեն ղարձնել երկդասեան ուսումնարանները. Ուրեմն պէտք է մտածել որ ռոճիկները կրծատւում են չօգուտ նոր բացեւվք ուսումնարաններին

Բայց, միւս կողմից, մենք բազմաթիւ ուսումնարաններ ունենք, ուր աւուցիչների ոօժիկները չեն էլ հասնում այն համեստ մեծութեանը, որ նշանակւած է այժմ նոր կանոններով: Այդ պարզ կարելի է տեսնել այն ցուցակից, որ, օգուելով պաշտօնական տեղեկութիւններից, ես ստորև դնում եմ «Մուրճ»-ի ընթերցողների առջև: Ահա այդ տեսակ ուսումնարանների վերաբ եթէ նոր կարգագրութիւնը կարողանաց ունենալ որ և է բարոյական ներգործութիւն, —այդ կը մինէր մի վաստակ: Առաջուց գուշակն այդ սական անհնարին է:

ԼՈՒՍԻՆԻ

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների տարեկան եկամուտները 1887/88 թւականին, պաշտօնական տեղեկութիւնների համաձայն:

Ե Ր Ե Ւ Ա Ն Ի Թ Ե Ս

Ե Ր Ե Ւ Ա Ն Ի Թ Ե Ս			Լ Ս Ա Հ Ա Կ Ի Գ Խ Ե Ն :		
Ե Ր Ե Ւ Ա Ն Ի Թ Ե Ս			Լ Ս Ա Հ Ա Կ Ի Գ Խ Ե Ն :		
Ե Ր Ե Ւ Ա Ն Ի Թ Ե Ս			Լ Ս Ա Հ Ա Կ Ի Գ Խ Ե Ն :		
1 Ա. Գ.ալեանեան.	4.244	2	10 Տղարկոց.....	250	1
2 Ա. Շողակաթեան	1.206	1	9 Գ.ալեան:		
3 Տղարկոց			11 Տղարկոց.....	225	1
4 Տղարկոց	691	1	12 Օրիորդաց	1.346	1
5 Տղարկոց	450	1	13 Տղարկոց.....		
6 Տղարկոց	620	1	14 Տղարկոց.....	43	1
7 Օրիորդաց	400	1	15 Օրիորդաց	4.300	2
8 Տղարկոց			16 Տղարկոց.....		
9 Տղարկոց	250	1	17 Օրիորդաց	997	1
			18 Տղարկոց.....		
			19 Տղարկոց	413	1

			Զ ա կ ա ռ ս :		
			41 Տղարաց	200	1
			Խվ-Ղ. արտ+վաս:		
			42 Տղարաց	250	1
			Հ ա մ ա ճ :		
20	Տղարաց	445	43 Տղարաց	602	1
	Եթուհին-ք:		Դ ա հ ա ր վ :		
21	Տղարաց	161	44 Տղարաց	178	1
	Ց ա լ ա ս :		Հ ա մ ա ճ :		
22	Տղարաց	770	45 Տղարաց	2.157	2
	Ձ ա ր ա ս :		Ն ո բ . Բ ա յ ա շ ե ր :		
23	Տղարաց	250	46 Ս. Հ ա մ ա ր ա մ . օ ր . .	3.463	2
	Տ ա կ ի լ ա ր :		և		
24	Տղարաց	168	47 Ս. Մ ա ր ա վ ա . ա ղ . .		
	Վ ա շ ա ր ա մ ա ն դ ա ւ :		Տ ա լ ա ւ 4 ի ւ զ :		
25	Օրիորդաց	2.120	48 Տղարաց	756	1
և			Բ ա հ ա մ ի լ ա ւ :		
26	Տղարաց		49 Տղարաց	360	1
	Ա շ ա ր ա մ ի :		Մ է շ ի :		
27	Տղարաց	653	50 Տղարաց	977	2
	Ի գ ր ե ր :		Լ ա ր ո :		
28	Ս. Շ ո շ ա ն ե ա ն . .	2.150	51 Օրիորդաց	4.131	2
և			և		
29	Տղարաց		52 Տղարաց		
	Գ է լ է ր ա ս :		Բ է հ ի վ :		
30	Տղարաց	620	53 Տղարաց	400	1
	Լ ո ւ զ :		Բ ա շ -Ծ է ր ա մ ի :		
31	Երշնկեանց տղարաց.	570	54 Տղարաց	200	1
	Ա շ ե ր ա ս ն դ ր օ ւ զ :		Փ է ր ւ մ վ :		
32	Ա ր դ ու թ . օ րիորդաց .	3.077	55 Տղարաց	393	1
			Բ է ր ն ա 4 ի ւ զ :		
33	Ս. Փ ր ի լ չ տղարաց . .	5.017	56 Տղարաց	400	1
			Ա ր դ ու թ .		
34	Ս ա հ ա կ ե ա ն օ րիորդ .	2.562	57 Տղարաց	369	1
			Լ ա ր ա շ ա մ ի :		
35	Ս. Ն շ ա ն , ա ղ ա ր ա ց .	800	58 Օրիորդաց	1.460	1
			և		
36	Ս. Ա ս տ ւ . տղարաց .	3.912	59 Տղարաց		
	Մ է ժ -Ղ. ա ր ա շ վ :		Ա ր ի շ ա մ ի :		
37	Օրիորդաց	10.542	60 Տղարաց	352	1
և					
38	Տղարաց				
	Հ ա մ ա ճ ի :				
39	Տղարաց	570			
	Ա շ ե լ ա ս :				
40	Տղարաց	250			

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄ

Թ է Ք Հ ե մ:	Տ ա շ	Լ	Շաւանդր:		
			Տ ա շ	Հ ա մ	Վ ա ճ
1 Դալեանեան.....	8.479	2	24 Տղանց	3.331	1
2 Մար. Յովանեան ..	7.455	2	25 Տղանց	330	1
3 Թանգոյիան	2.503	2	26 Տղանց	742	1
4 Ա. Մարիամեան ..	1.800	1	27 Օրիորդաց	2.473	2
5 Աւետեաց Եկեղեցի.	1.200	1	28 Տղանց		
6 Հայուհ. բար. ընկ..	2.000	1	29 Օրիորդաց	3.223	1
7 Էջմիածնեց եկեղ.	1.625	1	30 Տղանց		
8 Կուկիուհ. Աստուած.	1.460	1	31 Տղանց	1.200	1
9 Կաթող. ս. Գէորգ..	1.262	1	32 Օրիորդաց	3.398	2
10 Զրկենանց ս. Կար..	420	1	33 Տղանց		
11 Տափի թ. ս. Գէորգ.	3.568	2	34 Տղանց	1.500	1
12 Ա. Կարապետ. Հաւ-			35 Տղանց	458	1
բարի	548	1	36 Օրիորդաց	2.670	2
Ա. Խ-ցիս:			37 Տղանց		
13 Եղիսաբէթեան ..	11.100	2	38 Տղանց	360	1
հ			39 Տղանց	400	1
14 Կարապետեան.			40 Օրիորդաց	310	1
Ա. Խ-ցւալափ:			41 Տղանց	500	1
15 Սանդիստեան ..	3.243	2	42 Տղանց	350	1
հ					
16 Ա. Մեսրոպեան ..					
Գ. Շ. է:					
17 Օրիորդաց	2.367	1			
հ					
18 Տղանց.					
Ա. Խ-ցւալափ:					
19 Տղանց	500	1			
Ցիկնուլ:					
20 Օրիորդաց	500	1			
Ա. Խ-ցւալափ:					
21 Օրիորդաց	949	1			
հ					
22 Տղանց.					
Դ. Խ-ցւալափ:					
23 Տղանց	949	1			

ԱՐՅԱԽԻ ԹԵՄ

Ը ս - շ է:						
1 Օրիորդաց	2		8 Ս. Մեսրոպիպ. տղ. . .	250	1	Ներդիշած թաղվարութ:
Վարդապետին:			9 Ս. Գրիգորեան տղ. .	250	1	Սարդարական:
2 Տղակոց	350	1	10 Ս. Մարիամեան . . .	5.912	1	Ներդիշած թաղվարութ:
Թաղվարութ:			11 Տղակոց			
3 Տղակոց	315	1	12 Ս. Սահակեան տղ. .	694	1	Վարդապետին:
Հարդարական:			13 Ս. Մեսրոպիպեան . .	365	1	Ներդիշած թաղվարութ:
4 Ս. Թարգմանչաց . .	305	1	14 Տղակոց	371	1	Վարդապետին:
Գրանդիրութ:			15 Ս. Գէորգիան	380	1	Վարդապետին:
5 Ս. Գրիգորեան տղ. .	350	1				
Խանչեանին:						
6 Ս. Գէորգիան տղ. .	300	1				
Կիւնէյ ճարպար:						
7 Ս. Գրիգորեան տղ.	200	1				

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ

Ծամախի ժաղանք:						
1 Օրիորդաց	7.365	2	7 Օրիորդաց	3.709	1	Գործեածնի:
Վարդապետին:			8 Տղակոց			
2 Տղակոց			9 Տղակոց	8.947	1	Գործեածնի:
Բարձրականակ շամա-			10 Տղակոց	848	1	Սարդարական:
ինցուց օրիորդաց .			11 Տղակոց	500	1	Ներդիշած թաղվարութ:
6 Տղակոց						

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ

			Առաջարկութեան:				Առաջարկութեան:		
1	Օրիորդաց	5.872	2	11	Օրիորդաց	11	1,237	1
2	Տղակոց			12	Տղակոց			
3	Օրիորդաց	6.121	2	13	Օրիորդաց	—	—	1
4	Տղակոց			14	Տղակոց			
5	Օրիորդաց	2.719	1	15	Օրիորդաց. Դ.	2.020	1	
6	Տղակոց			16	Տղակոց			
7	Օրիորդաց	3.088	1	17	Տղակոց	650	1	
8	Տղակոց					Թէմբէ-իսհ-Շաբա:			
9	Օրիորդաց	1.920	1	18	Տղակոց	425	1	
10	Տղակոց						—		

ԳՅԻՒԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ

V

Անրանորոգւող հայ ընտանիքի ալժմեան դրութիւնը մի երկու կողմից թեթև կերպով նկարագրելուց չետու ևս վերջացրի իմ խօսքերը ասելով, որ ազդ ընտանիքը չունի հաստատ զենակէա, հողմահարում է ամեն կողմից, ընդունում է ամեն դոն և ննթարկւում է ամեն տեսակ հոսանքի: Ապա տեսանք նահապեսական ընտանիքը, խմացանք որ ալլուն կայ միաւողող, մի ամբողջութիւն կազմով դրութիւն, որ բացարձակապէս իշխում է ամենքի վերաց իբր մի հնադարեան օրէնք խր բոլոր խստութիւններով: Ես մինչև անդամ համարձակւեցա լաբոնելու, որ եթէ ունենանք բարի կամք, կարող ենք այդ նահապեսական աշխարհից դուրս բերել մեզ համար զեղեցիկ իդէալներ: Ինչպէս սպասում էի, իմ բարեկամներից և ընկերներից մի քանիսը լաբոնեցին ինձ իրանց անբաւականութիւնը, առարկելով թէ ադպակու ձևակնակից երիացներին, ես բացարձակ ուրանում եմ որ լուսաւորութիւնը անհամառնակ է, որ մենք չը պիտի կերպարանափոխենք, այլ պիտի շարունակինք վաղեմի անշարժութեան մէջ մեալ: Ինձ համար պարմանալի չէր իմ ասածի այդ տեսակ բացատրութիւնը, ևս ասել էի որ մենք ալժմեան ժամանակները խխտ շատ և մաճր դոներ ենք տալիս լուսաւորութեան գործին: Պոհում ենք մեր մայրենի լեզուն, մեր գաղափարները, մեր մարդկավիճ պարտաւորութիւնները: մենք անհաշիւ քանդել ու կերպարանափոխեն ենք պահանջում և մեր ականջին շատ վաս է թւում այն ձայնը, որ համարձակւում է լազեցնել թէ ամեն բան քանդելով մեզ համար նիւթ չի մնալ նոր շինութիւն կառուցանելու համար: Բայց ինչո՞ւ են թստիւում կոկորդիլոսի արցունքները... Ինչո՞ւ է լանդինութիւն համարում մեր ժամանակակից կեանքի աւած դառիրը նկարագրելը: Մենք ապրում ենք մի անողիութ ժամանակ, երբ սրահանջւում է խխտ քննադա-

առութիւն, երբ դիակը ոչ թէ ողբում են, որ նա փաել է զազրալի վէրքերից, այլ սառնասրտութեամբ անդամահատում, քննում ամեն կողմից: «Ամժմ ամեն ինչ քննադատութեան պիտի ենթարկվի, նոյն իսկ ինքը քննադատութիւնն է» ասում է Քէլնսկի: Գննադատութիւնը կը սլարգէ թէ կեանքից այս ու այն բարեփոխում պահանջողները իրանք ի՞նչ են տալիս կեանքին, թէ ինչ կայ, ինչ պիտի անենք և ինչ ենք անում: Ես առաջ կը տանեմ իմ նկատողութիւնները, որոնք գուցէ աւելի օգտակար կը լինեն, քան իմ բարեկամների տհաճութիւնը, երեմիական ողբերը:

Այս անգամ ես վստահանում եմ ձեռք վերցնել մի դէպք, որ երկար ժամանակ լուզել է Շուշու հասարակութիւնը: Անցքը արտասովոր անցք էր, որ այդ պատճառով բազմեց՝ լրադրութեան էջերում (տես Մշակ, Նորդար, „Խօսօ Օօօքքնի«, „Հասուն« և այլն): Ես խօսում եմ այն հայ օրիորդի մասին, որ մի թուրք փողոցակին աղայի ազդեցութեան ենթարկելով, գիշերը թողել է իւր հականական տունը և իւր անձը նւիրելով իւր տարիական կրքերին, ողջ ողջ մեռած անդամ է զառել իւր հասարակութեան համար, կորցրել է անոն ու չարգանք, անբախտացել: Աերին աստիճանի հետաքրքրական երևոյթ է: Մի ժամանակ, բունութեան խաւար զարերում, երբ հապատակը տիրողի սարուկն էր, հայ աղջիկը շատ և շատ անգամ էր մահմեղականի կրքին զոհ տալիս իւր անունը, իւր պատիւը, բոնութիւնը, չալանի է, իրաւունքի պատիւ չի ճանաչում: Բայց ժողովուրդը, որքան կարողանում են վկացել պատմական փաստերը, սարուկ լինելով հանդերձ անքան սիրում էր իւր իրաւունքը, պաշտպանում էր խարութիւն ճանաչելու կարողութիւնը, որ հաշուում էր օրիսրդի անպատճեան իրողութեան հետ երբ տեսնում էր որ ազգեղ խարութիւնը, ատելութիւնը այն աստիճան՝ զօրեղ է, որ բոնաբարսողը զոհ է զառնում, մի զոհ, որի ոչ միայն պատիւը, այլ և կեանքը բոնի ոչի տակ խորտակւում է: Այդ մի զրութիւն էր, որ հերոսական առաքինութիւն ցոյց տալուն էր նորատառում: Յւ զոհի համար պատրաստ էր կարեկցութեան մի ցոյց: պատրութեան մի սոզ, ժողովրդի բերանի աւանդութիւն, մի ժամանակաւոր ափստանք, վերջապէս մի բանի կաթիլ արտասունք: Այդ ցոյցերով որբում էր զոհը, արգարանում, սիրուն լիշտակի արժանանում: Խոկ աչժմ, երբ չը կայ ստրուկի պատկերը, երբ ամեն մէկը քաղաքացիական վակատար իրաւունք վայելով անհատ է, պատահում է վերովինալ դէպքը: Յակտնում է որ օրիորդը իւր կամքովն է զնացել թուրքի ետեից, իմանալով թէ ուր է զնում: Օրէնքը իւր զործը կը տեսնէ: օրէնքի առաջ թուրքը մեղաւոր է, քանի որ աղջիկը չափանաս կոչւելու համար որոշած տարիների թւին չի հասել, նոյն իսկ աղջկայ համաձայնութիւնը այդ դէպքում բաւական չէ, այդ տարիներում նորա անձնատուր լինելը բոնաբարունն է համարւում: Օրէնքը, ուրեմն, իւր սլատիթը կը հասցնէ: Բայց այդ, իհարկէ, բաւական չէ: Որքան խիստ լինի պատիժը, նա չի կարող հանգնել այն լուզմունքը,

որ առաջացրել է կրօնի, ազգացնութեան գաղափարը։ Հայ հասարակութիւնը վիրաւորւած է որովհետեւ մի մահմեղական կարողանում է մի քրիստոնեալ հալ աղջկան խելքից հանել, համարում է այդ դէպքը բարուական և կրօնական անկման մի նշան, իսկ մահմեղականը խորին բաւական արտակարգող ժպիտով զլուխ բարձրացրած ասում է, որ քրիստոնէութիւնը իւր բարուական հիմնարկութիւններով չի կարող դիմանալ մահմեղականութեան առաջ։ Ինչպէս տեսնում էք, ծանրակշխութեան հարցեր են լուզաւել։

Ազգան մեծ, վճռական նշանակութիւն տալ այդ դէպքին, ի հարկել չի կարելի։ Դա մի մասնաւոր երևովն է։ Անհատը մի համարնքի, մի հասարակութեան մի աննշան մասն է և հասարակութիւնը ամեն դէպքում համերաշխ է անհատի տուկական պատկերի հետ։ Ընմայ ու ծեծ յրուածանը ասում է ոռուսը և այդ բաւական է։ Խրազութիւնը այդ տեսակէտից լուսաբանելու և ալս կամ ան վճռին համար չէր որ ես ուշադրութիւն դարձրի այդ արտակարգ դէպքի վերաբ։ Ո՛չ, մեզ ամմնից շատ պիտի հետաքրքի ոչ թէ ամբոխի այդ կարծիքը, այլ իրողութեան պատմութիւնը։ Նա անշուշտ ունեցել է իւր նախապատրաստութիւնը, իւր հողն ու շրջանը, ուր հաստատել է, մի լաստինի կերպարանք ստացել, զարգացել ու կրիզիսին հասել։ Ճանաչելով այդ բոլորը, մենք կը գտնենք մեր հարազատսեփականութիւնները, կը տեսնենք մի հետևանք, որի պատճառները արրած են մեր մէջ և մենք չենք կարող այդ պատճառները մերը չը համարել

Արդ՝ ինչպէս է զլուխ եկել այդ կրիզիսը։

Կահապիտական ընտանիքի մասին խօսելիս ևս ցուց տւեցի թէ ինչ հասկացողութիւն է օջախը և ինչ է նա անում իւր պաշտօնը լաւ կատարելու համար։ Մենք տեսանք, որ իբրև մի հնադարեան հիմնարկութիւն, օջախը ջախճախում է անհատի կամքը, բռնութիւն է գործ դնում, փչացնում է մարդուն, դարձնելով նորան մի արարած, որ սեփական միտքը հայեացք հասկացողութիւն ունենալ չի կարող, այդ մարդու տաւաջ, որ լսուկապէս կին է, կատ միան մի հաստատած օրէնք և այդ օրէնքը նա պիտի ճանաչէ անարտոնջ, առանց որ և է բոլորի։ Այդ տեսակ ստրկական հարստանարութիւնը, որքան և բարի խորհուրդ ունենար, չէր կարող դիմանալ մեր դարի պահանջներին։ Եւ մենք տեսանք որ վերանորոգւող ընտանիքը հեռացրել է իրանից այդ շղթաները։ Այդ ընտանիքի անդամները աւելի ազատ են, չեն զոհում իրանց կամքն ու կարողութիւնը հին դարերի խաւար ժառանգութեանը։ Շատ լաւ, մի քալ դէպի առաջ։ Ընտանիքը, որի մէջ մեծացել է մեր լիշտ տիրահոչակ հերոսուհին, այդ քալն արած ընտանիքներից է։ Փողոցում թառ, զարմօն ածող պարապ թուրքը կարողանում է ազատ մտնել այդ տունը իւր արհեստը տան տղափին սովորացնելու համար։ Ուրեմն այդ ընտանիքում հասկացւում է նաև երաժշտութեան նշանակութիւնը, գեղեցկութիւնը։

Ազդ նախերգանքն է՝ Ազնուհետե, երբ թուրքը վերջացնում է իւր երաժշտական զաստիարակութիւնը, նորա և տան օրիորդի մէջ սկսում է բարեկամական լարպերութիւնը. նրանք միմիանց հետ ազատ խօսում են և ոչ ոք նրանց չի արգելում, գիտեն, որ օրիորդը կարող է բաց երեսով խօսել, ծանօթանաւ, դուրս գալ տանից և տուն գալ առանց պահապանի, առանց հսկողութեան: Զի որ միան լիմար հնութիւնն է, որ արգելում է ազդ բոլորը: Աչդ ազատութիւնը, զարուա աղջ լուսաւոր զազափարը հովանաւորում է մի կողմից կիսավայրենի, կրքոտ թուրքին, միւս կողմից վերանորոգող հայ ընտանիքի մի անդամին: Տարիների ընթացքում հաստատում է մի դրութիւն, որ սիրային անունով են մկրտում մեր, չափազանց զբանուն, հոգեբանական կնճիւներ լուծելու վերայ տանջւող մանրիկ վիպասանները: Լաւ լիշեցեք—տարիների ընթացքում... Մեծ փողոցի վերաց կանգնած տան պատուհանը լաճախ բաց է վիճում. պատուհանում մի զեղեցկադիմ օրիորդ է նուսած, փողոցում կանգնում է երաժիշտ թուրքը: Նրանք միմիտնց նայում են, միմիանց ոգեսրում: Խմացեք, ինզրիմ, ովքեր են դրանք:

Թուրք երաժիշտ, երգիչ... կամ արդեօք մի տերիչ բառ, որ գրանից աւելի լաւ բացատրէ մի անբարողական, ընկած մարդու պատկերը: Թուրքի քնարը լաւոնի է մեզ, նորա կամաւոր սիրահարներիս: Նա ամբողջապէս կիրք է, տանջանք, նա ամբողջապէս նւիրուած է կնոջ մարմնին, կնոջ մերկութեանը, միան մարմին, կիրք լարւցանող, վասոող զիրք, մերկութեան այս կամ այն լացնող տեսարան—ահա աղջ քնարի ամբողջ նշանակութիւնը, միտքը: Մի որոնէք աղջ սիրային զառանցանքների մէջ հոդու պատկեր, վսիմութիւն, որ զործ չունի մարդու անասնական կրքերի հետ, այլ պիտի սրտին, հոգուն վահելութիւն տայ: Թուրքը երբէք աղջ ահսակ մի լսեմ, բարձր նշանակութիւն չի տալ կնոջը: Նորա կրօնը կնոջը տաել է աղջ կրքերը լագեցնելու նշանակութիւն միան: «կնոջը անսնում ես, իսկոն պիտի գրիես, եթէ ոչ, ուրիշը կը գրիէ»: ահա մահմեղականի վերջնական հասկացողութիւնը: Աչդ ասում է նա հասարակ պրօվալի մէջ, աղջ մի և նոյնը երգում է նորա քնարը: Ահա թրքական մուսավի իսկական լեզուն: Աչդ մուսան տիրում է մեզ, բոլորիս: մեր ոգեսրութիւնը դա է, մեր ճաշակը գեղեցկի և սիրելու մասին աղջպէս ենք արտապահատում: Ամբողջ Վարագաղում չը կաչ հայ տուն, ուր ընդունւած չը լինի աղջ մուսան: մեր մանուկներն անգամ ամեն օր երգում են աղջ տեսակ բաներ և անտուելի քաղցրութիւն են պատճառում իրանց ծնողներին: Բարձրագուն ուսման տէր մարդիկ անգամ անտարեր մնալ չեն կարողանում և լարւած ուշաղրութեամբ են վարձատրում աղջ մուսավին: Աշխարհիս զօրեղները, այն մարդիկ, որոնք հասարակութեան օրինակ դառնաւ, մարդկանց զիկավարել են ուղում, պատրաստ են համբուրել այն բերանը, որ երգում է աղջպիտի մի ախտաւոր մուսավի բորբոսնամ ներչչանքը: Դուք, սական,

տեսնում էք որ զա բանաստեղծութիւն չէ, այլ Պարմակաստանի կիբող արեգակի տակ շնկւած զլխի մէջ, տակն ու վերաց դառած անձունի, հրանդու երեակացութեան պրոցասիք, որ բոլոր անասնական կրքերի հաւաքածուն լինելով վկացում է թէ ինչքան ցնցւած, զրգուած ջղերի տէր է այն ազգը, որ աշնպիսի բաներ է հանում իւր բերանից, թէ որքան վառ է անկիրթ, անճաշակ աղդի կատաղի կերպով լավող, ոչնչացնող ընութիւնը: Եւ մնաք, հաւերա ենք, որ հաւասար չափով վարակւած ենք աղդ անձունի ցնորքներով, մնաք ենք որ կրկնում ենք նոյնը, վարձատրում ենք աղդ քնարին ծառալողներին մեր ամբողջ կարողութեամբ, մեր գրապանի առատ ընծաներով: Ո՞վ է զա, որ աղդպէս պատիւ, համակրանք է վակնում: Նաւչնչէք, ահա նա կանգնած է պատուանի տակ և ոգեսրում է հայ աղջկան: Ապահով վնենք, որ նա ուրիշ լեզու, ուրիշ կարողութիւն չունի: բացի իւր քնարի լեզուից և չենք հասկանալ թէ ինչն է ոգեսրել, զլիխց հանել զարուս քաղաքակրթութեան զաւակին: Դա, մեր վերանորոգւող ընտանիքի փափկասուն զաւակը, մեծ փորձանքի է ենթարկած: Նա աղասութիւն ունի, նա անարգել չփուտ է աղդ հրատապ, այցող կրքերի հետ. և՝ ինչո՞վ պիտի պաշտպանեի: Ահա հարց, դժւարագոյնը մեր բաղմաթիւ հարցերի մէջ: Պարապ, անդոն կեանքի մէջ, որ մասնել էր նորան մի մտաւոր զաւարկութեան, ոչ որ նրան չի տեկ կարողութիւն հասկանալ իւր ոգեսրութեան պատճառը, չի եղել քննողական լուրջ ինքնաճանաչութիւն, որ հաշիւ տար նրան թէ ինչ է նա լուսում և ինչ ունի աղդ լսածի դէմ ասելու: Նա զրագէտ է, նա զուցէ կարտացել է այն սաստիկ բողոքները ծնողական բոնութեան դէմ, որ մեր լիսպական զաներն են արձակում ճնշւած սէրը ողբալու համար: Նա զանէ միանին, որ բոնութիւնը վաս բան է, բայց թէ ինչպէս պիտի պատրաստ, իւր ազատ սիրաը—աղդ նա չը զիտէ, աղդ զէպքում նա նոյնն է, ինչ որ էր առաջներում, երբ նորա վերաց կար բոնութիւն, որ պինգ ծածկում էր նարա երեսը, տան պաւախումն էր նուացնում: Անպատրասա հողը իւր ուղածին պէս հերկեց թուրք երաժշաւը, բոլորովին պատահական հոսանքը բունեց պարապ, անճպատակ մարդու սիրաը: Եւ երբ աղդ առնենից լնտոց իրողութիւնը կատարւած է, առենքը ապշում են, լուզում: Ազգպիսի մի պատրաստութիւն ունէր աղդ անցքը, որ թուրքին իւր համազգիների մէջ հերոս է շնել, իսկ հայ աղդ կան ներկալացրել է իւր հասարակութեան իրբն մի ծալրակեղ անկարել լիութիւն: Հարցըք ալս վերջինիս. ինչ հարց կարող էք տալ նրան, ինչպէս կարող էք նորա քաղը զատապարտել: Նա չի վարագուրում, չի ծածկում, այլ կաղնում է, ձեր ծակատին անողորմ պատասխան: «ինչ վալրին մարդիկ եք, ես ասում եմ, որ սիրահարւած են»: Սէրը հերոսութիւն է առլիս մարդուն, սէրը մի և նոյն ժամանակ կուր է, մի վճիռ պէտք է, վերջապէս, արձակել: Հերոսուհին կամ պիտի արդարանալ, համարւի զահ հոսարակութեան և ընկերախարական ախուր զրութեան (խօսելով Պօլսի ոի-

բարտրուք հեղինակների լեզուով), կամ թէ սերը պիտի ուրացչի, արտաքուի: Աչ մէկը չի կարելի անել. Մնում է, ուրեմն, ուրիշ կողմից նաև անցքի վերակ Ամբոխը զատապարտում է հերտառահուն և ոչ միայն խաւար, անհասկացող ամբոխը, այլ և այն զասակարգը, որ կարողութիւն անի հանգամանքները կշռելու, սրտի, մորի էտիթիւնը հասկանալու: Այդ ամբոխը զատապարտում էր և ծուրդենի: Ելենալին, երբ նա թողնելով հազարական տունը, իրան պաշտող երիտասարդներին, մի ինչ որ բուզար ուսանող Խնարոսի հետ զնում էր զէպի թշւառաթիւն, զէպի մի աշխարհ, ուր զրկանքն ու աղքատութիւնն էր նորան սպասում: Բայց միթէ ամբոխը այդ զէպի արդար էր... Որքան վսեմ, սուրբ, պաշտելի է այն դազափարը, որ հերոսութիւն է տալիս Ելենալին. Որքան անզրկելի լայն, փառ ռահեղ է այն աշխարհը, որ բացւում է մեր սուաջ, երբ մենք մի առ մի զգում ենք այդ օրիորդի սրտի զարկերը, երբ մեզ զիսչում է նորա շունչը, որ աբգալս ջաճախ ընդհատում է նորա սրբազան ովերութիւնից: Այդ սէրը մի ամբողջ կեանք է, զեղեցիկ, երանելի կեանք: Ամբոխը զատապարտել է նորան, բայց վերջը կը պաշտէ, երբ լաւ կը հասկանաւ թէ այն ինչ ողերութիւն էր, որ նորան հեռու աշխարհ էր տանում: Ելենան լափշաւակել էր, տեսնելով մի խեղճ, բայց վերին աստիճանի աղնիւ ուսանող, որ ողերուած է իր թշւառ հայրենիքի սպասութեան դազափարով, որ պատրաստում է վրեժ հանել այն բոնաւորներից, որոնք անպատել էին նորա հազրական տունը, չափշատել էին նորա հայրենի սեղնականութիւնը, իրանց վաւաշտ զիրին էին զցել նորա անպաշտպան մօրը, սպանել էին հօրը: Ազգիսի մարդուն է նորւում Ելենան, և զնում է նորա հետ բաժանելու բոլոր թշւառութիւնները, բալոր տանջանքները, որպէս զի նորա հետ վերջ ի վերջու տեսնէ մարդկալին արդար իրտունքի լազթութիւնը, սորուկ ժողովրդի ազատութիւնը: Դարեր կ'անցնեն, բայց քանի որ զուրութիւն կ'ունենազ մարդկալին սիրա, ալսպիսի անձնւիրութիւնը պաշտելի, խնկելի կը մնակ. Դրանից չետող նազեցէք հայ աղջկան, որ ամբոխի զատապարտութիւնից ազատ մնալու համար նոյն բառն է զործ ածում—սիրահարութիւն: Քննեցէք այն ամենը, ինչ ծնեցրել է այդ սէրը—և չըք ողբալ... Միաք, ընդարձակ, հոգի գրածացնող միաք չը կաչ աս զէպի ուում: Նա նորւում է մէկին լոկ այն պատճառով, որ այդ մէկը հասկացնում է նրան թէ նա զեղեցիկ աղջիկ է, փառարանում է նորա կազմւածքը, նորա այն կարողութիւնը, որ կիրք է չարուցանում, անքը նութիւն է պատճառում...

Ես գարձեալ պիտի կրկնեմ, որ այդ խելացի երեսքթը և նրանից ծազած հետեանքը ինձ չէ հետաքրքրում, ես հետաքրքրում եմ այլ երեսքի պատրաստութեամբ. հեռաւ պահելով թթաւ ողղասիրութիւնից, ես չեմ վրավուում այդ զէպից, այլ երկրին հանդարտ նուշելով գոնում եմ, որ մեր կեանքի կաղմածքը պատրաստում է աբգալսի զոհեր, որոնք ոչ

միտք ունին, ոչ էլ մի համակրանքի, մի ցաւակցութեան ևն արժանանում, Խնդիրը թուրքի անձնաւորութիւնը չէ, ևս համոզւած եմ, որ նորագերը կարող էր կատարել և մի փողոցավին ապականւած հայ տղաւ, որը սակայն հայ քահանաւին «Օրհնեա տէլ» է ողջունում. և այդ դէպքում էլ ինձ համար մի և նուն կերպով ցաւալի կը լինէր այդ երևոյթը, Փառք տւելք հայ աղջկայ ազատութեան—պատիւ ձեզ: Բայց տւեք նրան նաև հապացողութիւն, տւեք նրան վսեմ զաղափարներ, տւեք նրան ամուր զէնքեր, որոնցով նա իւր անձը, իւր գեղեցկութիւնը ծառապէցնէր մարդկացն կիանքի խղէալական գեղեցկութիւնը: Ես այս ասում եմ ոչ միայն այս գէպքը ի նկատի առնելով: Ո՞չ: Փահանակի երեսով է, որ հայ օրիորդները հասկանում են թէ ինչ է սէրը, ինչ լատկութիւն ունի նա, ինչ տեսակ կեանք է պատրաստում: Բայց այդ սէրը նրանք արաւալաբում են աճնպիսի երեխալական անմիտ ձեերով, աճնպէս շուա փոխում են մի սիրատանջ էակի կեղեր և առհասարակ աճնպէս են վարւում իրանց զզաց: Մունքի հետ, որ ակամայ խղճում ես թէ իրանց, այդ օրիորդներին, և թէ իրանց սէրը: Իրաւ որ ապացուցներ շատ կան և ես լոկ խօսքեր չեմ ասում... Ումին է մնում ժամանակի այդ պտուղը, սիրու զզացմունք հասկանալը ուղղել աճնպէս, ինչպէս հարկաւոր ենք համարում մեր երջանկութեան համար: Դպրոցից չը պահանջնենք, զպրոցը պատրաստութիւն տալ չի կարող: Ի՞նչ է մեր զպրոցը, նա միայն զբաղիտութիւն է սովորացնում, նորա օգնութեամբ մարդ կերպարանափոխել չէք կարող: Մնում է ընտանիքը...

Ասում են թէ այդ զրութիւնը անցողական է, թէ նա կը փոխի, թէ անընական երեսութները, որանք տիտուր եղրակացութեան են հասցնում անհրաժեշտ են, անխուսափելի անցողական դրաւթեան մէջ գոնւող ժողովրդի համար: Հատ լաւ, պարոններ, թով տւեք որ հետաքրքրողը նկարագրէ այդ զրութիւնը, թով տւեք լաւատեսութեան թմրութիւնից քիչ աղատ մնալ և հետաքրքրել թէ անցողական դրաւթեան մէջ դանւող ժողովրդը ինչ մի բան է տեսնում լւր առջե, որին առաջնորդ ընտրէ, որին հետեւ որն է այդ լուսաւոր աստղը, որ մեզ ապահովաթիւն է տալիս որ մենք վերջը փոթորկաչափ ալլիքներից զուրս կը զանք, կը դիմոնք դէպի յանկացած կէտ նպատակին: Այդ հարցը հետաքրքրական է և իրաւոնք է տալիս մեզ հարցնել, իմանալ թէ ինչ ենք անում, փրկութեան ինչ խարիսխ ենք շնում: Այսպիսի հարց կրկնելիս միշտ իմ առաջն է զալիս մի անմոռանալի տիտուր փշատակ, որ մեր մտաւոր մնանկութեան անջնջելի արձաններից մէկն է: Անա պատմեմ:

1883 թւի ձմեռը ես ընտրւած էի Կովկասի Բարեգործական ընկերութեան Շնչու, տեղական ճիշդի կողմից անդամ մի ցանձնաժողովի, որին չանձնւած էր մշակել, պարզել թէ ինչ տեսակ իղական արհեստագիտական դպրոց կարելի է ունենալ Շուշում, ինչ նպատակ և ինչ պակմաններ ալի-

որ ընալրէ, որքան ծախը է պահանջում և ինչ ծրագիր պիտի ունենավ: Ընկերութեան ընդհանուր ժողովը, որ ընտրում էր այդ լանձնաժողովի անդամներին բուռն ողերութեան մի տեսարան էր ներկալացնում: արհեստագիտական դպրոցը պիտի բանար ընկերութիւնը և ինչ գեղեցիկ գործ: աղմկալից վիճաբանութիւնները, երկար ու ձիգ ընդդիմախօսութիւնները, ամեն մէկի սաստիկ ցանկութիւնը հաղորդել իւր իմացածը, իւր միտքը, կարծիքը մարդ էին զարմացնում: միթէ, հարցնում էր մարդ իրանից, կան մեր մէջ ազդպիսի ուսումնարաններ և մենք գործնականապէս ծանօթ ենք նոցա տւած արդինքների հետ, երբ ալսքան ոգեորւում ենք, տաքանում: Ուրախալի երեսով էր ազդպիսի համակրութեան գուցէ տեղափին ոչ մի հասարակական գործ չէր արժանացել: Մենք էլ, չանձնաժողովի անդամներս, թւով 7 նողի, ոգեորւած տաք կերպով կպանք գործին: Մօտ տասն նիստ ունեցանք, ինդիբը շօշափեցինք բոլոր կողմերից: Անմոռանալի են այն ժամերը, երբ մենք հաւաքւում էին տաք սենեակում, նստում էինք մեծ սեղանի շուրջը և հերթական հարցը առաջ բերելով, ակսում էինք խօսել, վիճել, միմեանց կարծիք ջրել, համաձայնութեան չէզօք կէտերը որոնել, մէջ տեղ դնել: Մենք չէինք խմանում թէ ինչպէս են թռչում ժամերը, մենք կարծում էինք թէ գործին քիչ ենք նւիրում: Օ՛, երխասարդական ոգեորւութիւն... Կարելի է միթէ նկարագրել այն հրձւամքը, հոգեկան այն բուռն լուզմունքը, որ ամենքիս գերաւմ էր, երբ հետզհեաէ դուրս էր զալիս մի անյալսութիւնից և ձեակերպւում էր մեր աչքի առաջ մեր զպրոցի պատկերը իւր կալմածքով, իւր նսդապակով: Նպատակն էր—տարածել արհեստը քաղաքի հայ աղքատ զառակարգի մէջ, որով այդ դասակարգը իւր գոլութիւնը ապահովելու մի զօրեղ միջոց կունենալ, արհեստի հետ զուգընթաց պիտի գնար, ի հարկէ, և ուսումը: Մենք այդ նպատակին չարմար ծրագիր կաղմելու համար պիտի ծանօթանակինք մեր ժողովրդի կարիքների հետ, պիտի ուսումնասիրէինք մեր կեանքը, մեր ինչ լինելու հարցը: Լինում էին զեռ անփորձ երիտասարդներ, որոնք մեր կեանքի, մեր պահանջների մասին շատ թեթև, շատ հարևանցի հասկացողութիւն ունէին. մենք դրանց լսում էինք քաղցրութեամբ և խոկն ջլաւմ էինք այդ վարդագուն, քնքուչ հաղեացքները իրականութիւնից դուրս բերած մեր կոպիտ ու անսաշ փաստերով: Աւ որպէս զի միակողմանի չը մինէնք, որպէս զի անճշան հարցը մեծացնելով կարեւորը չը մուանանք, մենք հրաւիրում էինք կողմեակի մարդկանց: Դալիս էին տմկիններ և երիտասարդներ, մասնակցում էին մեր մէծերին, ցուց էին տալիս մեր սխալները և խրախուսում մեր աշխատաթիւնը: Մի խօսքով, երեք շարաթ շարունակ մենք ամեն ինչ մոռացել էինք, ամբողջապէս նկրւել էինք այդ գործին:

Ամեն ինչ վերջացաւ, պէտք էր հաստատ կերպարանք ստացած զպրոցի նիւթական ապահովութեան հարցը վճռել: Ընկերութիւնը շունէր

միջոց առանց կողմանակի օժանդակութիւնների դպրոցը պահպանելու։ Պէտք էր ընկերութեան արդիւնքները շատացնելու մասին մատածել։ Դուք դուցէ ծանօթ չեք ան զրութեան հեա, որի մէջն է լինում մի մարդ, որին զանձում են ոչնչից մի բան գուացնել։ Գաւառական այնպիսի շրջաններում, ուր չը կալ համերաշխութիւնը, մահացու հարւած է տալիս ամեն մի բարի մարդի, շատ և շատ նեղ է այդ զրութիւնը։ Գործիչը ամբողջ իւր էութեամբ համազւած է որ պէտք է մի գործ կատարել, պէտք է ծանապարհ բաց անել այդ հսանուր և անտարբեն ժողովրդի մէջ։ Նա ամեն օր լուսմ է իրաւացի լանդիմանութիւններ թէ ոչինչ չեն անում, թէրած մեռած են և ապն։ Եւ ահա երբ նա նստում է մի ինչ որ բան մտածելու, տուեղծելու, նորան կաշկանդում են հարիւր ու մի կապանքներ, տաճառմ են անթիւ տարակուսանքներ, ինչ էր լինի, ով էր առաջ վող, առանց որի ոչինչ շինել չի կարելի։ Մեր լանձնաժողովի անդամներն էլ հենց աղղողիսի զրութեան մէջ էին։ Մենք քրքրում էինք հարիւր ու մի կողմեր, նայում, որոնում էինք. մեր առաջը կոպէկներ էին գալիս... Այդ կոպէկները բաղմացնելու շատ միջոցներ գտանք, բայց զարձեալ 1000 րուբլու գումարից աւել բան չը ճարեցինք. Հազար րուբլի... Ի՞նչ կարելի էր անել այդ գումարով, Բայց մենք չը լուսահատեցանք, չը թողեցինք մեր միտքը։ Յուսիր որքան կացին. մենք մինչև անզամ լուս էինք դուռմ ան հանգամանքի վերաց, որ հարուստները կարող են մեռնել և մեզ գումարներ կոտակիլ... Ազգային մի գծար ժամանակ մեր ականջին լուր հասաւ, որ Մոսկվայում ազգրադ շուշեցի հարուստ եղբարներ, լրագիրներից իմանալով մեր զիսաւրութիւնը, լայսանել են ջամարութիւն տարիկան 300 րուբլի նարասաւ առաջ իրական արհեստագիտական զարոցին կարող էք երեակատել մեր ուրախութիւնը, մեր հրձաւանքը, մենք թուշելու թեեր էինք սաացնել, մենք մեզ երջանիկ էինք համարում անսնելով որ գործի սկզբում զանում ենք ազգային մի համակրութիւն։ Այնուհեաւ մնում էր մի 3 կամ 4 հարիւր րուբլու իննդիրը. եթէ ազդ գումարն էլ ունենանք, զործը վերջացրած է։ Մենք շատ ձգեցինք, շատ երկարացրինք մեր գտած միջոցները, ցաւելով տեսանք որ աւելացնելու բան չը կար կանգնած մնացինք. Ի՞նչ անենք. մեռայներից սասանալիք արդիւնք, եկնացիներու հաւաքած զանձանակ, ծնընդեան տօնին «Աւետիք» ման զալ... Այդ բոլոր միջոցները շատ անզամ էինք հաշւել, նորից ինչպէս հաշւենք. Եւրիկա, զատանք և այդ պակասի ճարշը Մեզանից մէկը լայտնեց, որ Ծնկերութիւնը Թիֆլիսում ունի կենդրոն, որ կոտավարում է բոլոր ճիւղերը, մեր ցաւն ու զարդը, մեր հասարակութեան զրութիւնը ամենից լուս ազդ կենդրոնը կարող է հասկանալ. դիմենք նրան, ինդրենք 300 րուբլի օժանդակութիւն. Նա միջոցներ շատ ունի, նա շատ հեշտութեամբ կարող է մեզ օգնել. Մեզանից ամեն մէկը ազատւեց հողեկան անձանքից. ամեն մէկը համուլից որ աշխարհիս երեսին ոչ մի հարց ալսալիսի գեղեցիկ և ապահով չի ստացել:

Ազնուհետև մենք կանչացինք ընկերութեան քարառւղարին և սկսեցինք
մի առ մի հասկացնել նրան թէ ինչպիսի թուղթ պիտի գրւի թիֆլիսի
խորհրդին որ մեր խնդրած օժանդակութիւնը չը մերժւի: «Դրեցէք դրու-
թեան մասին, ասում էինք մենք, զրեցնք մեր ընկերութեան աղքատու-
թեան մասին, զատնեցէք թէ ինչպիսի օգտակար հիմնարկութիւն է ար-
հեստագիտական զպրոցը, ինչքան նա կը բարձրացնէ ընկերութեան ա-
նունը, ինչպէս նա կը հարկադրէ մեր քաղաքացիներին վերջի վերջու
զէն դնել անտարբերութիւնը և օգնել իրան: Առ զրեցէք, աշխատեցէք
համոզիչ խօսքեր ու փաստեր շատ դնելու: Ամեն մեկը իւր իմացած հնարն
էր առաջարկում աղդ թղթին մին կախարդիչ կերպարանք տալու համար:
Քարտուղարը հեռացաւ և այնուհետև մեր գործը վերջացած էր: Մենք
ցրւեցանք: Մի մանկական զրւածքում զիւզացին տառւմ է, ևս իմ անե-
մքը վերջացրի, սերմը զրի խոնաւ երկրի ծոցում, այժմ քոռոզմութիւնն
է մնում, Տէր Աստուածու: Ալդպէս էինք ասում և մենք:

Թուղթը զնաց խորհրդին և այնուհետև մենք անհամբեր սպասում
էինք պատասխանին: թէ և համոզւած էինք որ պատասխանը բացառական
չէր վմել, բայց մեզ համար շատ հետաքրիքիլի էր խմանալ թէ անտեղ,
կենդրոնում ինչպէս են վերաբերում մեր գործին, ինչ անուն են տալիս
մեր զպրոցին և կանեն արդեօք մի փափոխութիւն մեր կազմած ծրագրի
մէջ: Թիֆլիսում աղդ բոլոր հարցերը պիտի վճռեր ընդհանուր ժողովունա
կալացաւ, ձեռք առաւ մեր խնդիրքը և ինչ էր կարծում... Մի այնպիսի
պատասխան աւեց, որ ամեն ինչ քանդեց, փչացրեց: «Շուշին հարուստ
քաղաք է, ասել էին ընդհանուր ժողովի չարգելի անդամները, մենք ինչու
պիտի օժանդակութիւն տանք. թող իրանք, աղդ հարուստները, պահեն ի-
րանց զպրոցը»: Բայց և ալդպէս, ժողովը աղդ հարցի վճիռը անձնեց
խորհրդին, որ կարող էր կարգադրել ինչպէս ուզում էր: Խորհրդին էլ
զեկավարւելով միենան հայեացքներով, մի կատր թղթով իմաց աւեց, որ
դպրոցը Շուշու ընկերութիւնը կարտող է իւր միջոցներով պահել... Դպրոցի
միաքը իրաւ, ծրագիրը, մեր անպիսի ողբորութեամբ կազմած ծրագիրը
իրեն մի անպէտք բան գործերի մէջ մտաւ...

Ահա մեր գործը: Եթէ ես ալսքան մանրամասն նկարագրեցի ազգ
հարցը, նպատակս էր ցոյց տալ թէ ինչ ենք անում մենք մեզ համար:
Այստեղ ազ ես չը կաչ անհամակացող, անտարբեր անթոխի հարցը. ինդիրը
վճռում էր այնպիսի շրջանների մէջ, որոնք ամենից լաւ պիտի հասկա-
նան բառը իւր իսկական նշանակութեամբ, աղքատեղ աւելորդ են խրառներ
համերաշխութեան, շահերի ընդհանրութեան, դործի օգտակարութեան մա-
սին: Բայց ինչ եղաւ: Հայը, չափնի է, համերաշխութիւն բառը շատ է,
սիրում, բայց գործադրել ասում է: Մի քաղաք 300 վերաս հեռու է միւս
քաղաքից: մէկը ոմնեու է, միւսը աղքատ, ոմնեու աղքատին չի օգնում,
պատճառ բերելով թէ նա իրանից հեռու է, չի օգնում այն ժամանակ,

երբ խնդրածը մի Յ հարիւր բուբլի է. Դա մի չնչին բան է ունեսդի համար, բայց չունեորի համար երկնալին օգնութիւն է, որը սպասում է անհամբերութեամբ. Ել թնչ զործ կարող է առաջանալ: Եւ թնչպիսի զարմանալի հեշտութեամբ վճռուում է կենսական հարցը. քեզ մօտ կան հարուստներ, ինչո՞ւ ևս մեզանից ուզումն կարծես թէ նոր պիտի հասկանանք թէ հարստութիւնը այլ բան է, հասարակական զործը այլ բան. եթէ հարստութիւնը միշտ ապահովութիւն տայ մեր հասարակական և ազգային հիմնարկութիւններին, այն ժամանակ էլ ինչո՞ւ պիտի զոռանքը թէ մեր զործերը փչանում են անօդնականութիւնից, անտարբերութիւնից. ինչո՞ւ պիտի զոռանքը, իմենդեր չենք հօ... Նոր պիտի բացարձի թէ ամենափարթամ հարստութեան մէջ կարող է բարտական, մտաւոր զործի, կատարեալ սովլինել... Հարուստը աղքատի համար լաւ չէ լոկ այն պատճառով որ լաւ ապրում է, իւզալի, զեղեցիկ կերակուրներ է սպասում. ոչ, հարուստը լաւ կը լինի այն ժամանակ, երբ կը հասկանալ որ աղքատն էլ ունի այս ու այն պակասութիւնը և ձեռք կը մեկնէ դէմի աղքատը... Արանք մաշւած, հարիւր ու հաղար անդամ քրքրւած մտքեր են, Բայց մեզ համար երբէք պարզ չեն, և մենք զեռ վարագուրուում ենք նոցա ետեց մեր անկարութիւնը, մեր ուժամապատ դատարկութիւնը ծածկելու համար:

Դուք զուում էք, պահանջում էք, բայց թնչ էք անում... Կաւ տեսէք.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԽՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՖՐԻԿԱՅԻ
ԲԱԺԱՆՈՒՄԸ

Եւրոպայի բարձր քաղաքականութիւնը, որպէս տարիներ առաջ, նոյնպէս և այժմ զբաղւած է այն դրութիւնով, որ ստեղծւած է եռապետեան գաշնակցութիւնով Գերմանիայի, Աւստրիա-Ռւնդարիայի և Խոալիայի մէջ։ Ցայտնի է, որ այդ հզօր գաշնակցութեան պատճառով՝ Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ տարիներ առաջ սկսւեցին բարեկամական յարաբերութիւններ, որպէս զի այդ երկու պետութիւնների բարեկամութիւնով կարելի լինի մի հակակշիռ ստեղծել Եւրոպայի կենտրօնական երեք պետութիւնների արտաքին քաղաքական միութեան։

Թէ ֆրանսիական և թէ ռուսական մամուլը, — այդ դէ զքում բոլորովին համաձայն իրանց կառավարութիւնների տրամադրութեան, — տարիներ շարունակ աշխատում են ֆրանսիական և ռուսական բարեկամութիւնը ամրացնել ամեն կերպ։ Ֆրանսիան իւր կողմից այս վերջին տարիներում մի ամբողջ գրականութիւն ստեղծեց Ռուսիայի վերաբերեալ, աշխատելով ֆրանսիացիների մէջ ժողովրդականացնել ռուսաց գրականութիւնը յանձին սորա լաւագոյն ներկայացուցիչների, որպիսիք են Դուստոնեւսկի, Տուրգենյեւ, Տոլսոց, Թարգմանելով սոցա լաւագոյն գրւածքները. նա տւեց մի մեծ շարք քննական յօդւածների և պատմական շարադրութիւնների թէ ռուսաց գրականութեան և թէ աղգութեան ու պատմութեան վերաբերեալ։ Մի խօսքով ռուսաց անունը Ֆրանսիացում, այս վերջին տարիներում, չափազանց ժողովրդականութիւն է սկսել վայելել, որ և արտայայտում է հասարակական և քաղաքական կեանքի ամեն մի

Երևոյթի մէջ։ Ֆրանսիան, այդ հանգամանքի շնորհիւ, Բալկանեան թերակղզու խնդիրներում, կանգնած է Առուսիայի կողմը, որպէս Առուսիան Ֆրանսիայի կողմն է այլ և այլ միջազգային խնդիրներում, ուր սա առանձին շահէր ունի, օրինակ հենց Եգիպտոսի խնդրում, որի մէջ Ֆրանսիան բացայաց հակառակութեան մէջ է Անգլիայի հետ։

Այս այսպէս Բայց Առուսիայի և Ֆրանսիայի մէջ չը կայ մի կապւած գրաւոր գաշնազրութիւն, ինչպիսին կայ Գերմանիայի, Աւտորիա-Ունգարիայի և Խոալիայի մէջ։ Եւ թէև մի զիսպլոմատ-պուբլիցիստ, պ. Տատիչեւ, նորերումն յայտնեց Առուսակի Վեստնիկ, ամսագրում, թէ Փրանս-ու-ուսական բարեկամութիւնը խօսքից գործի է փոխադրւել և երկու հզօր պետութիւնների մէջ գրաւոր գաշնակցութիւն է կապւել, բայց այդ բանին հաւատ ընծայել գժւար է։

Բայց կապւած է թէ ոչ, հանգամանքը ինքն ըստ ինքեան ծանրակշիռ է, որ Առուսիայի և Ֆրանսիայի մէջ եղած քաղաքական բարեկամութիւնը արդէն այնքան խոր արմատներ է զցած երկու ազգերի ոչ միայն կառավարչական, այլ և մամուլի և Հասարակութեան հեռու խաւերի մէջ, որ այդ իրողութիւնը արդէն իբրև ներկայ և մօտ ապագայի քաղաքականութեան կարեւոր գործիչներից մէկը պէտք է համարել, իւր նշանակութիւնով եթէ ոչ բոլորովին հաւասար, գոնէ մեծապէս չեզոքացնող եռապետեան դաշնակցութեան ոյժը։

Այսպիսով Եւրոպայի քաղաքական աշխարհը երկու բոլորովին որոշ կոմբինացիաների ազգեցութեան ներքոյ է, մի կողմից՝ Գերմանիան, Աւտորիա-Ունգարիան և Խոալիան, միւս կողմից՝ Առուսիան և Ֆրանսիան։

Բայց գորանով դեռ ամեն բան առաւած չէ։ Գոյութիւն ունի նաև մի երրորդ համակարգութիւն, անկախ այդ առաջիններից։ Բանը ահա ինչու մն է։ Խոալիան, որը մտնում է եռապետեան դաշնակցութեան մէջ, ամեն տեսակ պաշտպանութիւն գտնել չի կարող Գերմանիայից և մանաւանդ Աւստրիա-Ունգարիայից։ Եւ մինչև անգամ կարելի է ասել, որ Խոալիայի բարեկամութիւնը աւելի Գերմանիայի հետ է, քան Աւստրիայի, որի հետ նա այժմ թէև ոչ միայն հաշտ է այլ և բարեկամ, բայց որի հետ սրտակցութիւն չի կարող ունենալ, քանի որ Խոալիայում գոյութիւն ունի այն հայրե-

նասէրների միութիւնը, որը «Խտալիա Խրբիդենուա» անունով պահանջում է Աւատրիացից սրա դեռ ևս խտալական երկիրները (Հարաւային Տիրոլ, Տրիենս և Տրիեստ քաղաքները): Եւ չի կարող լինել Խտալազում մի մինիստր, որը իւր սրովի խորքում նոյն զգացմունքը չունենայ: Բայց Հարկը պահանջում է, որ խտալական կառավարութիւնը այդ զգացմունքը քաղաքական ձգութիւնների հիմք չը շնչի, թէ չէ նա կը զրկւի Գերմանիայի բարեկամութիւնից:

Այդ այսպէս լինելով, Խտալիայի Համար ժամանակի մեծ խնդիրն է ոչ թէ ձեռք բերելլը այն երկիրների, որոնց հետ նա ցեղական և պատմական կապերով կապւած է, երկիրների, որոնց Համար խնդիր յարուցանելը կարելի է նաև ապազառում: Խտալիայի Համար առեկարեւոր խնդիրը կազմում է Միջերկրական ծովի վերաց իշխող դիրք բռնելլը, քանի որ զորանից կախւած է Խտալիայի որպէս առաջնակարգ պետութեան թէ քաղաքական և թէ առ և արական ապազան: Արդ, հենց այդ բանի մէջն է, որ Խտալիան իւր մեծ հակառակորդն է տեսնում Ֆրանսիայի մէջ, որը, 1881 թւականին, վերցնելով Տունիաը, որի վերաց Խտալիան աչք ուներ, վերջինիս կօլոնիական քաղաքականութեան թշնամու հարւածը տւեց: Ից ժամանակւանից սկսում է յայտնի թշնամական դիրք բռնելլը Խտալիայի կողմից ֆրանսիայի դէմ, Ֆրանսիայի, որ կարողացաւ պահպաննել առենամեծ տառնասրութիւն Գերմանիայի բարեկամութեան վերաց յուսեր դրած Խտալիայի դէմ:

Բայց եթէ Գերմանիայի (և Աւատրիա-Աւնգարիայի) հետ դաշնակից լինելով կարելի էր առանց անմիջական վտանգի ֆրանսիայի դէմ անբարեկամական դիրք բռնել և նորան խօսքով վիրաւորել, բայց Խտալիան չէր կարող այդ դաշնակցութեան վերաց հիմնելով ֆրանսիայի դէմ դրական քաղաքականութիւն առաջ տանել մանաւանդ Միջերկրական ծովում և աւելի հետո երկիրներում, որովհետու Գերմանիան հեռաւոր երկիրների Համար, կօլոնիական քաղաքականութեան մէջ ննքը կարօտ է մի ծովային հզօր պետութեան եթէ ոչ պաշտպանութեան, գէթ նորա բարեկամութեան:

Ահա ինչու Ֆրանսիայից հեռացած Խտալիան մեծ զին պէտք է զնէր Անգլիայի բարեկամութեանը, որի շահերը շատ և շատ կէտերում շփուռմ են ֆրանսիական շահերի հետ՝ թէ Տունիսիայում,

ուր Անգլիան առանձնաշնորհումներ ունի, որոնք հաճելի չեն ֆրանսիացին, թէ Եղիպտոսում, ուստից Անգլիան իւր զօրքերը չի հեռացնում հակառակ ֆրանսիացի պահանջումներին, թէ Մադագասկար կղզում, ուր ֆրանսիական գերիշխանութեան դէմ Անգլիան անդադար ինստրիգներ է լարում և թէ ուրիշ տեղերում: Այդ պարագաների մէջ ունենալ իբր բարեկամ Խոտալիացի պէս մի պետութիւն, որը զօրեղ նաւասորմիղ ունի և կօլօնիական քաղաքականութեան մէջ ներգործող գեր է սկսում խաղալ՝ Անգլիացի համար շատ հաճելի պէտք է լիներ. և Խոտալիան մօտեցաւ Անգլիացին, որի հետ միասին աւելի մեծ յաջողութեամբ կարող է իւր հակա-ֆրանսիական քաղաքականութիւնը առաջ տանել, քան եթէ միայն Գերմանիացի հետ իւր բարեկամութիւնը պահպանէր:

Դորանից ծագեց և հաստատւեց խոտական-անգլիական բարեկամութիւնը, որ հիմնած է ոչ գրաւոր գաշնակցութեան, այլ շահերի միութեան վերաց: Այդ բարեկամութեան առաջին և առ այժմ միակ պատուղն է այն վատահութիւնը, որ ունեցաւ Խոտալիան Կարմիր ծովի աֆրիկական ափում օրինապէս ոչ ոքին չը պատկանող Մասսառա քաղաքը զէնքի ոյժով ձեռք բերելու և ացդ տեղից իւր ազգեցութիւնը Աբխանիացի կողմերը տարածելու համար:

Գրեթէ նոյնաժամանակ բայց գեռ դորանից էլ առաջ Գերմանիան, Բիսմարկի օրերով, սկսեց իւր կօլօնիական քաղաքականութիւնը, հիմնած իւր նորաստեղծ և արդէն բաւականի զօրեղ նաւասորմիղի վերաց: Իւր այդ քաղաքականութեան մէջ Գերմանիացի համար անհրաժեշտ էր Անգլիացի նման տիրապետող ծովալին պետութեան ոչ-հակառակութիւնը. որովհետև չը բռնած երկիրներ մինչ այս վերջին տարիներս միմիայն Աֆրիկայում կային, ուստի բնական է որ զերմանական կօլօնիական քաղաքականութիւնը լարեց գէպի Աֆրիկա, գլխաւորապէս այդ մեծ յամաքի արևելեան կողմէրը, ուր մեծատարած երկիրներ կան, մահմեդական և այլ, որոնք նշանակւած են երեսում եւրոպացցոց ձեռքն ընկնելու:

Մենք կը վերադառնանք ացդ աֆրիկական խնդրին, բայց աչքից բաց չը թողնենք Եւրոպացի պետութիւնների քաղաքական կոնստիլացիան, որը, ինչպէս բղիում է մեր ասածներից, հետեւեալն է՝

Մի խումբ՝ Գերմանիան, Աւստրիա-Անգլարիան և Խոտալիան,

որոնց գրաւոր դաշնակցութիւնը լարւած է մէկ կողմից Ֆրանսիայի, միւս կողմից Առևսիայի դէմ:

Երկրորդ՝ Խումբ՝ Առևսիան և Ֆրանսիան, որոնց ոչ-գրաւոր դաշնակցութիւնը՝ նշանակած է դիմադրելու այդ առաջին՝ խմբի, այս մինքն եռապետութեան ճնշման:

Երրորդ՝ Խումբ՝ Անգլիա, Խումբիա և Գերմանիա, որոնց բարեկամութիւնը պայմանաւորւած է զիսաւորապէս նոցա կօլօնիական շահերի հակառակութիւնով Փրանսիականի հետ:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Գերմանիան և Խումբիան մտնում են երկու առանձին դաշնակցութիւնների մէջ, որոնցից մէկում (ցամաքայինի համար) գերիշխողն է Գերմանիան, միւսում (ծովայինի համար) Անգլիան: Աւատրիա-Ռւնդարիան միայն մէկ դաշնակցութեան անդամ է, որով նա պաշտպանում է Առևսիայից: Ֆրանսիան մէկի (Առևսիայի) բարեկամութիւնն է վայելում, բայց ենթակայ է երկու բացայաց կամ ոչ բացայաց դաշնակցութիւնների՝ թէ ցամաքի համար և թէ ծովի համար: Առևսիան վայելում է Ֆրանսիայի բարեկամութիւնը, ենթակայ լինելով մի թշնամական դաշնակցութեան հակառակութեան, ցամաքի կողմից: Անգլիան աւելի մէծ կամ նւազ կերպով բարեկամութիւնն է ցոյց տալիս և ինքն էլ վայելում մի ոչ-գրաւոր կիսա-դաշնակցութեան կողմից (Խումբիայի և Գերմանիայի հետ), ենթակայ ըլ լինելով ոչ մի բացայաց դաշնակցութեան թշնամութեան, բայց և այնպէս կրելով կրդմնակի կերպով ֆրանս-ռուսական բարեկամութեան հետև անքները, որքանով որ սոքա կարող են անգլիական դործերի վերայ արտափայիլ:

Այն իննամբը, որ տանում է Գերմանիան Անգլիայի հետ աւելի սերտ կերպով կապւելու համար, բացատրուում է այն նշանակութիւնով, որ ունի Անգլիան եւրոպական և մանաւանդ Արևելեան խնդիրների մէջ և երկրորդ այն գերիշխանութիւնով, որ ունի Անգլիան հեռաւոր ծովերի վերայ, ուրեմն կօլօնիական քաղաքականութեան մէջ: Եւ միայն շատ բնական է, որ Անգլիան ամենից քիչ շահ ունի ինքը գրաւոր ամուր պայմաններով կապւելու որ և իցէ ուրիշ տէրութեան հետ, կոչւի վերջինս Խումբիա թէ Գերմանիա: Այդ իսկ պատճառով Անգլիայի բարեկամութիւնը Խումբիայի և Գերմանիայի հետ ամենից նւազ ամուրն է և կարող է տևողական լի-

նել միայն քանի որ Անգլիացում այժմեաց Սօլսբրեան մինիստրութիւնը կայուն է: Սորա փոխւելով կարող են նաև այդ բարեկամութեան հիմունքները փոխւել: Դորա հակառակ՝ եռապետեան դաշնակցութիւնը աւելի տեղական նշանակութիւն ունի, հետեւապէս նաև ֆրանս-ռուսականը:

Մենք տեսանք, որ քաղաքական դաշնակցութիւնների և բարեկամութիւնների հետեւանքները արտաքայտւել են եւրոպական պետութիւնների այժմեաց գաղթական քաղաքականութեան վերաց: Մինչև այս վերջին տասնեակ տարին եւրոպական մեծ պետութիւններից մի քանիսը չունեին հեռաւոր կօլօնիաներ: Խուսիան ձեռք է բերում հեռաւոր երկիրներ միայն Ասիացում, բայց միայն ընդարձակելով իւր պետութեան սահմանները: Միւս պետութիւնները այդ յարմարութիւնը չունեն և նոքա սահպւած են հետու ծովերում, նաւատորմիզներով երկիրներ ձեռք բերել: Մեծ պետութիւններից Անգլիան և Ֆրանսիան միայն ունեին ընդարձակ կօլօնիաներ աշխարհ: Քիս բոլոր մասերում՝ բայց այդ կողմից Անգլիայի հաւասարը չը կայ: Աւատրիա-Անգլիան այժմ՝ ել չունի ոչ մի կոոր հող իւր սահմաններից դուրս: Գերմանիան և Խոալիան միայն այս վերջին տասնեակ տարիներում ձեռք բերին կօլօնիաներ և այն, ինչպէս տեսանք՝ Աֆրիկացում: Խոալիայի կօլօնիական սկզբնաւորութիւնը զրւած է Կարմիր ծովի անբիեն ափում՝ Մասսաւայրում, որտեղից նա կամաց կամաց ընդարձակւում է գետի Աբեսինիայի կողմերը և այդ երկիրը աշխատում է զցել իւր բարձր իշխանութեան ներքոյ, որ և մասամբ արդէն յաջողացրել է: Գերմանիան իւր պլատուր ուշքը զարձել է Աֆրիկայի արևելեան ափի և այդ ափի յետել գտնւած երկիրների վերաց, որտեղ Գերմանական Արևելեան-Աֆրիկական ընկերութեան միջոցով ձեռք էր բերել ընդարձակ հողեր և կամ, նպաստաւոր պայմաններով տեղական իշխանների հետ, իւր գերիշխանութեան ներքոյ էր բերել թէ ծովափեաց գիծը՝ Զանգիբար կղզու գիմաց և թէ նորա յետելի երկիրներից մի քանիսը՝ նոյն այդ տեղերում և Աֆրիկայի խորքերում տոկունութեամբ գործում էր նաև Անգլիան, որի համար վազուց ճանապարհ էին հար-

թել անզլիացի երեւելի ճանապարհորդներ, որպէս Սպիկ, Լիւինգտոն, Ստենլէջ և ուրիշներ։ Այդ երկիրների առևտուրի զլիսաւոր առարկան մինչ այժմ կազմում էր փղոսկը, որը գլխաւորապէս այդ տեղի արաբների ձեռքումն էր և որոնք իրանց առևտուրի ոյժը և հիմքը դրել էին ստրկութեան վերաց։ Եւ որպէս Արևելեան Աֆրիկացի առևտուրի նոյնպէս և ստրկութեան համար զլիսաւոր շուկան (բազարը ծառացում էր Զանգիբար կղզու սուլթանութիւնը։ Եւրոպացիք, հաստատ ուք կոխելով այդ երկիրների վերաց, հանդիպեցին ստրկութեան, որը անհաշտելի է եւրոպական քաղաքակրթութեան հիմունքների հետ։ Յարուցեց Արևելեան Աֆրիկացում ստրկութիւնը և դրա հետ կապւած գերեվաճ առութիւնը վերացնելու խնդիրը, զլիսաւորապէս նախաձեռնութեամբ կարդինալ Լաւիժը իրի, որի ջանքերով կայացաւ անցեալ տարի Բելգիացիք բրիտանի քաղաքում մի կոնցրէս աֆրիկական հակառակ երեվաճ առաջ ական կօնդրեա՝ բոլոր այն պետութիւններիներին կողմացուցիչներից, որոնք Աֆրիկացում կոլոնիաներ ունեն։ Անզլիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Բելգիա, Հոլանդիա և այլն։ Այդ կօնդրէսը իւր պարապմունքները վերջացրեց անցեալ յունիս ամսին և որոշւեցին այն միջոցները, որոնցով պէտք է կռւել գերեվաճառութեան դէմ։ Զանդիրարի սուլթանը դեռ ևս անցեալ տարի վերացրեց իւր սուլթանութեան մէջ գերեվաճառութիւնը։ Կօնդրէսի վերջնական ակտը ստորագրել են արդէն բոլոր ներկայացուցիչները, բացի Հոլանդիացից, որը անշուշտ շուտով իւր համաձայնութիւնը կը տայ։

Աերջին տարիներում Աֆրիկան, և այստեղ խօսքը Աֆրիկացի խորքերի մասին է, դատել է այն ասպարէզը, ուր եւրոպական պետութիւնների կոլոնիական քաղաքականութիւնը այն դերն է կառարւած, ինչ կատարեց նա գարեր տաւած Ամերիկացում։ Աֆրիկան այժմ բաժանութեամբ է եւրոպական մի քանի մեծ և փոքր պետութիւնների մէջ։ Մինչ այս վերջին ժամանակները Աֆրիկացի ահագին ցամաքի միայն ափերն էին ճանաչւած և մասամբ բռնւած եւրոպացիներից՝ Հիւսիսը՝ (Միջերկրական ծովի հարաւային ափը), Արևմուտքը և Հարաւը։ Բացց խորքերը չեին ճանաչւած։ Ներկայ ժամանակների ամենանշանաւոր ճանապարհորդ Ստենլէջի խուզարկութիւններով Եւրոպան ճանաչւեց Կօնդօ մէծ աֆրիկական գետի և

նորա ողողած ընդարձակ երկիրների հետ. և ահա՛, այստեղ է ոք եւրոպական մրցումը սկսւեց: Արակս զի պետութիւններից մէկը կամ միւսը չը տիրապետէ այդ երկիրներին և խաղաղ մրցմանը արգելք չը լինի, Բիսմարկի նախաձեռնութեամբ կայացաւ մի տասնեակ տարի առաջ Բերլինի կօնդրէսը՝ Կօնդօ-կօնդրէս անունով, ուր վճռւեց Կօնդօյի երկիրներից կազմել մի առանձին պետութիւն և նորա թագաւոր ճանաչել Բելգիայի ներկայ թագաւորին, սահմաննելով առաջուց բոլոր պայմանները այդ երկրի կառավարութեան և միւս պետութիւնների հետ ունենալիք քաղաքական և առևտրական յարաբերութիւնների: Այդպիսով Աֆրիկայի մի ընդարձակ մասը դրւեց ապահով դրութեան մէջ: Խսկ Կօնդօյի պետութիւնը Աֆրիկայի հարաւային—արևմտեան տրօպիկական երկիրներիցն է: Նորա արևելեան սահմանները խորը մտնում են Աֆրիկայի մէջ:

Այժմ իննդիրը Արևելեան Աֆրիկան է՝ Կօնդօյի հակառակ կողմը: Եւ ահա այդտեղ է, որ սկսեց գործել գերմանական Արևելեան-Աֆրիկական ընկերութիւնը, մրցելով անզլիական ընկերութիւնների հետ: Մեծ են այդ գործում գերմանական կառավարութեան կոմիսար մայօր-փօն Վիսմանի և դր. Պետերսի ծառայութիւնները, որոնց արշաւ անքնների և ցեղապետների հետ կապած դաշնադրութիւնների շնորհիւ գերմանացիք այժմեայ բարձր դիրքը ձեռք բերին Արեւելեան-Աֆրիկայում:

Տարիների ընթացքում գերմանացոց և անգլիացոց ձեռք բերած երկիրները Արևելեան-Աֆրիկայում կազմեցին մի խաւնուրդ, և մէկի սահմանները այնքան յաճախ դիմում էին միւսի սահմաններին, որ մրցութիւնը իրար հետ տեղիք էր տալիս անլնդհատ անքաւականութիւնների այդ երկու ազգերի ներկայացուցիչների մէջ: Եւ որովհետև Գերմանիան, որպէս ասացինք սկզբում, աշխատաւմ է խոյս տալ որ և է թշնամական ընդհարումից Անգլիայի հետ, և Անգլիայի այժմեայ մինիստրութիւնը (Սօլսբրի)՝ Գերմանիայի հետ, ուստի այդ երկու կառավարութիւնները վճռեցին արևելեան Աֆրիկայում ստեղծել այդ երկու ազգերի գործունէութեան և տիրապետութեան համար նոր սահմաններ, մէկը միւսին զիջաննելով այն, ինչ մէկի կամ միւսի համար առանձին արժեք ունի:

Այսուեղ կարեւորը այն է, որ Եւրոպայում իրար հետ հաշտ մնա-

լու համար, որին քաղաքական ընդհանուր բարեկամութիւնը ամրացնելու համար, երկու պետութիւններ համաձայնուում են երկիրների տիրապետութեան մէջ իրար զիջողութիւն անել, մէկի հոգը միւսին տալ, նոր սահմաններ որոշել։ Դա մի նոր ապացոց է, թէ որքան մ.ծ է Գերմանիայի կողմից ցանկութիւնը Անգլիայի հետ բարեկամութիւն պահպանել, այդ բարեկամութիւնից եւ բազական քաղաքականութեան ինսդիրներում աւելի ապահով կերպով օգուելու համար, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք ներքեւ, Գերմանիան, հոգերի տարածութեան կողմից, այդ համաձայնութեան մէջ բառական մ.ծ կորուստ է կրել։

Երկրորդ կարևոր կէտը այդ համաձայնութեան մէջ այն է, որ Անգլիան, իր վարձարութիւն գերմանական զիջումների Աֆրիկայում, զիջել է Գերմանիային մի փոքրիկ կատր հող Եւրոպայում, այն է Գերմանիայի հիւսիսային սահմանին շատ մօտ գործած Հելգոլանդ կղզին Գերմանական ծովում, որի բնակիչները գերմանական ծագում և լեզուն ունեն այնպէս որ կղզին՝ Անգլիացոց ձևոքում՝ Գերմանիայի համար աչքի փուշ էր։

Երրորդ, Անգլօ-Գերմանական համաձայնութիւնը կարևոր է նաև որպէս սկզբունք։ Թէւ պասմութեան մէջ դա մի նորութիւն չէ, բայց անբաւականութիւնների առաջն առնելու այդ ձևը ստում է այժմ նոր գործադրութիւն և նոր սցե¹⁾)։ Նոյնանման տարածայ-

¹⁾ Գերմանիան, որ հասպիւ տասը տարի ունել է զաղթական քաղաքականութիւնը, ակմմ արդին բառականին երկիրներ և իրաւունքներ է ձեռք բերել. Այդ երկիրներն են՝ Կամերուն, Տօգո և Զարաւ. Արևմտական Աֆրիկան, որոնք կատարված են գերմանական կախկարութիւնից ուղղակի, ալտինքն սորա հաշով և սորա նշանակած պաշտօնեաներով, չետով Նոր-Գերմէա, որը նմանապէս կառավարված է կախերուկան պաշտօնեաներով և ծախսերով, բայց այդ ծախսերը պէտք է վերապարձնեն կախերական պաշտամութեան ներքու գտնած նոր-Գերմէիան առեարական ընկերութիւնը, վերջապէս գերմանական Արեելան-Աֆրիկան, ուր իշխանութիւնը բանեցնում էր մի ընկերութիւն (գերմանական-արեելա-աֆրիկան ընկերութիւն) իւր պաշտօնեաներով. Այդ ընկերութիւնն էր, որը ինքնուղարկուս սկսեց իւր գործունեութիւնը, անկախ գերմանական կառավարութիւնից. բայց երբ 1881 թ. ապրուամբութիւն ծագեց այդ ընկերութեան դէմ, գերջինս կարօտութիւն զգաց 6—10 միլիոն մարկ (2—3^{1/3} միլիոն

նութիւններ կօլօնիական խնդիրներ ում կան այժմ նաև ֆրանսիացի և Անգլիացի մէջ և հաւանական է, որ դոքա ևս կը յարթւեն նման ճանապարհով:

Չորրորդ, վերջապէս, նկատենք, որ անգլօղերմանական համաձայնութեան մէջ սկզբունքի զօրութիւն է ստանում այն, որ ում պատկանում է ծովի եղերքի զիծը, այդ գծի ցեսել զանուած երկիրն ևս (գերմաներէն խօսքով Հինուերլանդ-Hinterland, և այս խօսքը նաև ուրիշ ազգեր էլ սկսում են դործածել), թէև նու չը բռնած էլ լինի, նոյն պետութեան պատկանելիք է համարւոմ Այսպէս, Զանգիբրար կղզու զիմաց աֆրիկական ցամաքի ծովեղերքը գերմանական է ճանաչւած, և այդ պատճառով էլ նորա ցեսելի երկիրը (Հինուերլանդը) նոյնպէս թողած է Գերմանիացին:

Անգլօղերմանական համաձայնութեան հիման վերաց Գերմանիան պարաւորւում է չը հակառակւել որ Անգլիան հովանաւորութեան տակն առնէ, Զանգիբար կղզու սուլթանութիւնը՝ և սորանից կախումն ունեցող երկար ծովեղբեաց զիծը դէպի հիւսիս Վիստը՝ հետ անգլիացիք երկարամեաց յարաբերութիւններ չեն ունեցած. այժմ նա կարեն նշանակութիւն է սուացել շնորհիւ այն մեծ երկրի՝ ծովեղբից սկսած մինչ Ալիկորիա Նիանցա մեծ լիճը, որ ձեռք է բերած Անգլիական Արևելեան-Աֆրիկական Ընկերութիւնը: Մինչեւ որ Վիստը՝ սուլթանութիւնը գերմանացոց ձեռքին էր, սոքա միշտ կարող էին արշաւանքներ անել անգլիական հողերի հիւսիսացին կողմերը, որով բրիտանական ազգեցութիւնը հեղոսի աղբիւրներից (Ալիկորիա Նիանցա լճից) մինչև ծովեղբիս երկիրը՝ Արխինիայի լիոների սոսրաուր՝ միշտ գուրս կը մնար: Այժմ շնորհիւ գերմանացոց հետ կացացրած համաձայնութիւնը՝ վարելու և վետաչ տեղական զօրք և սափեկանութիւն պահելու հստաբը: Ընկերութիւնը զիմեց գերմանական կառավարութեան, որ սա երաշխաւոր է այդ վտասարինութիւնն տումակները: Բայց կազերսութիւնը գերադասեց ինքը միջամտելու և ապարկեց այնուող կալանական կոմիսար Վիստանին, որը և խաղաղացրեց երկիրը և նորելու վերադառնութիւնն: Այժմ դեռ ևս խնդիր է, թէ ով է իշխան տէրը Արևելեան գերմանական Աֆրիկայի այդ Գերմանական Արևելեան Աֆրիկական ընկերութիւնը, թէ Գերմանական կապերութիւնը:

բարբարինութեան՝ պատերազմից վարելու և վետաչ տեղական զօրք և սափեկանութիւն պահելու հստաբը: Ընկերութիւնը զիմեց գերմանական կառավարութեան, որ սա երաշխաւոր է այդ վտասարինութիւնն տումակները: Բայց կազերսութիւնը գերադասեց ինքը միջամտելու և ապարկեց այնուող կալանական կոմիսար Վիստանին, որը և խաղաղացրեց երկիրը և նորելու վերադառնութիւնն: Այժմ դեռ ևս խնդիր է, թէ ով է իշխան տէրը Արևելեան գերմանական Աֆրիկայի այդ Գերմանական Արևելեան Աֆրիկական ընկերութիւնը, թէ Գերմանական կապերութիւնը:

թեան, չեսացրած է այսուղ որ և է մրցումն ուրիշի կողմից. և, բայցի խառլական գերիշխանութիւնից Արիստինիալի և սորանից կախւած երկիրների վերայ՝ Անդլիացիք այլ ևս ոչ ոքի մրցումից վախինալու բան չունին մինչև Եգիպտասոնի հարաւային սահմանները: Ե հարկե, անդլիացիք, լիավէս օգտուելու համար այդ բոլորից, պէտք է իրանց ձեռքքը զցեն նկղոսի ամբողջ հազիւութ, որը սակացն այժմ մահիսանների իշխանութեան ներքոց է, որոնք այժմ կատապի թրշնամիներն են անդլիացիններն. բայց զոն, այժմ անդլիացինները զործ կ'ունենան մի ասխական-առիրիկական ցեղի հետ և ոչ թէ, մի եւրոպական առաջնակարդ ովետութեան հետ, որպիսին է Վերմանիան:

Խնչ վերաբերում է Զանգիբար կղզու սուլթանութեան, մենք արգելն նկասեցինք, որ այսուղ է, կինզըրնացած Արևելիան-Աֆրիկալի մեծ առեառութը, քանի որ նորա զիմացի ամբրիկական ձափեղը, որ այժմ՝ զերմանացիններին է պատկանում, չունի նաւահանգստի յարմար տեղերը Ներկայ անգլո-գերմանական համաձայնութեան ամենակարևոր կետը հենց այն է, ինչ վերաբերում է Զանգիբարին. զորանով Անդլիացիք տէր կը լինեն Արևելիան Աֆրիկալի առեառութական շուկացին և շուտով կը հետացնեն այդ կղզուց գերմանացիններին, որոնք մինչ այժմ կարեսը իրաւունքներ էին ձեռք բերել այսուղ: (Ի միջի այլոց զերման. Արևել. աֆրիկական ընկերութիւնը ձեռք էր բերել Զանգիբարի նախկին սուլթանից երկրի մաքսացին եկամուտները):

Նկատենք սակացն, որ 1862 թւականին Ֆրանսիալի և Անդլիալի մէջ կայացած մի համաձայնութեան զօրութեամբ՝ այդ երկու մէրութիւնները պարտաւորւել են իրար՝ իրանց իշխանութեան ներքոց չ'առնել Զանգիբարը, այդ պատճառով այժմ՝ Ֆրանսիան ժխտում է Անդլիալի իրաւունքը առանց Ֆրանսիալի համաձայնութեան Զանգիբարի վերայ գերիշխանութեան իրաւունքներ հաստատել: Եւր համաձայնութիւնը ստանալու համար Ֆրանսիան այժմ մի քանի պահանջներ է անում՝ Անդլիացից, որոնց մասին մենք կը խօսենք մի այլ առեմով, երբ այդ պահանջների մասին այժմեան բանակցութիւնները վերջացրած կը լինեն: (Երեսում է, որ զորա փոխարէն Ֆրանսիան պահանջում է, որ Անդլիան հրաժարակի այն առանձնաշնորհումներից, որ ուս ունի այժմ Փրանսիական դառնած

Տոնիսիացում, որով նուե Խտալիսն սախողւած կը լինի իւր առանձ նաշնորհու մներից Հրաժարւելու, և ընդունել, իր Փրանսիական, Ալժիրիացի հարաւում գտնուած երկիրը (Հինուերլանդ!):

Այդ բոլոր կամաւոր կորուանների փոխարէն Գերմանիան սահնուամ է զերմանական արևելեան Աֆրիկացի Հինուերլանդը (յետել երկիրը), որը տարածւում է Տանզանիակա լճի հիւսիսային մասի վերացով մինչև Կոնգօի տէրութեան սահմանը, և Խերոպայուս Նելզուանդ կզգին, որի ամբողջ տարածութիւնն է Հաղիւ կէս քառակուսի վերաս, առանց յարմարութիւնների նաւահանդասի համար Այդ կղզին ոչ մի պատերազմական նշանակութիւն չուներ Անգլիացի համար և զբականապես ոչինչ : ի կորցնում Անգլիան, տալով նորան Գերմանիացին: Խոկ լորդ Սօլսբրիի ասելով, այդ կղզին, մի պատերազմի դէպքում Գերմանիացի հետ, բաւական չէ որ անօպուտ կը լիներ Անգլիացին, նա այնքան հեշտութեամբ կարող է զբաւել զերմանական նաւատորմիզից, որ պատճառ կը լիներ անգլիացիների անօպատւելուն: Այդ կղզին Անգլիան վերցրեց Դանիմարքից 1807 թ., երբ սա բանեց Նապոլէոնի կողմէ. նոյն այդ պատճառով Դանիմարքից խլեց Խօրւեղիան և միացրեց Եվրոպացի հետ, քանի որ Եւեղիան Անգլիացի կողմնէր՝ Նապոլէոնի դէմ: Այդ ժամանակ Նապոլէոնը, Անգլիացին ստիպելու համար իրան հնազանդւել, արգելեց Խերոպային որ և է յարաբերութիւն ունենալ Անգլիացի հետ, այնու պէս որ Անգլիացի առուտուրը պահպանուած էր կօնտրաբանդով միայն: Եւ ահա հենց դորա համար շահ կար Անգլիացի համար Նելզուանդը իւր ձեռքը դցել, քանի որ նա շատ մօտ է յամաքին:

Դորանից դուրս այդ կղզուց երբէք մի շահ չի ունեցել Անգլիան, որի առուտաւորը այդ կղզու հետ տարեկան 500 բուրլուց աւելի չէ:

Ասացինք, որ Գերմանիացի ձեռքին մնում է Զանդիրարի գիմացի աֆրիկական ծովեզրը նորան կպած երկրով, որը երկար տարածւում է Տանզանիակա լճի հիւսիսային մասի վերացով մինչ Կոնգօի պետութեան սահմանը: Այդ լճի հարաւաին երկիրը մնում է Անգլիացոց ձեռքում: Սօլսբրին կարծում է, որ հազիւ թէ զորանով յաջողւի զերմանացիներին առեւարական ճանապարհ ստեղծել ծովիզրից մինչ Կոնգօի պետութեանը, որովհետեւ առեւարական ճանապարհ ստեղծել ծովիզ-

որ և իցէ գետի ընթացքով զարդանալ, իսկ զերմանացոց հողերի ուղղութիւնով՝ արեկլբից արեմուաք ապագիսի դիմ չը կայ:

Ահա այս է, ինչ կոչւում է անզլօ-զերմանական համաձայնութիւնը, որը այս վերջին երկու ամիսները այսքան զբաղեցնում է եւրոպական, մանաւանդ անզլիական և զերմանական մամուլին նկատենք, որ զերմանական Ասյօր Վիլհելմ Ա այս համաձայնութիւնը կայացրել է շատ շուտափոյթ կերպով և շատ զաղանի կերպով, այնպէս որ գործին անանցեակ են մնացել, նոյն իսկ խնդրին ամենամօտիկ մարդիկ, և առանց խորհրդի սոցա կողմից: Գերմանական մամուլի մեծամասնութիւնը ընդունեց այդ լուրը վշատցած, որ Անդմիացի բարեկամութեան համար զերմանական կայսրը այնքան բան զոհեց Աֆրիկայում, քանի որ Նելգոլանդը ոչ մի կերպ չի կարող վարձառութիւն համարել այնքան կարուսաների փոխարեն:

Անզլիացիք և նոյն իսկ ներկայ մինիստրութեան հակառակորդները ստիպւած են խստառջանելու, որ լորդ օֆ Սոլսբերին խր այս առեւտուրին մէջ Գերմանիացի հետ լաւ գործ է տարել: Նոքա գոհ են նկատենք, որ Վիլհելմ Ա-ը սորանով առաջին մեծ զիսլօմատիական զործն է որ կառարեց նիսմարկի հրաժարականից յետոյ...

Z.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՅԱԺԱՆՈՒԹԻՆԵՐԻՆ ։ «ԱՄՈՒՋ»-ի համարները մինչ ակժմ մի քանի տեղեր ողարկւում եին հասնելիքներով (պօսիլկա) այն է՝ Բաքու, Երևան, Ազգային, Հայոցարքան, իսկ անցեալ տարի նաև Դաւիթ և Ավերանողբատօլ Գոմնդասներ լսուծ լինելով բաժանորդներից ։ ԱՄՈՒՋ»-ի համարները այդ եղանակավ աեղ հայցներու մօսին, թէ սոքա բաւանաշափ կանոնաւոր կերպով նոցա ձեռքը չն համարմ, մենք վճռեցինք այսուհետ ավ ևս նաև վիշտած տեղերը սմեն մի բաժանորդին առանձին-առանձին ողարկիկ ։ ԱՄՈՒՋ»-ի համարները։

ԱՐԻՊՈՅԻ, Անցեալ Ան 6-ում, պ. Արշալուս Մխիթարեանի «Անապատ» տառնաւորի մէջ, երես 860, վերջին տունը պիտք է կարպալ։

Լուս է այնակազ, ակժմ անտարատ,
Չկան ծաղիկ ու արտեր,
Անզդ ու արծիւ միայն ազստ
Գիշատամ ևն զիտկներ։

ԹՈՒՐՃԱ-Ի ԿՐԵԱԿՐԱՍԱՆ ՄԵԶ ՎԱՀԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵԼԵԱԼ ԳՐԲԵՐԸ.

թ. կ.

«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12	—
ԱՐԱՄԽԱՆԵԱՆՅ ԱԻ. — «Ազգարնակութիւնը և ազգա-		
րբնակչական շարժումները»		40
ՆՈՅՆ ՀԵԳԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասար-		
կութիւնը»		40
ՅՈՒ բժիշկ. — «Ֆիզիքական և մասու որ զարդարման		
մասին»		30
ԱՐՃԱՀԱՆՊԵԼ. — „Վակավազական խթեալ տօր-		
գույն“		75
— „Վակավազակ աշկումայն շա-		
զավում“		80
ՊԻՌՈՅԵԱՆՅ ՊԵՐՃ. — „Հեծեր» - (վէպ)	1	—
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղ.ՂԱՄՐԴԻ)՝ Ման-		
կառածութիւն		50
ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «Խեի-ԿԱՐԱՊԵՏ» - վէպ հայ-կաթոլիկոս-		
րի կեանքից	1	—
Լ.Յ.0. — «ԿՈՐԱԾՆԵՐ» - (վէպ)		50
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ, բժշկ. (Ղ.ՂԱՄՐԴԻ)՝ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ		
ՄԱՐՍՈՂ.ՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ. ՄԻՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ» — 5		
ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ԱՊՈ.ՈՒՐՈՆ. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ		
ԱԵՒ ՕՐԻ: (Կեանքից պատկեր)		40
Ճանապարհածախար խմբագրութեան վերացէ: Գրամփ տեղ կա-		
րելի և ուղարկել պօստի մարկաներ:		

TECHNIKUM MITTWEIDE
ՏԵԽՆԻԿՈՒՄ ՍԻՏՎԱՅԴՐԵ
Սաքուայում

ԳԻՐԵԿՈՐԾ ԻՆԺԵՆԵՐ Կ. ՎԵՑՑԵԼ

ՄԵՔԵՆԱԿԵՐԻ-ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՑ.-ԱՐՀԵՍՏԱՆԱՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑ

23-ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանում է Միտվալդի, քաղաքում, Գերմանիայում (թագավորութիւն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթութիւն ՄԵՔԵՆԱԿԵՐԻ շինելու և զորա առնենամատ առարկաների հետ ծանօթացնելու համար. որպիսիք են՝ ելեկտրո-աերմենիկ և ջրազացների շինութիւն:

Միտեմական տառամագ աղջ հիմնարկութիւնը պատրաստում է տեսալ մասնագիտութիւնների համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեկտրո-տեխնիկի և ջրազացներ շինելու համար:

2. Ապագայ մեքենաների գործարանների տէրերին, որոնք իր պատրադրեալների չափ պէտք են հասկացողաթիւն ունենան, աղջ զարդ բառիս է պատշաճաւոր կրթութիւն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարաններ անհնալու համար, ուր հարկաւուում է մեքենաների սարք ու կարգ, որպէս թղթի, փականիթերի գործարաններ. շոգի և ջրի աղացներ, մանելու, գործելու, ապակու, կրախմալի, շաքարի, ասեղների, պաղպատէզրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարաններ, զաղի, լուցկի գործարաններ և այլն և այն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար լիւած գործարանների համար:

Արհեստանոցների վարականների դպրոցը պատրաստում է վար-

պետներ՝ աղջ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելութիւնը լինում է ամեն տարւակ ապրիլի և հոկտեմբերի միջին:

ՏԵԽՆԱՌՈՒԹԻՒՆԸ ուսման առաջին դպրոցում, նախած աշակերտի նախապատրաստութիւններին, լինում է $2^{1/2}$ կամ 3 տարի, երկրորդ դրուցում՝ $1^{1/2}$ տարի:

ՏԱՐԻՒԹԻԸ ընդունւողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սուն 18⁹⁰/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, ուրնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միաս մանրամասնութիւնների համար կարելի է զիմել՝ «ՄՈՒԲՃ» ԱՄՍԱԿԴՐԻ ԽՄԲԱԿԴՐԱՏՈՒՆՅԻ, ուր ի միջի ավոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախսերի և Միտվալդի կեանքի, և զըպ բոցի վարչութեան պահանջմունքների մասին:

7
8
9
P
a
b
c
d
e
f
g
h
i
j
k
l
m
n
o
p
q
r
s
t
u
v
w
x
y
z

ՄՈՒՐՃ

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է:

Տարեկան բաժանորդագինը	10 ր.
Կէս տարւամինը	6 ր.
Երեք տամամինը	4 ր.
Մի դրամովկը	1 ր. 50 կ.

Ենդունուում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամետրում ամբողջը վճարելու պայմանով:

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վայելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

«ՄՈՒՐՃ»-ի ծառալը ապրեցարի մ. ծացնելլը միանգամացն կախւած է բաժանորդագրութեան յաջողութիւնից: Ծառալիցն է կախւած նիւթերի հարատութիւնը: Այդ սպատճառով մենք յորդորում ենք մեր ներկայ բաժանորդներին՝ իրանց կողմից հարկաւոր ջանքը չը խնայել «ՄՈՒՐՃ»-ը իրունց ծանօթ շրջաններում տարածելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԺԱՐՈՒՄ ԵՆ

Ամսական մի երեսի համար.	10 ր.
, կէս երեսի համար	6 ր.
, քառորդ երեսի համար	4 ր.

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարւած զրքերով՝ սոյս գների համաձայն:

Խմբագրութեան հայուն՝ Տիֆլիս. Въ Редакцію журнала „ՄՈՒՐՃ“. Խմբագրութիւնը գտանելում է՝ Գանօվեան փողոց, նախօվին տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ бывш. Иоаннисиани), բոլորովին մօս Երևանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTCH».